947.925
U-28

ԱԶԳԱՑԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏ.

ՀՈԼԼԱՆԴԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ԺԱ.–ԺԹ. ԴԱՐԵՐՈՒՄ

(6 ՊԱՏԿԵՐՈՎ)

ԳՐԵՑ

ԱՌԱՔԵԼ ՍԱՐՈՒԽԱՆ

ՎԻԵՆՆԱ

ՄԽԻԹԱՐԻՆԱՆ ՏՊԱՐԱՆ

1926

3(47·925)
Ս-28

02 DEC 2011

ՀՈԼԼԱՆԴԱՆ ԵՒ ՀԱՑԵՐԸ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԵՑ

ԱՌԱՔԵԼ ՍԱՐՈՒԽԱՆ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1926

12 9 JUL 2013

Гос. Библиотека
ЗИЛ-лая ССР
им. А. М.
Ч/3117-8

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայկական այն առեւտրական գաղութների շարքում, որոնք Միջին Դարերից սկսած զանազան ժամանակ հաստատուել են եւրոպական այլեւայլ կենտրոններում, կարեւոր տեղ է գրաւում Ամստէրդամի, Հոլլանդայի այս նշանաւոր քաղաքի հայ գաղութը: Այստեղ է, որ հայ տպագրութիւնն եթէ ոչ իր ծագումը, գէթ իր անդրանիկ փայլուն շրջանն է ունեցած, արտադրելով այնպիսի գործեր, որոնք դեռ այսօր եւս տպագրական արուեստի գարդն են կազմում: Բեղմնաւոր է եղած նաեւ նրա առեւտրական գործունէութիւնը: Անցեալ դարուն հայ եւ թէ օտար լեզուներով: Հայց դրանք բոլորը դրուած են զանազան հրատարակութիւնների մէջ եւ պատահական քնաւորութիւն են կրում: Բացի դրանից բուն հոլլանդական աղբիւրները կամ մա-

սակը անյայտ են մնացած եւ կամ՝ ինչպէս հարկն է չեն քննուած: Այս պակասը լրացնելու մտքով ձեռնարկեցինք գրել Ամստերդամի անցեալ գաղութի գործունէութեան ամբողջական պատմութիւնը, չանալով ամփոփել ըստ կարելւոյն բոլոր արդէն ծանօթ իրողութիւնները եւ լրացնելով ու մաստիք ուղղելով նաեւ դրանք՝ նոր, հոլլանդական աղբիւրների հիման վրայ: Եւ որովհետեւ Հոլլանդայի ուրիշ մասերում եւս պահվում՝ են հետաքրքրական հայ յիշատակները, ուստի աւելի նպատակայարմար համարեցինք այնպէս ընդարձակել պատմութեան սահմանները, որ նա ընդգրկէ թէ՛ այդ յիշատակները եւ թէ՛ առհասարակ Հոլլանդայի եւ Հայոց յարաբերութիւնները ԺԶ—ԺԹ դարերում:

Ա. Ս.

Ամստերդամ, 10 Դեկտեմբեր 1924:

ՀՈԼԼԱՆԴԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ԺԶ—ԺԹ. ԴԱՐԵՐՈՒՄ

Ա.

Հոլլանդայի քաղաքական եւ առեւտրական յարաբերութիւնները Մերձաւոր Արեւելքի հետ ԺԶ. եւ ԺԷ. դարերում։ Առաջին թուրք-հոլլանդական դաշնագիրը։ Ջմիւռնիայի հայ վաճառականների խնդրագիրը Հոլլանդական ընդհ. նահանգներին, նրա մեկնութիւնն եւ թարգմանութիւնները։ Հոլլանդայի յարաբերութիւնները Պարսկաստանի եւ Հնդկաստանի հետ։ Հոլլանդական „Արեւելեան Հնդկաստանի Ընկերութիւնը„։ Պարսկական դեսպանութիւնն Ամստերդամում ԺԷ. դարում։

ԺԶ. եւ մանաւանդ ԺԷ. դարում փոքրիկ Հոլլանդան (կամ Ստորին Նահանգները՝ Nederland, Pays-Bas) համաշխարհային նաւագնացութեան մէջ շատ կարեւոր դեր էր խաղում։ Ոչ միայն Եւրոպայի հիւսիսն ու հարաւն այլ նաեւ Մերձաւոր Արեւելքն իրենց հայեացքն ուղղել էին նրա կողմը։ Նրա նաւահանգիստ-

ներըլ-լինքն էին թէ սեփական եւ թէ օտար ամէն կարգի նաւերով։ Հոլլանդայի գլխաւոր քաղաքն՝ Ամստերդամ միջազգային վաճառականութեան կենտրոն էր դարձել։ Անբաւ հարստութիւն էր դիզուած այնտեղ եւ նրա հռչակն այնքան մեծ էր, որ "Եւրոպայի կայսրուհի" տիտղոսն էր առել եւ իրաւամբ պարծենում էր այդ տիտղոսով։

Յատկապէս Մերձաւոր Արեւելքի հետ Հոլլանդական նաւերը յարաբերութեան մէջ են մտել ԺԶ.դարի վերջերը։ Առաջին ծանօթ առագաստանաւը կ.Պոլիս մտել է 1594ին. իսկ առաջին ծանօթ Հոլլանդացին որ կ.Պոլսում հաստատուել է, եղել է անձն Dousa, որ 1597ին եւ 1598ին այն տեղից նամակներ է գրել Հոլլանդա, որոնք արդէն հրատարակուած են[1]; Այնուհետեւ յարաբերութիւններն աւելի յաճախ են դառնում։ Բայց Հոլլանդացիք Ֆրան հետ առեւտրական դաշնագիր չունենալով, ստիպուած էին նաւարկել եւ գործել օտար դրօշակի տակ։ Նախ նրանք մտան Անգլիայի հովանաւորութեան տակ, որ արդէն 1580ին դաշն էր կռել սուլթանի հետ եւ առանձնաշնորհումներ (capitulations) ձեռք բերել։ Այն միջոցին այդպիսի դաշինք՝ անգլիացիներից զատ ունէին

---

1 Bronnen tot de geschiedenis van den Levantschen Handel, verzameld door Dr. K. Heeringa. 'sGravenhage 1910, T. I, հատ., էջ 14 (Աղբիւրներ Մերձաւոր Արեւելքի Առեւտրի պատմութեան, Դր. Կ. Հէրինգայի, տպ. Հաագ (La Haye)։

միայն ֆրանսացիք եւ վենետիկցիք։ Սակայն շատ պատճառներ ունէին հոլլանդական նաւերն եւ վաճառականները դժգոհ լինելու իրենց գործածած անգլիական դրօշակից։ Այս պատճառներին տեղեակ էր Կ. Պոլսի անգլիական դեսպանն եւ աշխատում էր դժգոհութեան առիթ չտալ, որովհետեւ որոշ շահ ունէր հոլլանդացիներից, բայց իր կառավարութիւնն ուշադրութիւն չէր դարձնում նրա զեկուցումներին եւ նոյն իսկ չէր էլ պատասխանում։ Այս հանգամանքից օգտուելով ֆրանսական դեսպանն, որ նրա մրցակիցն էր Մերձաւոր Արեւելքում (Levant), յաջողեցաւ խլել հոլլանդացիներին եւ իր դրօշակի տակ ընդունել[1]։

Գաղղիական դեսպանը այս կերպով՝ թէեւ խլեց անգլիացիներից այն 2% տուրքն, որ հոլլանդացիք պարտաւոր էին վճարել իրենց բերած ապրանքի արժէքից, յօգուտ ֆրանս. հիւպատոսարանին, բայց նա միեւնոյն ժամանակ միջնորդեց Բ. Դրան մօտ հոլլանդացիների օգտին եւ յաջողեցաւ ձեռք բերել նրանց համար գնահատելի արտօնութիւններ[2]։

---

1 Անգլ. դեսպանը 1596 Յունուար 20/30ին գրում էր Լոնդոն. "The French Ambassador hath not only maliciously and falsly infamed me unto her Majestie findinge therin also undue credit-but... in my absence hath maliciously procured they (հոլլանդացիք) all passe under the French King his banner...„: State Papers, Foreign, Turkey Nr. 3 (1594—1598), էջ 38։

2 Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman. Traités... recueillis et publiés par Gabriel effendi Noradounghian. Paris 1897. T. I (1300—1789)

Անոնց ամենայնիւ 1600ին հոլլանդացիք՝ 2% տուրքէն ազատուելու յոյսով վերադառնում են անգլիական դրօշակին: Բայց երբ Ամստերդամի վաճառականների մի նաւը բռնվում է ծովահէնների կողմից եւ բոլոր մէջէնները, մարդ ու ապրանք գերի են տարվում, հոլլանդական կառավարութիւնը ստիպվում է գաղղիական դեսպանի միջամտութիւնը խնդրել նրանց ազատելու համար: Սա ընդունում է այդ եւ Ամստերդամ գրած իր պատասխանի մէջ յորդորում է հոլլանդացիներին որ վերստին ընդունին գաղղիական դրօշակի հովանաւորութիւնը, խոստանալով, որ ինք խտրութիւն պիտի չդնէ ֆրանսական եւ հոլլանդական նաւերի ու վաճառականների մէջ[1]:

Թէ դարի սկիզբը հոլլանդան՝ շնորհիւ իր նաւագնացութեան եւ առեւտրական յարաբերութիւններին, Մերձաւոր Արեւելքում այնքան կարեւորութիւն էր ստացել, որ Ք. Դրան հեղինակաւոր նախարարներից մէկը՝ ծովակալ Խալիլ փաշան, մի վենետիկցի եւ մի հոլլանդացի վաճառականների միջոցով առաջարկեց հոլլանդա-

---

Avril 1598 (Թամազան 1006). Privilèges, accordés aux marchands des Pays-Bas sur la demande de l'Ambassadeur de France.

1 "Pour may, գրում է դեսպանը 1610 Մայիսին, je Vous assure, que j'aurai le mesme soin de vos vaisseaux que des français... Vous en aurez plus de sûretè et de commodité et de contentement aussy...„ Paul Masson, Histoire du Commerce français dans le Levant au XVII siècle. Bronnen, Heeringaյի եւայլն, T. I.

կան կառավարութեան, որ դաշնակցութիւն կազմուի Թուրքիայի, Մարոքի եւ Հոլլանդայի մէջ, ընդդէմ Սպանիայի, որ իրենց ընդհանուր թշնամին էր[1]: Այս առաջարկութիւնն առիթ եղաւ, որ Հոլլանդան ուղղակի դիւանագիտական բանակցութիւն սկսի Բ. Դրան հետ, որին վաղուց ձգտումմ էին նրա նաւագնացները: Արդարեւ Հոլլանդացի վաճառականները սեփական առեւտրական տներ էին հաստատել Թուրքիայի զանազան կողմերում, յատկապէս Կ. Պոլսում եւ Զմիւռնիայում: Նրանք անհրաժեշտ էին գտնում առանց օտար դրօշակի, ուղղակի գործելու իրենց հայրենիքի հետ: Ազգային դրօշակի շնորհիւ նրանք անընդմիջական յարաբերութիւն ունենալով, իրենց հայրենի արդիւնաբերութիւնն ու ճարտարարուեստի արտադրութիւնները անարգել պիտի կարենային տարածել Մերձաւոր Արեւելքի նաւահանգիստներում եւ այս կերպով իրենց ձեռնարկութիւնները էլ աւելի հիմնաւոր բնաւորութիւն պիտի կրէին: Դրա համար հարկաւոր էր, որ Հոլլանդան էլ կապէր Բ. Դրան հետ այնպիսի առեւտրական եւ քաղաքական դաշնագիր, ինչպէս ունէին միւս տէրութիւնները, Գաղղիա եւ Անգլիա: Նրանք յոյս ունէին,

---

1 Այս խալիլ փաշան ծագումով հայ էր: Մի իտալացի պատմագիր ասում է թէ այն միջոցին Բ. Դրան մէջ երկու խելօք մարդ միայն կար, Սուլթանի փեսայ Օս. Մուհամէդ փաշան եւ այս խալիլը: Բայց, շարունակում է իտալացին իրաւամբ, con due sole pietre non si fa un muro (երկու քարով միայն պատ չի շինուիր): Bronnen, Heeringaյի եւայլն, T. I:

Թէ այդպիսի մի բարեկամական դաշնագրից յետոյ իրենց նաւերն ու ապրանքները այլ եւս չէին ենթարկուեր Թրքական ծովահէնների յարձակումներին, որոնք վխտում էին Միջերկրականում եւ սարսափելի վնասներ հասցընում: Այս նպատակով Հոլլանդական նշանաւոր իրաւաբան դիւանագէտ, Cornelius Haga, 1611ին եկաւ Կ.Պոլիս եւ սկսաւ բանակցիլ: Իր առաջին այցելութիւնը տուաւ Խալիլ փաշային, որ օգնեց նրան եւ 1612ին կնքուեց առաջին քաղաքական — առեւտրական դաշնագիրը Բ. Դրան եւ Հոլլանդայի *Ընդհանուր Նահանգների*[1] մէջ:

Ընդհանուր Նահանգները չափազանց գոհ էին, որ շնորհիւ այս դաշնագրի ազատվում էին օտար դրօշակի հովանաւորութիւնից եւ ազատ մուտք եւ գործունէութիւն պիտի ունենային այն ժամանակուան լայնածաւալ Թուրքիայի ամէն մասերում: Իրենց շնորհակալութիւնը յայտնելու համար, նրանք՝ իրենց լիա-

---

1 Որպէս զի հայ ընթերցողին, — որ քիչ առիթ է ունեցած Հոլլանդայի պատմութիւնը կարդալու, — հասկանալի լինի այս տիտղոսը, աւելորդ չենք համարում կարճառօտ կերպով պատմել Հոլլանդայի քաղաքական կացութիւնն այդ դարում (ԺԷ.) եւ յետագայ շրջանում:

ԺԶ. դարում Հոլլանդական 7 *ստորին նահանգները* իրենց երկիրը գրաւող սպանիացիների դէմ միացեալ ոյժերով մարտնչելու համար միութիւն կազմեցին եւ 1588ին հրատարակեցին Միացեալ Հոլլանդայի Հասարակապետութիւնը: Այս միութեան մէջ՝ վեհապետական իշխանութիւնը (souveraineté) պահպանում էր Հասարակապետութեան մասն կազմող *նահանգների* (Staten-Etats) մի մի ներկայացուցչից բաղկացած խորհուրդին, որ կոչվում էր "*Ընդհանուր Նահանգներ*":

զօրի միջոցով թանկագին նուէրներ ուղարկեցին Կ. Պոլիս, բոլոր բարձրադիր պաշտօնեաներին բաժնելու համար, սկսած նոյն ինքն Սուլթանից[1]։

Դաշնագրի վաւերացուելուց յետոյ (1612 Յուլիս) հոլլանդական նաւերն աւելի մեծ թուով սկսան յաճախել Մերձաւոր Արեւելքի նաւահանգիստներն, ուր իրենց բերած ապրանքը ծախելուց կամ իրենց առեւտրական ճիւղերին յանձնելուց յետոյ բեռնում էին տեղական բերքեր եւ դառնում ետ։ Հետզհետէ հոլլանդացի վաճառականները մտան նաեւ երկրի ներսերն, բոլոր կարեւոր քաղաքներն, որոնց մէջ Անգօրան եւս յիշվում է։ Բայց նրանց գլխաւոր գործունէութիւնը Զմիւռնիայի, Կ. Պոլսի եւ Սիրիայի ափերի հետ էր. ընդհանուր նահանգներն ա-

---

1 Հոլանդական Արտաքին գործ. Նախարարութեան գաղտնի Մնատուկի Թուրքիայի վերաբերեալ պահարանում (Turkije Nr. 9) պահվում է այս նուէրների մանրամասն ցուցակը, կազմուած՝ 1612, Նոյեմբերի 23ին, "Inventaris van de goederen en de presenten, die van wege H. H. M·sijn gezonden naer Constantinopolen om te presenteren aen den Grooten Heer en de Bassas„։ Այս groote heerը (Grand seigneur) սուլթանն է իսկ Bassas — փաշաները, որոնց մէջ Խալիլը յատկապէս յիշուած է։ Նուէրների ընդհանուր արժէքը հաշուած է, 20.000 ֆլորին, որ այն ժամանակուան համար մեծ գումար է։ Ցուցակում կան հոլանդական ժամանակակից արուեստի եւ արդիւնաբերութեան ամենաընտիր նմոյշները, թաւիշ, սաթին, յախճապակեայ իրեր, կահ կարասիք, ամանեղէն եւն։ Դեսպան Հագան մանրամասն տեղեկագիրներ է ուղղած Ամստերդամ այս նուէրների բաշխման առթիւ։ Առհասարակ այս քաղաքական հոլլանդացին շատ հմուտ էր զեկուցագիրներ է ուղարկել իր կառավարութեան K. Heeringa, Bronnen եւայլն, T. I·

մէնից յառաջ Զմիւռնիայում հաստատեցին հոլլանդական հիւպատոսութիւն։

Սակայն շատ չանցած, հազիւ մի քանի տարի եոթը, մի լուրջ վէճ ծագեց երկու երկիրների մէջ։ Թուրք իշխանութիւնները սկսան խուզարկել եւ գրաւել հոլլանդական նաւերն այն մեղադրանքով թէ սրանք թուրքիա են մտցնում օտար արտադրութիւններ, այսինքն այն երկիրների ապրանք, որոնց հետ Բ. Դուռը դաշնագիր կապած չէր, իսկ Թուրք-հոլլանդական դաշնագրով հոլլանդացիք արտօնուած էին մտցնել միմիայն իրենց երկրի արտադրութիւնը, բուն հոլլանդական ապրանքը։ Այս հանգամանքը մեծ վնաս հասցրեց հոլլանդական առեւտրին եւ ընդհ. նահանգների կարգադրութեամբ 1625 ին Ամստերդամում հիմնուեց "Մերձաւոր Արեւելքի առեւտրի եւ Միջերկրական ծովում նաւագնացութեան վարչութիւն[1]„ անունով մի յատուկ հաստատութիւն, որ իրաւունք ունէր կանխապէս քննել Մերձաւոր Արեւելք գնացող բոլոր նաւերը, ստուգելու համար նրա բեռը, այսինքն, ապրանքի ո՞րտեղից լինելն եւ ո՞ւմ պատկանելն եւ ըստ այնմ տալ նաւի բեռնագիրն ու անցագիրը։ Այս հաստա-

---

1 Պաշտօնական անունը՝ "De Directie van den Levantschen Handel en de Navigatie in de Middellandsche Zee„, որը նոյն ժամանակի ֆրանսական վաւերագիրներում թարգմանուում էն "Les Directeurs du négoce du Levant et navigation de la Mer Méditerranée„։ Այս հիմնարկութիւնը կոչվում էր նաեւ "Collège van Commissarissen van den Levantschen Handel„։

տութիւնը, որ վայելում էր կառավարութեան լիուլի աջակցութիւնը, շատ կարեւոր դեր խաղաց նաեւ նրանով, որ միջոցներ գործ դրաւ ծովահէնների շահատակութիւնների դէմ։

Այդ դէպքից յետոյ ընդհանուր նահանգները էլ, իրենց նաւագնացութիւնն աւելի եւս զօրացնելու եւ աճեցնելու նպատակով մի նոր օրէնք դրին, որով բացարձակապէս արգելվում էր օտար նաւերով Թուրքիայից եւ պարսկաստանից Հոլլանդա ապրանք բերելը։ Այս կարգադրութեան հետեւանքով, շատ վաճառականներ, որոնք ոչ-հոլլանդական նաւերով ներածում եւ արտածում ունէին հոլլանդայի հետ, Ամստերդամի կարեւորագոյն շուկան կորսնցնելու վտանգի մէջ պիտի գտնուէին, եթէ միմիայն հոլլանդական նաւեր չգործածէին։ Այս դրութեան մէջ էին մանաւանդ *Զմիւռնիայում հաստատուած* կամ այդ վաճառաշահ քաղաքն իբրեւ արտահանութեան կէտ գործածող հայ *վաճառականները*։ Ուստի սրանք, մանաւանդ այնպիսիները, որոնք արդէն սեփական տներ ունէին հիմնած Իտալիայում, Գաղղիայում եւ Սպանիայում եւ անընդմիջական յարաբերութիւն ունէին նաեւ հոլլանդայի հետ, որոշեցին ոմանք անձամբ *գալ հաստատուիլ, իսկ ոմանք իրենց ճիւղը բանալ Ամստերդամում*, որպէս զի այս տեղից հոլլանդական նաւերով, կամ հոլլանդական դրօշակ կրող հայկական նաւերով, ինչպէս պիտի պատմենք, իրենց առուտուրը շարունակեն անարգել։

Հոլլանդական նաւային շարժումն եւ առեւտրական յարաբերութիւնն այնուհետեւ աւելի եւս ընդարձակ չափեր առին։ Ամբողջ տորմիղներ էին գնում Ամստերդամից Մերձաւոր Արեւելքի նաւահանգիստները հոլլանդական գործարանների արտադրութիւններով եւ այն տեղից՝ տեղական բերքը ու ապրանք բարձած ետ դառնում։ Այս առեւտրին քիչ չեն օգնած Ամստերդամում մշտական բնակութիւն հաստատող հայերն, ինչպէս խոստովանում են հոլլանդացիք եւս[1]։

Մերձաւոր Արեւելքի նաւահանգիստներից ամէնից կարեւորը հոլլանդայի համար Զմիւռնիան էր, աւելի բանուկ քան կ.Պոլիսը։ Այս պատճառով էլ հոլլանդական գաղութն միշտ աւելի բազմամարդ է եղած Զմիւռնիայում քան կ.Պոլսում։ Զմիւռնիայի 1688ի մեծ երկրաշարժից եւ ապա տեղի ունեցած պատերազմից յետոյ, հոլլանդացիք բաւական քաշուեցան Զմիւռնիայից, բայց դարձեալ աւելի շատ էին համեմատաբար այստեղ, քան ուրիշ տեղ Թուրքիայում[2]։

Թուրք-հոլլանդական 1612 ամի դաշնագրից յետոյ, հոլլանդական ընդհ. նահանգները հիւպատոսներ էին դրել Զմիւռնիայում եւ Հալէպում։ Այս հիւպատոսներն երբեմն նշանակվում էին տեղացի յայտնի անձերից,

---

1 De Amsterdammer շաբաթաթերթ, Ամստերդամ, 14 Օգոստ. 1887։

2 Heeringa, Bronnen եւայլն, Ա. հատոր։

իբրեւ տեղական հանգամանքներին լաւ ծանօթ. բայց այսպիսիների դէմ գանգատ կար հոլլանդացի վաճառականների կողմից թէ իրենց իրաւունքները ազդու կերպով չեն պաշտպանում։ Այսպիսի մի առթիւ գրում է Լիվոռնոյի հոլլանդական հիւպատոսն իր կառավարութեան՝ 1653 Յունիս 30 թուով։

"Զմիւռնիայում բնակող մեր բազմաթիւ վաճառականները գանգատում են մեր այնտեղի հիւպատոսից, որ ծոյլ է։ Նրանք զեկուցանում են թէ իրենց առուտուրն այնտեղ հետզհետէ աճում, տարածվում է։ Այս հանգամանքը մղում է ինձ ձեր ուշադրութիւնը հրաւիրելու թէ անհրաժեշտ է Զմիւռնիայում այդ ծոյլի տեղ մի հոլլանդացի հիւպատոս դնել..."[1]։

Ընդհ. Նահանգներն ընդունում են այս առաջարկն եւ Զմիւռնիա են ուղարկում մի հոլլանդացի հիւպատոս Michiel Mortier անունով։ Բայց սրա հետ էլ շատ չանցած մեծ անհամաձայնութիւն են ունենում թէ հոլլանդացի եւ թէ հայ վաճառականները։ Եւ թէ առաջիններն ու թէ հայերը 1658ին զատ զատ բողոքագիրներ են ուղարկում Զմիւռնիայից՝ Ընդհանուր Նահանգներին։

Հետաքրքրական է հայոց աղերսագիրը[2]։ Սա գրուած է երեք լեզուով, այն է՝

---

1 Անդ։

2 Բնագիրը պահվում է Հաագում, "Ընդհ. Նահանգների Դիւաններում, որտեղից իմ խնդրանքով, ուղար-

3117-ձ

1. Վերնագիրը տիտղոսը յանուն ընդհ. նահանգների՝ իտալերէն է (հայ տառերով)։

2. Սկիզբը մի գովաբանական ճառ է, հայերէն գրաբար։

3. Իսկ բուն աղերսագիրը գրուած է սարսկահայ խառն բարբառով։

Եւ որովհետեւ հայերէն աղերսագիրը բոլորովին անհասկանալի էր հոլլանդական կառավարութեան, ուստի եւ Սիմոն Օհաննեան (Simon Joan) անունով մի հայ վաճառական, որ կամ իր հետն էր բերել աղերսագիրը Զմիւռնիայից եւ կամ ինքն Ամստերդամում էր գտնվում եւ ստացել էր այդ (Զմիւռնիայից) պատշաճաւոր իշխանութեան ներկայացնելու համար, տանում է նոտարի մօտ, այնտեղ ինքը հայերէն է կարդում "սահուն եւ վստահ", ինչպէս վկայում է նոտարն, իսկ Սարգիս Պողոսեան (Sirchis Bogos) "արեւելեան լեզուների թարգմանը" թարգմանում է հոլլանդերէնի։ Ահա այս նոտարական թարգմանութիւնն է, որ ներկայացնում ենք հայերէն բնագրի հետ եւ որ արդէն հրատարակուած է հոլլանդերէն[1]։

Բնագիրը հետեւեալն է[2]։

կեցին Ամստերդամ, համալսարանի Մատենադարանն, ուր եւ ես արտագրեցի եւ լուսանկարեցի։ Յայտնում եմ խորին շնորհակալութիւնս Դիւաններէի եւ Մատենադարանի վարչութեան։

1 Heeringa, Bronnen եւայլն, Ա. հատոր, էջ 622–624։

2 Մեր այս գրուածքը պատրաստ էր արդէն, երբ ծանօթացանք Պրոֆ. Ֆր. Մակլերի վերջին հրատարակու-

Է

Սինօրի ալթիսիմի է փութընթիսիմի սի(ն)օրի ըստատի ջընդրալի, դըլէյկուն ֆիդասի պօռֆիցէ Բիլջիս[1]։

Առաքինութեամբ զարդարեալ եւ ա̄հութեց արժանաւոր, ի բնաւս մեր պարծանք եւ ուրա-

---

թեան հետ Rapport sur une mission scientifique en Belgique, Hollande, Danemark et Suède, Paris 1924, որի մէջ բազմարդիւն հայագէտը մեծ հմտութեամբ ցուցակագրել եւ բացատրել է այդ երկիրների զանազան Դիւաններում եւ Մատենադարաններում գտած հայերէն ձեռագիրները։ Այդ Տեղեկագրի (Rapport) մէջ հրատարակուած է նաեւ աս Ջմիւռնիացի վաճառականների խնդրագիրը, լուսանկարով միասին որին կցուած է եւ գաղղիերէն մի թարգմանութիւն։ Այս թարգմանութիւնն՝ ընդհանրապէս ճիշդ լինելով հանդերձ, ունի բազմաթիւ ուղղելի կէտեր։ Ըստ երեւոյթին թարգմանիչը (Գ. Մ. Դաւիթ Բէգ) իր առջեւ ունեցել է միայն հայերէն լուսանկարուած օրինակն, այն էլ փոքր դիրքով, որ անշուշտ դժուարացնում էր նրա գործը։ Մենք կը փորձենք տալ ստորեւ այդ հետաքրքրական (նաեւ լեզուի տեսակէտից) վաւերագրի աւելի ընդարձակ լուսաբանութիւնը։

1 Վաւերագիրն սկսում է այդ իտալերէն տիտղոսով, որի մանաւանդ վերջին մասը բաւական աղաւաղուած է։ Պէտք է կարդալ այսպէս. Signori altissimi e potentissimi signori Stati Generali degli confederatie province Belgis. “Բարձրագոյն եւ հզօրագոյն պարոններ ընդհանուր նահանգներ Բելգիական գաւառների համադաշնակցութեան„։ Այս տիտղոսի առթիւ ես հարցրել էի Հաագի պետական Դիւանների ընդհ. դիւանապետ (archiviste général) Պրոֆ. Fruinին, որ հաճել էր ինձ պատասխանել. “Votre restitution des titres, que les négociants arméniens ont donnés aux Etats Généraux, me semble parfaitement

խուլթիւն ամ գովութենց արժան գովելի եւ պատուական ի սէրտ սիրն սիրեցեալ եւ ի սրբոց ամ պատուեալ ընտիր մարդկն եւ հաճոյ այ պատուելի պարոն, ամենակարող զօրութեամբ այ պահպանեալ եւ աշնութեամբ նորին զօրացեալ եւ բարձրագոյն պատուով ճոխացեալ եւ նախախնամական իշխանութեամբ զարդարեալ վեհագոյն գլուխ եւ ախոյեան հզօր ընկիզընական տէրութե մեծաշուք եւ բարձր պատուովք դերազանցեալ արիացեալ եւ քաջանուն եւ յամենայն խաղաղութեանց եւ բարեաց յորդորիչ ճարտարապետ եւ ածասէր։

Արզ[1] լինի պարընէրացն[2] որ էն չաղն[3] մուքէլ[4] ղունսուլին[5] ամրէք[6] տվէլ որ գայ, էզն միրումրս[7] ղունսուլ ունի[8] մէք ինչ փարսինա[9] խայ կէր ողջ բոլորվեցանք գնացինք շնախավորեցինք թէ պարոննին մեզ խաարան աղարկել[10] ղօնսուլն լէվ ա՛[11] մեր

---

d'accord avec les coutumes diplomatiques d'alors„։ Իսկ "ընդհանուր նահանգների„ մասին բառ էութեան, տես վերեւ։

1 Խնդիրք, զեկոյց։

2 "Պարոններին, "ընդհանուր նահանգների„ վարիչ ժողովականներին ուղղուած, որ շատ սովորական էր պաշտօնական թղթակցութիւնների մէջ։

3 Էն չաղն = այն ժամանակ։

4 Մուքէլ = Միքէլ, որ հոլլանդական հիւպատոսի անուն էր — Michiel Mortier։

5 Consul = հիւպատոս։

6 Հրամայել էր։

7 Այստեղ, Զմիւռնիայում։

8 Լինի։

9 Պարսկահայ։

10 Ուղարկել։ Դեռ հիմա ղարաբաղցիք աղարկել են ասում։

11 Լէվ ա՛, Լաւ է. նոյնպէս գործածութեան մէջ է այժմ, ինչպէս այս գրութեան բարբառի մեծագոյն մասը, Պարսկաստանի եւ սահմանակից երկիրների հայ ժողովրդի մէջ։

էլ բանընի[1] կտեսնու. ե ամիս յանց եկաց տեսինք թէ սրա մաթլաբն[2] ղօնսուլութին չի սա ուզումա աղվաթութի[3] առե[4]. աղվաթի պէս նազունին չուրի յարաղդ[5] դավէ առե[6] յառջին նամն որ արեկ[7] փողն գնաց բզրկանին[8] տունն մենք գնացինք ղունսուլին ասցինք թէ դու եկ ղունսուլաթն[9] քինք[10] առ իեայ[11] մին մարդ աղարկէ դայ ղունսուլաթն քինքն առու. Ջուղապ արետ[12] թէ իմաթլաբն[13] ձեզ ջաֆա[14] առել ա չուր[15] փողն դուք յուսէք[16] ոչ բերէք իմ տունն, ես ձեզնէ ղունսուլաթն չեմ քինք առման. Նաչարեցանք փողն մեզ չին տալման յուսեցինք տարանք իր տունն ղունսուլաթ ավինք բերինք. յետեւ մին նավ էլ արեկ գնացին(.ք) թէ փողն յուսենք բերենք .ք" տունն. ղապուլ

---

1 Բան կամ գործ լինի։

2 مطلب, կամք։

3 Փաստաբանութիւն, avocat բառից։

4 Ընէ։

5 Առաւօտից մինչեւ երեկոյ։

6 Հակաճառում է, դատ է վարում։

7 Եկաւ։

8 Վաճառական (بازرکان), այստեղ յատկապէս Հոլանդացի վաճառականի է ակնարկում։

9 Ղունսուլաթ = Հիւպատոսական հարկի մտքով է գործածվում, եւ ոչ թէ իբրեւ Consulat = Հիւպատոսարան։

10 Այս «քինք» բառը ամբողջ գրութեան մէջ կիրարկվում է իբր դերանուն։ «Ցինք» առ = դու ինքդ առ, «քինք առու» թող նա (ինքն) առնէ. «քինք կառում» = ես ինքս կ՚առնեմ. «քինք առունք» = մենք (ինքերս) առինք. «չեմ քինք առման» = ես (ինքս) չեմ առներ եւն։

11 «Իեայ» = կամ թէ չէ։

12 Արետ = տուաւ։

13 Իմաթլաբն = իմ մաթլաբն, կամքն։

14 Նեղութիւն։

15 Մինչեւ որ։

16 Հիւսել, պատրաստել։

չարար[1] թէ այլտա՛[2] ուրիշ ջաֆով քինք կառում ձեզնէ, ացինք սաս ինչ ջաֆայ արարիր մեզ որ բէկլարին խաթրին համար մեք ղաբուլ չարարինք, ինչ ջաֆայ որ կառես արայ. սաաց տարէք դրէք նավին բարքումն[3] տարէք նավն քետ բերէք մեր տուն, էնչաղն ղունսուլաթ տվէք տարէք փողն դրինք բարքումն վեռինք տարանք նավն քետ բերինք տարանք իւր տունն, էնչաղն թէ գ-դ[4] օրով քետնէ ղուրնսուլաթն վեռէց փողն դուս արետ[5] ացինք թէ քո մաթլապըտ ինչ ա որ մեզ էսչանք ջաֆայ ես տալման, սաաց թէ ղունսուլաթն ինձ գ. տարով ա տված ոնչով գիտել[6] չէ ղիս մազուլ[7] առել ձեզ չանք[8] ջաֆայ առեմ որ էլ ֆլամիկի[9] նավում ապրանք չդնէք, մեք ացինք թէ էտ դու քենէ ես սսում թէ պարոնըրնին ան[10] ացել թէ էտէնց առես, սաաց գ տարի ախտիարն[11] իմ ձեռնումն ա ինչ կուզեմ էնէնց կառեմ, մեք էլ ացինք պարընէրուն արզ առենք քարկա՛ պարընէրն ուզում չեն ուրէնց նավումն ապրանք բառնանք մեք էլ բառնանք ոչ. մին նավ էլ արէկ սարտան բղըկանին վրայ չուրի կէս գիշերն ղմեզ պախեց, տանէն ոչ դուս արեկ ոնչ մեզ ջուղապ արետ, մեք էլ նաչարեցանք փողն վեր գձեցինք գնացինք քէգան[12] վեր կացինք եկինք

---

1 Ոչ արար = չարաւ:

2 Հիմայ:

3 Barque = Մակոյկ:

4 3—4:

5 Դուրս տուաւ:

6 Կարող չէ, ֆրանս. ձեւով ne saurait:

7 Պաշտօնից արձակել:

8 Այնչափ:

9 “Ֆլամինկ„ — Flamand. “Հոլլանդացի„ իմաստով:

10 “Ընդհանուր Նահանգների ժողովականները, “պարոններն„ են ասել:

11 Ընտրութիւն, կամք կամ իրաւունք:

12 Հետեւեալ օրն:

չուրի յորակոյ կանգնեցանք այինք էտ մարդիտ մաթլասն ինչա՛ էտ փողերտ զաֆտ կառե թէ մեր փողն մեզ կտա՛. սասց չուր[1] այլ տա ձեզնէ ճ. ին կէսամ յինք առել այլ տա մին մռչլ կէս ըռպ[2] յինք կառում այինք թէ այլտա՛ ժ տարի ս որ մեք ֆլամիկի նավլին ժ. ին կէսանք տվէլ չում այլ տա[3] դու մին մռչլ կէս ըռպ աս ուզում. սասց ես ձեզ սասցի ոչ, գ տարի ղունսուլ ամ ինչ կուզեմ էնէնց կառեմ այինկ ինկլիզ, ֆռանգտես քանի տարի ս ճին կէսան յինք առել չումա[4] դու եվել աս ուզում, սասց ես էսէնց կառում ում կուզէք գրեցէք ուր կուզէք գնացէք մեք չոք[5] խինգ ֆլամիկի բզըկաներ բոլորեցինք այինք դուք էլ վկա կացէք մեր էս բանում մեզ չկա օր ղունսուլն սասում այ չուրի դուք ղազին մօտ չգնէք[6] ձեր փողն ձեզ չեմ տալման մեք էլ նաչարեցանք գնալով գալով բլթմազ[7] առելով բէզարեցանք վախման ինք թէ չնի մեր փողն վեռու ուր[8] պարտքն տա գնացինք ղազին մօտ մեր փողն բռնեցինք յինք առինք ամա մեր էս բանիս գունախ[9] չունինք, փողն օր բարքում գնում յետ տանում քուրթի[10] ղատըրղէքն[11] ղուրսանի[12] նավն կշտերանուն կանգ-

---

1 Մինչեւ որ։

2 Քառորդ։

3 Ինչու հիմայ։

4 Ինչու համար։

5 Ոչոք հինգ։

6 Գնաք, չերթաք։

7 Աղաչելով։

8 Իւր պարտքը։

9 Մեղք, յանցանք։

10 Թէ այստեղ եւ թէ աւելի վար, "քուրթի" բառը գործածվում է տիրող ծուլքի իմաստով։ Հոլլանդերէն թարգմանութիւնը ուղղակի ծուլք է ասում։

11 Նաւեր։

12 Ծովահէն, corsaire։

նած ա բալքի թէ բաըքին փողն խլերն սրա աէտի-
բար[1] չունի, դուք խլած փողն մեզ կտէք օր սրա
պէս աղվաթն ղունսուլ իք շինել մեզ խմր աղարկել.
յայլ տա մին ը ամիս այ ատլաս Լօնդրինայ եկել
դրէլա մաղաղումն մեզ չէ տալման թէ ղաղով յինք
առունք այիպիայ[2] ինքն խով[3] տալման չե. յայլ
տա քանի տարի ա ինկլիզին փլամէնդին փրանգսի-
սին խետ աղբօր պէս յանց անք կացուցել տարի կէս
ա սայ եկէլ ա յամէն օր մեզ խէտ դավէ կռիւ
առում ա՞յ սիրուն համար զմեզ սրանէ պռպր-
ցուցէք, յարկայ թէ դուք տեղէտ մին արախայ ա-
ղարկէք, մեք նրան է ղունսուլութի ղապուլ կա-
ռենք մեք սրայ ղունսուլութիւն ղապուլ չունինք.
թէ սայ ղունսուլութենէ դուս չգձեցիք մեր ձեր[4]
ինչ փող կայ ողջ քուրթ կուտե սրա դավէն մեզնէ
կտրման չի, մին նավ էլարեկ գնացինք ացինք եկ
ղուընսուլաթն յինք առ. ասաց գոլման[5] չեմ. ա-
ցին(ք) պօլիցէքն[6] բերենք տես ղունսուլաթն յինք
առ. ասաց ոնչ մանափէստին վրայ ինք կառում ոնչ
պլօցին[7]. ասաց դրէք նավուն բարքումն, տարէք
նավն, նավէն բերէք էնչաղն յինք կառում, էլ
բարքումն տարանք նավն նավէն բերինք ուր տուն
էնչաղն յինք առէց "խնդրէնք իստատէն որ մեզ մին
էլ քօլ գաասի[8] աղար կեոր չուրի յայլ տայ, ղուն-

---

1 Պատիւ: Լօնդրինայ.— Լոնդոնից:

2 Ըմօթ է:

3 "Խով" = ինչո՞ւ: Ղարաբաղցիք ասում են հիմայ էլ "խնի", նոյն մտքով:

4 Մեր ձեռքը, մեր ձեռին:

5 Գալիս չեմ, չեմ գալու:

6 Պօլիցէքն = police, բեռնագիր:

7 Նոյն police բառն է:

8 Այս էլ օտար բառ է եւ այնպէս աղաւաղուած ինչպէս իտալերէն տիտղոսի "դըլէյկուն փիգասի", որ ծանօթութեանս սկիզբը յիշեցինք. "Քօլ գաասի" հաւանականաբար communicaatie բառն է, որ հոլանդերէն վեր-

սուլն մեզ խերտ գէչըլմիշ ա ելէլ էլ էնէնց գէչըլմիլ ընի, մեղնէ եվելէքմին յինք չառու տեղես քուրԹի մասապուԹին[1] ձեր ախտլամում[2], փողին ոնչ գօմրուկ կայ ոնչ ղունսուլաԹ մեք ժ.ին կէան էնտուրինք տալման որ սաում ինք Թէ սատա բեռնինք. սայ մեր ղունսուլ ա մեր ապրանքն դնում անք նավուԹին ղունսուլաԹն տալման անք. փողն որ յետագոլման[3] էլ ապրանք անք առման դնում նավուԹին ինսաֆ չի Թէ մառչիլն[4] որ յետգայ էլ ղուընսուլաԹ ընի յայլ տայ ամին[5] ձերայ„:

Այս գրութիւնը հասարակ թղթի վրայ է 30 × 20 հարիւրորդամետր չափով, գրուած է նոտրագիր: Առաջին էջն ամբողջացնելուց յետոյ, շարունակութիւնը գրուած է 4-դ ի վրայ երկայնքին, քանի մի տող միայն: Ստորագրութիւնների տեղ դրուած է 33 կնիք անուանական, ըստ հին սովորութեան: Այստեղ գնում ենք, չորրորդ էջի լուսանկարը՝ կնիքներով: Սրանցից մի քանիսը՝ բնագրի վրայ լաւ չեն ելած: Ուշադրութիւն է գրաւում աջկողմի մեծագոյն կնիքը, որի վրայ կան 3 հատ X նշան, որ Ամստերդամի քաղաքային զինանշանն է (սպիտակ X կապոյտ յատակի վրայ, կարմիր կողերով): Կնիք-

---

ջատութիւն է եւ հնչվում է... caatie = ...կա́տի, նշանակում է՝ հաղորդագրութիւն, ազդարարութիւն: Հոլանդերէնի մէջ ձայնաւոր գիրը երկար հնչվելու համար 2 հատ է գրվում փոխանակ նշանի. aa = ա́, ee = է:

1 “Մասապ„ (مذهب), Թուրքի հաւատք, օրէնքում:

2 Ձեր կարգերում, սովորութեան մէջ:

3 Ետ է գալիս:

4 Արժէք:

5 Հրամանը ձերն է:

ների մէջ կան այնպիսիներ, որոնք Հայերէն անուններ չեն կրում եւ միայն նշաններ են բո-



Աղերսագրին ստորադրուած 33 կնիքներու նմանահանութիւնը

վանդակում։ Թուական չկայ, բայց գրուած է հաւանականաբար 1658ին կամ առ առաւելն

1659ի սկիզբն, որովհետեւ Ամստերդամ բերուած եւ թարգմանուած է 1659 Ապրիլին։

Այս թարգմանութիւնը բնագրից մի կարեւոր շեղում ունի, այն է՝ բաց է թողուած առաջին 2 մասերն, այսինքն իտալերէն տիտղոսի գրաբար գովաբանականն, եւ սկսում է ուղղակի բուն աղերսագրից, որ ինչպէս յիշեցինք պարսկահայ խաւն բարբառ է, որ մասամբ գործածութեան մէջ է դեռ ւչ միայն Պարսկաստանում այլ եւ կովկասի սահմանակից գաւառներում։ Թարգմանութիւնը բառացի չէ բայց ընդհանուր միտքն եւ բովանդակութիւնը հարազատօրէն յառաջ է բերուած։

Ահա այդ հոլլանդերէն թարգմանութիւնը։

"Այսօր 1659 Ապրիլ ամսի առաջին օրը՝ Սարգիս Պօղոսեան (Sirckis Boghos) ասիական լեզուների թարգմանը, թարգմանեց ընդ սին կցուած հայերէն մի նամակ, որ նրան կարդաց պ. Սիմեն Օհաննեան (Simon Joan) հայ վաճառականն եւ որի պարունակութիւնը հետեւեալն է.

"Պարոններ ընդհանուր նահանգներ, տեղեկացնում ենք Ձեր բարձրութեան, որ երբ Michiel (Mortier) Ձեր կողմից այստեղ եկաւ, իբրեւ Զմիւռնիայի հիւպատոս, մենք բոլոր հայ վաճառականներս նրա մօտ երթալով բարի գալուստ մաղթեցինք եւ մեծապէս ուրախացանք, որ մի հոլլանդացի էր եկել։ Սակայն հինգ ամիս անցնելուց յետոյ տեսանք թէ սա աւելի փաստաբան է կամ պրոկուրոր քան թէ հիւպատոս, որովհետեւ ամբողջ օրը հակաճառելով եւ դա-

տավարելով է անցընում։ Նրա գալուց յետոյ երբ առաջին նաւն եկաւ Ջմիւռնիա, որ մասամբ կանխիկ փող էր բերել, նաւապետը փողը տարաւ մի հոլլանդացի վաճառականի տունը։ Մենք գնացինք հիւպատոսի մօտ եւ առաջարկեցինք, որ ստանայ մեզնից ինչոր իր իրաւունքն է իբր հիւպատոսական տուրք։ Բայց նա մերժեց ընդունել, պահանջելով որ այդ ստացուած փողը տանինք նախ նրա տունն եւ ապա ինք կը վերցնէ իր իրաւունքը։ Ստիպուած այդպէս էլ արինք եւ նա վերցրեց իրեն հասնելիքը։

“Երկրորդ նաւն որ հասաւ, բերած փողը դարձեալ մի վաճառականի տուն էր փոխադրուած։ Մենք գնացինք հիւպատոսի մօտ եւ խնդրեցինք որ գայ փողը տեսնէ եւ իր իրաւունքը ստանայ։ Հիւպատոսը դարձեալ մերժեց եւ պահանջեց, որ փողը նախ մակոյկով տանինք նաւուսկից որ բերուած էր եւ այնտեղից դարձեալ ցամաք հանուի եւ իր տունը տարուի։ Այդպէս անելուց յետոյ հիւպատոսը այդ փողը հինգ օր պահեց իր քովն եւ ապա իր իրաւունքը վերցնելուց յետոյ տուաւ իւրաքանչիւրիս իր բաժինը։ Երբ մենք գանգատուեցանք թէ մեր առջեւ դժուարութիւններ է հանում, մեզ նեղացընում է, հիւպատոսը պատասխանեց մեզ. “ես 3 տարով հիւպատոս եմ եւ որչափ կարող եմ պիտի խափանեմ, որ դուք հոլլանդական նաւերի հետ գործ ունենաք„։ Մենք դրա վրայ հարցրինք. “Նոցին բարձրութի՞ւնն[1]„ (ընդհ. Նահանգ-

---

[1] Հոլլանդերէն թարգմանութեան մէջ այս տիտ-

ներն) են հրաման արել որ մեզ հետ այդպէս վարուիք։ Եթէ նրանք հրամայել են, որ մենք նրանց նաւերով չճամբորդենք լաւ, այտեղ կը մնանք։

"Երրորդ նաւը հասած ժամանակ ամբողջ նաւաբեռը, բոլոր բերած ապրանքները, պարպեցին տարին հիւպատոսի տունը, նրա հետ բնակող վաճառականի մօտ. եւ չնայելով որ 2 օր դրան առջեւ սպասեցինք, չկարողացանք հիւպատոսին տեսնել եւ նրա հետ խօսիլ։ Երրորդ օրը երբ գնացինք տեսանք նրան ասինք, մենք առեւտրական մարդիկ ենք ի՞նչ պատճառունի նա մեր ապրանքները պահելու. նա պատասխանեց. "մինչեւ հիմայ հարիւրին կէս էի առնում, հիմայ հարիւրին մէկ եւ ոչ թէ կէս քառորդ (!) պիտի առնեմ„։ Իսկ մենք պատասխանեցինք. "մենք երկար տարիներ հոլանդական նաւերով ճամբորդած ենք եւ մեր ինչքը, ապրանքն եւ փողերը փոխադրած. սակայն հնչուն դրամի համար երբեք $^{1}/_{2}{}^{0}/_{0}$ աւելի չենք վճարած„։ Հիւպատոսը յարեց. "ես 3 տարով հիւպատոս եմ, ձեզ մի անգամ արդէն ասի, բաւական չէ. ես իմ ուզածս պիտի առնեմ„։ — "Մենք շատ անգամ ենք ճամբորդած անգլիական եւ ֆրանսական նաւերով, բայց կանխիկ

դրոնները նշանակուած են սկզբնատառերով միայն։ Այսպէս՝
H. M. = Hoog Mogenden, *Բարձր Հզօրներ, երբեմն էլ*
U. E. H. M. = Uw Edel Hoog Mogenden, *Ձերդ Ազնիւ Բարձր Հզօրներ, որ համապատասխանում է այն ժամանակ ընդունուած սովորութեան։*

փողի համար երբեք $^1/_2{}^0/_0$-ից աւելի չենք վճարած, ինչո՞ւ դուք աւելի էք պահանջում ինչո՞ւ մեզ այսպէս չարչարում էք„: Հիւպատոսը պատասխանեց. "Ուզում էք կարող էք գրել պարոններ ընդհանուր նահանգներին կամ բոլորդ միասին անձամբ գնալ ու իմ վրայ գանգատուել: Ես ուրիշ կերպ չեմ ուզում վարուիլ. եթէ աւելիք ունիք, գնացէք կադուն (դատաւորին) գանգատեցէք„: Տեսանք թէ մեր փողն ու ապրանքը նրա ձեռքից ազատելու ուրիշ ճար չկար, ստիպուեցանք մեզ հետ 4—5 հոլլանդացի վաճառական վկայ առնելով հիւպատոսի վրայ կադուն գանգատ տալ: Այսչափ մտահոգ էինք մեր ապրանքի համար:

"Բացի դրանից, յիշեալ հիւպատոսի մօտ եւ նրա մէծերանոցում տեղական կերպասներ եւ մետաքսեղէն ունինք, որը չենք կարողանում ստանալ: Բայց որովհետեւ դատաւորին դիմելը թէ շատ ծախք է պահանջում եւ թէ ամօթ է, ուստի ստիպուած ենք մեր ապրանքը 2 ամիս, նոյն իսկ աւելի, նրա մօտ թողնել: Մինչեւ հիմայ այստեղ մենք հոլլանդացիների, անգլիացիների եւ ֆրանսացիների հետ եղբօր պէս էինք ապրում եւ բնաւ վէճ չէինք ունեցած, սակայն այս հիւպատոսի գալուց յետոյ, տարի ու կէս է միշտ անախորժութիւնների եւ դժուարութիւնների ենք հանդիպում, խնդրում ենք ի սէր Աստուծոյ, ազատեցէք մեզ այս հիւպատոսից եւ հաճեցէք մեզ մի ուրիշին ուղարկել. թող երիտասարդ լինի, մենք գոհ կը մնանք: Եթէ այս հիւ-

պատուն աւելի երկար ճնայ մեծ վնաս պիտի պատճառէ թէ մեզ եւ թէ Հոլլանդացի վաճառականներին եւ մեր դրամը թուլքերը պիտի ուտեն։

"Վերջերս կրկին մի նաւ եկաւ. մենք բեռնագրերը եւ զեկուցագրերը (avis) միասին առինք գնացինք Հիւպատոսի մօտ, որ իր իրաւունքը վճարենք։ Բայց նա ոչ բեռնագիր եւ ոչ զեկուցագիր ի նկատի առաւ, այլ պահանջեց, որ մեր ապրանքը նրա տունը տանինք։ Այն ապրանքն, որ ցամաք էր Հանուած, ստիպուեցանք տանիլ նորից նաւ եւ ապա ետ բերել, որպէս զի նա իր իրաւունքը ստանայ։ Երբ մենք նաւով եկած մի գումար տարինք նրա տուն, նա ստիպեց մեզ նաւ վերադարձնել. եւ այս այն ժամանակ երբ թուլք, ալժիրցի եւ այլ ծովահէններ նաւեր եկած խարսխում են այստեղ եւ մեր փողն այս կերպով մեծ վտանգի մէջ է գտնվում։ Նա մեզ հետ քրիստոնէաբար չէ վարվում։ Խնդրում ենք Ձեզանից, որ մեզ մի ուրիշին ուղարկէք, որ մեզ օգնէ որչափ կարող է։ Այս Հիւպատոսը մեզ հետ վաճառականի պէս չէ վարվում այլ թուլքի պէս։ Ահա տեղեկացնում ենք Ձեր բարձրութեան մեր այս խեղճ վիճակը. օգնեցէք մեզ, մի ուրիշին ուղարկեցէք, որ մենք էլ առուտուր անենք, ինչպէս անում էինք մինչեւ Հիմայ։

"Այս նամակի տակ զանազան տեսակ 33 կնիք էին դրուած ստորագրութիւնների փոխարէն։

"Ցայտարարում եմ, որ յիշեալ Simon Joanը՝ վերոյիշեալ Sirckisի թարգմանութեամբ, այս նամակը սահուն կերպով կարդաց եւ թէ ինքը, Sirckisը, պատուաւորաբար եւ իր կրցածին չափ լաւ թարգմանեց, խնդրելով որ հաստատեմ։ Ի ներկայութեան van Claes Caellebuys եւ Harmanus vis վկաներիւ։ Quod attestor: G. van Toll."

Թէ որչափ հայերն իրաւունք ունէին գանգատելու այս "Մուքէլ. հիւպատոսից, երեւում է նրանից, որ դեռ եւս հայերից էլ յառաջ, "Ջմիւռնիայի ազգը. (հոլլանդական գաղութը) մի ընդարձակ տեղեկագիր էր ուղարկել Ամստերդամ "Մերձաւոր Արեւելքի վաճառականութեան վարչութեան, 1658 փետրվար 14ին, որտեղ հիւպատոսի մասին ասուած է։

"Ամէն օր սպասում ենք քրիստոնեայ աշխարհից նաւերի գալուն, նոյնպէս եւ նորին բարձրութեան որոշման այստեղի հիւպատոսին փոխելու մասին, որովհետեւ սա իր չարակամ վարմունքով արգելք է նաւագնացութեան, ամէնին այնչափ նեղութիւն է տալիս, որ օտարներն, ինչպէս հայերը, յոյները եւ հրեաները, տեսնելով, որ շարունակ նեղութիւնների են ենթարկվում, կարող են մեր նաւերին այլ եւս ապրանք չտալ։ Ներանք ասում են թէ այդպէս էլ պիտի կարգադրեն, եթէ այս վիճակին դարման չտանք[1]։

---

1 Heeringa, Bronnen եւայլն Nr. 300. "De natie et Smirna aan de Directeuren„, էջ 621. Այնտեղ կայ նաեւ

Այս հիւպատոսական տուրքը վճարելուց վաղուց խոյս էին տալիս երբեմն նոյն իսկ Հոլլանդացի նաւատէրերը։ Այսպէս՝ Կ. Պոլսի դեսպան Հագան գրում է իր կառավարութեան 1632 Դեկտ. 31 ին.

"Վերջերս Լիվոռնոյից այստեղ (Կ. Պոլիս) եկաւ մի նաւ De Trouw անունով, որի տէրը Ֆլիսինգէնցի (Հոլլանդայում) Jacob Jansen Marctmanն է, — բեռ վինտուելու։ Նա բերել էր մի քանի հայ առեւտրականներ իրենց ապրանքովն ու փողերովը։ Սրանք առանձնաշնորհումների (Capitulations) եւ բոլոր քրիստոնեայ ազգերի կանոնների համաձայն, ինչպէս եւ Ձեր բարձրութեան հրամանի հիման վրայ պարտաւոր էին հիւպատոսական տուրք վճարել։ Սակայն յիշեալ նաւատէրը ինձ եւ Գալիպոլիի հիւպատոսին խաբելով, եւ կանխաւ՝ նաւի վրայ գտնուած մաքսային պաշտօնեաների հետ համաձայնելով, այդ առեւտրականներին եւ նրանց ամբողջ ապրանքը բաց ծովում (Մարմարայում) դուրս է հանել...[1]"։

Այսչափ՝ Հոլլանդայի եւ Թուրքիայի մէջ քաղաքական եւ առեւտրական յարաբերու-

---

այս վերջիններէի գրութիւնը (Nr. 302) Ամստերդամի Նահանգապետին ուղղուած, որտեղ_ի մէջ այլոց խնդրում են Mortierին փոխել։ Վերջապէս այս հիւպատոսի եռամեայ սիրապետութեան ընթացքը լրանում է եւ Կմեօլսի Հոլլանդական լսազօրը Warnerus 1660 Մայիս 29 ին գրում է նրան թէ նա ազատ է եւ նրա տեղ նշանակուած է ոմն Duca di Giovanni։

1 Անդ, էջ 597։

թիւնների մասին այն դարում։ Այժմ երկու խօսք էլ Պարսկաստանի հետ յարաբերութիւնների վրայ։

Պարսկաստանի հետ հոլլանդացի վաճառականները յարաբերութեան մէջ էին ԺԷ. դարում, Պարսից ծոցի միջոցով։ Այս ճանապարհը նրանց ծանօթ էր արդէն, որովհետեւ նրանք գործում էին Հնդկաստանի հետ, անգլիացիների գալուց էլ յառաջ։ Հայերն, որոնք այն միջոցին նոյնպէս թափանցել էին Հնդկաստան եւ մոնղոլական տիրապետութեան ժամանակ նոյն իսկ քաղաքական դեր էին խաղում այնտեղ, առաջին անգամ 1645ին են պատահել հոլլանդացիներին Հնդկաստանում եւ նրանց հետ բարեկամացել[1]։

Պարսկաստանի հետ առուտուրը համարեա ամբողջովին “Արեւելեան Հնդկաստանի ընկերութեան„ (Ostindische Compagnie)[2], ձեռին էր,

---

1 History of the Armenians in India, by M. J. Seth, London 1897, էջ 36։

2 Այս նշանաւոր ընկերութիւնը չափազանց կարեւոր եւ օգտակար դեր է խաղացած Արեւելքում։ Շատ հոլլանդացիներ միմիանցից անկախ առուտուր անելով իրար դէմ մրցում էին Հնդկական շուկաների վրայ եւ վնասվում, որից օգտվում էին ուրիշ օտար մրցակիցներ, ինչպէս օր. Պորտուգալցիք։ Այս զգալով նրանք իրենց գործերն ու ջանքերը միացնելով մի մեծ ընկերութիւն կազմեցին “Oost Indische Maatschappy (Compagnie)„ անունով, որ Հոլլանդայի գաղութային իշխանութեան եւ հարստութեան աղբիւրը դարձաւ։ Նա այնչափ զօրացաւ, որ պորտուգալցիների եւ սպանիացիների դէմ մրցութեան ասպարէզը փոխադրեց Ամերիկա եւ Ափրիկէ եւ այդ նպատակով կազմեց

որ հետզհետէ այնչափ էր ընդարձակել իր գործերն, որ ժէ. դարում հնդկական կղզիների բոլոր արտադրութիւնները ու բերքերը Ամստերդամ էին հոսում։ Այս ընկերութիւնն էր, որ պարսկաստանի հետ առեւտրական կանոնաւոր յարաբերութիւն հաստատելու համար յատուկ դործակալ ուղարկեց նաեւ պարսից արքունիքը։

Այս գործակալը՝ Jan Lukasz van Hasselt՝ համոզեց շահի կառավարութիւնն, որ Հոլլանդայի հետ քաղաքական եւ առեւտրական դաշնագիր կապէ, ինչպէս արել էր դրացի Թուրքիան։ Ա. Հ. ընկ. այս կերպով ուզում էր

մի նոր ընկերութիւն՝ "Արեւմուտեան Հնդկաստանի ընկերութիւն„ կոչումով։

Հոլլանդացիների՝ այդ դարում (ԺԷ.) ունեցած լայնածաւալ գործունէութեան մասին կարելի է դաղափար կազմել նրանից, որ նրանք անգլիացիներից յառաջ հաստատում էին Աւստրալիայի արեւմտեան եզերքը (1616—1629), այդ տեղը Նոր-Հոլլանդա անուանելով։ Հռչակաւոր անգլիացի ծովագնաց Cook նաւապետից դեռ 127 տարի յառաջ մի հոլլանդացի էր (Abel Tasman), որ Java կղզուց դնաց գտաւ Նոր Զելանդիան, որ այժմ անգլիական ինքնակլուխ գաղթավայր է։ Հոլլանդացի էր նոյնպես (Jan van Ribeck), որ "Արեւելեան Հնդկաստանի ընկերութեան„ յանձնարարութեամբ չորցց Աֆրիկէի հարաւային եզերքը, հիմնեց այժմեան Capetown քաղաքն եւ այնտեղի առաջին պատսպարան եղաւ։ Վերջապէս նոյն իսկ Ամերիկայի մեծագոյն վաճառաշահ քաղաքը Նիւ-Եորք՝ ի սկզբան հոլլանդացիների ձեռքն էր գրեթէ, եւ "Նոր-Ամստերդամ էր կոչվում։

"Արեւել. Հնդկ. ընկերութիւնն„ իր գոյութիւնը պահպանեց մինչեւ ԺԸ. դարի վերջն, երբ ֆրանսական զօրքերը գրաւեցին Հոլլանդան։ Ֆրանսական իշխանութեան տակ երկիրը փոխեց իր վարչական ձեւն եւ ընկերութիւնն ալ մտաւ նոր պետական կազմի մէջ, դադարեց իբրեւ մասնաւոր առեւտրական ընկերութիւն գոյութիւն ունենալուց։

կանխել պորտուգալցիներին, որոնք սկսել էին եռանդուն գործունէութիւն ցոյց տալ Պարսից ծոցում եւ մրցում էին Հոլլանդացիների հետ։ Պարսկաստանի այս անդրանիկ դեսպանութիւնը՝ գործակալ Hasseltի ուղեկցութեամբ 1626ին եկաւ Ամստերդամ։ Դեսպանն էր ոմն Մուսա Բէգ, որին ընկերացել էր եւ մի պարսիկ վաճառական, Հիւսէյին Բէգ անունով, եւ որը "Շահի վաճառականի" տիտղոսն էր կրում իր գործը աւելի յաջողութեամբ յառաջ տանելու համար։

Հոլլանդայում ջերմ ընդունելութիւն ցոյց տուին այս պատգամաւորներին։ "Ընդհանուր նահանգները" նրանց հետ բանակցութիւն վարելու հոգը յանձնեցին նոյն ինք Ար. Հ. Ընկերութեան վարչութեան։ Թարգմանի պաշտօնը կատարում էր տեղացի մի հրեայ[1]։

Բանակցութիւնները յաջող արդիւնք չունեցան։ Պարսիկները իրենց առաջարկուած պայմաններին համաձայնութիւն չտուին եւ դաշնագիրը չկնքուեց։ Այն ժամանակ Հոլլանդացիք թէ Մուսա Բէգին եւ թէ Հիւսէյին Բէգին, իրենց

[1] Սպանիայից, Պորտուգալիայից բազմաթիւ հրեաներ էին գաղթել Հոլլանդա, ուր նրանք կրօնական ազատութիւն գտնելով հաստատուեցան, գլխաւորաբար Ամստերդամում, եւ շուտով կարեւոր դերք գրաւեցին։ Նրանք էին Արեւելքի հետ առեւտրի մեծագոյն միջնորդները։ Պորտուգալցի հրեաներն էին ազամանդի գործն այստեղ զարգացնողն, որով մինչեւ հիմայ էլ հռչակուած է Ամստերդամ։ Բնաբար, մօտ 50.000 հոգուց բաղկացած, հրեայ հասարակութիւն կայ Ամստերդամում։ Քաղաքի բնակչութեան ընդհանուր թիւը 650.000—700.000 է հաշւում։

հետեւորդներով նաեւ դրին, ուղարկեցին իրենց հնդկական գաղթավայրն, որ տեղից նրանք պարսից ծովով դարձան իրենց հայրենիք։

Համեմատաբար արդիւնաւոր եղաւ միայն "Հիւսէյին Բէգ"ի գործունէութիւնը[1]։ — Այս "Շահի վաճառականը" յաջողեցաւ իր բերած պարսկական ապրանքը, գլխաւորաբար մետաքսեղէն, լաւ գներով ծախել եւ փոխարէնը հոլլանդական գործարանների արտադրութիւնները, ասուեղէն եւայլն գնելով տարաւ հետը Պարսկաստան։ Այս ձեռնարկը շահագրգռեց Նոր Ջուղայի հայ վաճառականներին, որոնք այդ թուականից յետոյ ոչ միայն յարատեւ յարաբերութիւն մշակեցին Հոլլանդայի հետ այլ ունանք հարկաւոր համարեցան մշտականապէս հաստատուիլ Ամստերդամում, ուղղակի, այն է առանց հոլլանդացի, հրեայ կամ այլ միջնորդների՝ հոլլանդական շուկաներից օգտուելու համար թէ ներածութեամբ եւ թէ արտածութեամբ։

---

1 Հոլլանդական պատմիչները ժամանակակից նոտարների արձանագրութիւններից քաղելով հետաքրքրական մանրամասնութիւններ են հաղորդում այս պարսիկ վաճառականի ընթացքի վրայ։ Սա՝ հիմնուելով այն բանի վրայ թէ ինք "Ար. Հնդ. Ընկերութիւն" յանձնարարութեամբ էր եկել, ապրում էր ընկերութեան հաշուին, սաստիկ շռայլ կեանք էր վարում, մեծ ծախքեր էր անում եւ պարտքի տակ էր ընկել։ Ն. Հ. Ընկերութիւնը, այս պատճառով դժգոհ մնալով, պահանջել է նրանից, որ չաբաթական 50 ֆլորինից աւելի չծախսէ։ Բայց վերջապէս ստիպուել է նրան լիովին պոհացում տալ. եւ այնպէս ձամբել։ (Արձանագր. նոտար Iac. Hellerus 7 Յունվ. 1627։)

Բ.

Կիլիկեցիների արտագաղթը: Առեւտրական յարաբերութիւնները: Այս նաւահանգիստը Կիլիկիայում: Վենետիկ, Ջենովա, Վիվոռնոյ, Մարսէյլ: Ջուղայեցիների գործունէութիւնն առեւտրական հրապարակներում: Հայերը Ֆլանդրիայում: Հայ գաղութի սկզբնաւորումը Հոլլանդայում: Հոլլանդացի պատմագիրներն եւ հայերը: Հայոց բնակավայրն եւ թիւը Ամստերդամում: "Ասիական Ազգը": Գաղութի առեւտրական գործունէութիւնը: Հայ նաւեր: Գաղութի անդամների անունները: Գաղութի վախճանը:

Թողնելով աւելի հին ժամանակները, որոնց մասին ստոյգ տեղեկութիւնները քիչ են, հայոց առեւտրական յարաբերութիւնները Եւրոպայի հետ սկսում են ԺԲ. դարից, եւ կիլիկեցիք են եղած եւրոպական նաւահանգիստները դիմող առաջին ծանօթ հայ վաճառականները: Հայոց գաղթը Կիլիկիայից սկսել է Ռուբինեան հարստութեան վերջին շրջանում, երբ հայկական իշխանութիւնը շինջում էր եւ երկիրը սրածութեան եւ աւերի էր ենթարկուած: Այս դժբախտ ժամանակները շատերն աշխատել են աւելի ապահով տեղեր ապաստանիլ եւ գաղթել են փոքր Ասիայի մերձակայ կղզիները, Յունաստան, Իտալիա, Գաղղիա, Սպանիա եւ մինչեւ հեռաւոր Հոլլանդա: Այս ակամայ գաղթը տեւել է մինչեւ ԺԴ. դարի վերջն: Այնուհետեւ բուն

առեւտրական կանոնաւոր երթեւեկութիւնն է սկսել ԺԶ. եւ մանաւանդ ԺԷ. դարերում, եւրոպական վաճառաշահ նաւահանգիստների հետ, ուր հետզհետէ առեւտրականները տեւողական բնակութիւն հիմնելով առանձին գաղութներ են հիմնել։ Այս հոսանքը եղել է գլխաւորապէս դէպի Իտալիա, Գաղղիա եւ Հոլանդա։ Անգլիայի հետ երթեւեկութիւնն աւելի ուշ է սկսած քան Հոլլանդայի հետ, որովհետեւ հոլլանդացիք աւելի կանուխ են նաւագնացութեան ձեռնարկած քան անգլիացիք։

Իսկ եւրոպացիների կողմից՝ վենետիկցիք առաջինն են հանդիսացած. Նրանք դեռ եւս ԺԱ. դարից Կիլիկիա մուտք էին գործել եւ յարաբերութիւն սկսել Սիս, Ադանա եւ մանաւանդ Այաս, որ հայկական նաւահանգիստ էր։ Միեւնոյն ժամանակ Վենետիկ էլ առաջին քաղաքն է եղած, ուր Ռուբինեանց ժամանակ, հայ բնակչութիւն է հիմնաւորուած, թէեւ փոքրաթիւ։ Զարմանալի չէ այս, որովհետեւ դոժերի քաղաքը Միջինդարում թէ Արեւմուտքի եւ թէ Արեւելքի առեւտրի մեծագոյն կենդրոնն էր։ Վենետիկում ԺԳ. դարում գոյութիւն ունէր Հայոց Տուն կոչուած մի բնակավայր, եկուոր հայերի տրամադրութեան տակ։ Մշտական բազմամարդ գաղութ սակայն՝ ԺԶ. դարից է սկսած կազմուիլ, որ տեւած է մինչեւ ԺԸ. դարի վերջը[1]։

---

1 Հ. Ալիշան, “Հայ Վենետ„, Վենետիկ 1896։

Ինչպէս որ կիլիկեցիները վենետիկի հետ, այնպէս էլ, թէեւ աւելի ուշ ժամանակով, Հայաստանից դէպի Խրիմ գաղթած եւ կաֆայում հաստատուած հայերն էլ նոյն միջնադարում ընդարձակ յարաբերութեան մէջ էին ջենովացիների հետ: Ջենովան նոյնպէս նշանաւոր էր իր նաւագնացութեամբ եւ առեւտրով: Ջենովացիք մեծ ազդեցութիւն են ունեցած սեւծովի նաւահանգիստներում, առանձնապէս Խրիմում, ուր նրանք ապրանքների որոշ մաքս էին միշտ պահում:

Մի ուրիշ իտալական քաղաք, ուր հայերը եկել են ԺԶ. դարում եւ մնացել երկար ժամանակ, Լիվոռնոն է: Նրանք կարեւոր դեր են խաղացել այդտեղ իբրեւ առեւտրականներ: Առհասարակ այս եւրոպական զանազան նաւահանգիստներում հաստատուած հայերն իրենց մէջ սերտ յարաբերութիւն ունէին: Շատ անգամ միեւնոյն ընտանիքի անդամներն էին, որ ճիւղեր էին բաց անում այդ նաւահանգիստներում եւ իրար հետ շարունակ կապակցութեան մէջ գտնւում[1]:

---

1 Լիվոռնոյի մէջ հայոց հաստատուելու մասին հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում Շահան-Ջրպետ իր մի ձեռագիր գաղղիերէն գրուածքում, որ աւելորդ չենք համարում այստեղ յառաջ բերել.

"Cosme I, grand duc de Toscane, par un édit, qu'il fit publier en 1848, declara la ville de Livourne libre et ouverte aux commerçants de toutes les nations, en leur assurant des protections pour y exercer leur commerce. Dans la même année le patriarche d'Arménie Etienne V

կիլիկեցիներից յետոյ փոքր Ասիայի ներքին հայաբնակ քաղաքներից ձեռնարկու առեւտրականները դէպի ծովեզերք դիմելով հաստատուել են նախ Սիրեայում եւ ապա այնտեղից յարաբերութիւն սկսել Միջերկրականի եւրոպական նաւահանգիստների հետ։

Իսկ Սեւ ծովում առաջնակարգ նաւահանգիստ էր Տրապիզոնն, որ միջնորդի դեր է կատարել Հայաստանի մի մասի, բայց մանաւանդ Պարսկաստանի ու Եւրոպայի մէջ։ Դեռ մինչեւ վերջին ժամանակներս, Տրապիզոն՝ հիւսիսային Պարսկաստանի առեւտրի դուռն էր հանդիսանում դէպ ի եւրոպական ծովեզերքը։

Ծ.Ջ. դարի կէսերում յանկարծ, անապասելի կերպով երեւան են ընկնում ջուղայեցիք,

---

vint à Rome en personne pour avoir des conférences avec le pape Pie III (? Paul III) au sujet des affaires de l'Eglise. En passant par Florence ce patriache fut présenté au grand duc de Toscane qui lui fit beaucoup d'accueil. Il l'instrustit de l'édit qu'il venait d'annoncer et l'invita à engager les commerçants de sa nation à venir d'établir à Livourne. Le patriarche envoya aussitôt cette circulaire traduite dans sa langue à plusieurs maisons riches et commerçantes de la Grande Arménie, et après deux ans d'absence, de retour dans son siège patriachal à Erivan, il les engagea lui-même à aller dans cette ville pour y répandre leur commerce, et ce fut alors qu'une société d'Arméniens, au nombre de 15 personnes, s'établit vers 1553. Ce furent ces Arméniens qui produisirent les premiers dans cette ville ... la manière de travailler et de polir le corail„. "Notes de Chahan de Cirbied sur les Arméniens d'Amsterdam et de Livourne„, publiées par Frederic Macler. Ազգ, Փարիզ 1904, թ. 1.

այն էլ գրեթէ միաժամանակ այն բոլոր եւրոպական վաճառաշահ քաղաքներում, որոնք յարաբերութեան մէջ էին Մերձաւոր Արեւելքի շուկաների հետ։ Եւ միայն նոր-ջուղայեցիք էին սրանք։ Այս առեւտրական գործունէութիւնը սկսել են նրանց հայրերը, հին ջուղայեցիք, երբ դեռ դէպի Սպահան չէին տեղափոխուել, այսինքն 1605ից յառաջ։ Հինների գործն է, որ շարունակել են նորերը, աւելի մեծ չափերով եւ աւելի մեծ արդիւնքով։ Նրանց հետ միասին, կամ նրանց օրինակին հետեւելով եկել են նոյն նպատակներով եւ տոպա եկողներ նաեւ պարսկաստանի սահմանակից հայկական գաւառներից առեւտրականներ, ինչպէս ղարաբաղցիք, ղափանցիք, զանգէզուրցիք եւ ագուլեցիք եւ սրանք ամէն տեղ իրանց կոչել են նոյնպէս "ջուղայեցի", մանաւանդ որ բարբառի կողմից էլ մօտ էին ջուղայեցիներին, բացի ագուլեցիներից, որոնք իրենց ցեղական բարբառն ունէին, զոկեբէնը[1]։

---

1 Ջուղայեցիք՝ ձէ։ դարի կէսերին մեծ գործունէութիւն են ցոյց տուել նաեւ Գաղղիայում, յատկապէս Մարսէյլում։ Նրանք այստեղ եւս Պարսկաստանից հում մետաքս էին ներմուծում։ Պ. Մակլէր հետաքրքրական մի պաշտօնական վաւերագիր է հրատարակած, որտեղ կարդում ենք.

"A Mons. Le Lieut(ena)nt Ge(ner)al de l'ad(mirau)té, suppliant (sic) humblement Coadgy Farat, Nontiat et Jean Baptiste, marchands de la ville d'Espan (sic) en Arménie, subjects du Roy de Perse *եւ այլն* (Revue des Etudes Arméniennes, T. II, Fasc. I, 1922, fol. 25).

Այստեղ, ինչպէս եւ ուրիշ թղթերի մէջ յիշուած Coadgy *կամ* Codgy *պարսկահայոց սովորական խօջի-խօջա*

Հոլլանդայում Հայոց յիշատակութիւնը պատմութեան մէջ, սկսում է ԺԲ. դարից։ Նրանք երեւում են նախ Գելանդրիայում, յատկապէս այս

բառն է. Espan քաղաքը յայտնապէս Սպահանն է որի մօտն է Նոր-Ջուղան։ En Arménie դրուած է պարզապէս ցոյց տալու համար այդ վաճառականների հայ կամ Հայաստանցի լինելը։ Իսկ վերջին subjects du Roy de Perse բառերն ոչ մի տարակոյս չեն թողնում այս մասին։ — Մի ուրիշ վաւերագրում էլ պատմուում է թէ "Մի քանի հայ վաճառականներ Հռոմից Պարիս են եկել, իրենց հետ բերելով յանձնարարական նամակներ գլխաւոր կարդինալներից յանուն Պապի Պատուիրակին, բազմաթիւ նախարարներին եւ այլ Ընքուենի Դրան պաշտօնեաների, որպէս զի պաղպիական թագաւորից հրաման ձեռք բերեն որ հայերն իրաւունք ունենան Գաղղիայի բոլոր մեծ քաղաքներում հաստատուելու ...„։

Հռոմի ցոյց տուած այս հովանաւորութեան պատճառն էլ այն է, որ "այս հայերը իրենց ծախքով եկեղեցի էին կառուցել Ցիսուսեան կրօնաւորների համար, Իսպահան քաղաքի Ջուլֆա թաղում ...„։

Ջուղայեցիների այս ձեռնարկից յետոյ, որ նրանց հետեւել են Ջմիւռնիայից ուրիշ հայեր. "Ջմիւռնիացի հայ վաճառականներ, Obro եւ Ferpuis Georgi անուններով, խնդրեցին, որ իրենց էլ արտօնութիւն արուի Մարսէյլի հետ առուտուր անելու այն պայմաններով, ինչպէս չնորհուած Պարսկաստանի հպատակ հայերին ...„։ Անդ էջ 45։

Ինչպէս երեւում է այս մեռաքսի առուտուրն է, որ Ջուղայեցիներին ԺԷ. դարի սկիզբը բերել է եւրոպական գլխաւոր նաւահանգիստները։

Պարսկաստանի մեռաքսը մինչեւ 1634 բերում էր Ջմիւռնիայից նախ Մարսէյլ եւ ապա այստեղից ուղարկուում էր Եւրոպայի միւս կողմերը, ի մէջ այլոց եւ Հոլլանդա, որովհետեւ գաղղ. կառավարութիւնը ածան մաքսս էր առնում, այն է ամէն մի հակին 16 ֆրանք։ Բայց երբ 1634 ին Գաղղիա այս հարկը չինեց 112 ֆրանք, այն ժամանակ այս արտաճումը դադարեցաւ։ Այնուհետեւ ուրիշ եւրոպ. երկիրներ, որոնց թւում Անգլիա եւ Հոլլանդա, Ջմիւռնիայից եւ առհասարակ Մերձաւոր Արեւելքից ուղղակի սկսան բերել տալ։ Անդ էջ 40։

. գաւառի գլխաւոր քաղաք Բրիւժում (Bruge)[1], որ այն ժամանակ ինչպէս այժմ, կարեւոր առեւտրական նաւահանգիստ էր եւ յարաբերութեան մէջ էր Վիլնկիայի նաւահանգիստ՝ Այասի հետ: Թաթարական եւ արաբական արշաւանքների ժամանակ եւ մանաւանդ հայկական իշխանութեան դադարումից յետոյ կիլիկեցիներից ոմանք տեղափոխուել, ապաստանել են հոլանդական նաւահանգիստները: Դեռեւս ԺԲ. դարում Բրիւժում կար մի քաղաքային ապաստանարան՝ սարակիններից արշաւանքից փախած արեւելքցիներին ապաստան տալու համար: Ահա այս ապաստանեալների թւում են յիշվում առաջին անգամ մի քանի հայ: Այս փախստականները խնամւում էին հասարակական նպաստներով, որոնք հանգանակվում էին հոլանդական համ Ֆլաման քաղաքներում, իբրեւ "ողորմութեան տուրք":

Մասնաւորապէս իբրեւ վաճառականներ՝ հայերի մասին յիշատակութիւն կայ 1340ին, բայց նրանք քիչ են մնացել. 1354ին հեռացել են եւ 4 տարի յետոյ նորից երեւացել: Նրանք գորգի առեւտրով էին պարապում, որովհետեւ ըստ նոյն պատմագրի նոյն դարի (ԺԴ.) վերջերը "հայերին եւ թիւրքերին արտօնուած է եղել Բրիւժում[1], եկեղեցու առջեւ, հրապարակի վրայ

---

1 Bruge, Բրիւժ, կամ Ֆլամաներէն Բրիւգգէ (Brugge) այժմ բելգիական կարեւոր նաւահանգիստ է (1830ից), բայց այն ժամանակ հոլանդական ընդհանուր հող էր:

իրենց ապրանքը, այսինքն բերած կապերտները ծախելու[1]„: Արդեօք այս “Թիւրքերը„ նոյնպէս Հայ չէի՞ն, բայց Թրքահպատակ. Ճիշդ այնպէս ինչպէս որ պարսկահպատակ ջուղայեցիներին հոլլանդացի պատմագիրներից ոմանք, ըստ պաշտօնական արձանագրութեան, պարզապէս “պարսիկ„ են կոչում: Յամենայն դէպս, յայտնի է, որ նրանք ԺԵ. դարում այնքան շօշափելի թիւ են կազմել, որ իրենց “ազգային տունն„ են ունեցել (1478ին), որ պանդոկի տեղ էր ծառայում Հայոց: Նրանք նոյն իսկ հայ քահանայ էլ են ունեցել, որ իր եկեղեցական պաշտամունքը կատարում էր տեղւոյն կարմելական կարգի եկեղեցում:

Մի ուրիշ Ֆլամանական քաղաքում, Gand (կամ Ֆլամաներէն Gent) պատուի է արժանացել մի հրաշագործ Հայ, Ս. Մակար, որ վախճանուել է այնտեղ ԺԱ. դարում:

ԺԴ. եւ ԺԵ. դարում Ֆլանդրիայում գտնուող Հայերն անշուշտ երթեւեկել են մերձակայ քաղաքներն եւս նոյն հոլլանդական երկրում: ԺԶ. դարումն է, որ առաջին անգամ յիշվում է Հայոց գալուստը Ամստերդամ, 1560—1565ին: Նրանք եկել են այստեղ իրենց բերած մարգարիտներն եւ ադամանդները ծախելու[2]: Բայց միեւնոյն ժամանակ նրանք հոլ-

1 Ալիշան, Սիսական, Վենետիկ 1893:

2 Մի հին հոլլանդական պատկերազարդ ալբոմում (album) արեւելեան տարազով մի մարդու պատկեր կայ, որի տակ գրուած է հոլլանդերէն լեզուով “խոշոր ադամանդավաճառ մի Հայ„: Armenier die te Amsterdam groote diamant loot verkoopen. Catal. Muller, IV, 4166.

լանդական ապրանք էին գնում եւ արտահանում Թրքական նաւահանգիստները։

Բայց Ամստերդամի հետ հայերը կանոնաւորապէս երեսփոխութիւն սկսել են ԺԷ. դարի սկիզբներից։ Նրանց այստեղ հաստատուիլը հոլլանդացի պատմագիրներն այսպէս են բացատրում։ Van Emdre *ասում է. "ԺԷ. դարում, հայոց երկրի մի մասը պարսիկների կողմից յարձակման եւ աւերման ենթարկուելով, հայերը ստիպուած են եղել այնտեղից գաղթել. նրանցից ոմանք եկել են եւ հիմնուել Ամստերդամում[1]"։ Հեղինակն այստեղ ակնարկում է Շահաբասի յարձակումը Հին Ջուղայի եւ Սպահանի վրայ 1605ին եւ հայոց տարագրումը։ Մի ուրիշ պատմագիր, որ ապրում էր ԺԸ. դարում եւ անձամբ ճանաչում էր Ամստերդամի հայերին, իր բազմահատոր "Ամստերդամի պատմութեան" մէջ դնում է տեղական հայ եկեղեցու պատկերն եւ բացատրում է հայ գաղութի հիմնուելն աւելի ճշտօրէն. այն է թէ Առեւտրական յարաբերութիւնների զարգանալը Զմիւռնիայի եւ Մերձաւոր Արեւելքի այլ տեղերի հետ, ԺԷ. դարի սկիզբները Ամստերդամ բերին հայ քրիստոնեաներ, որոնք հետզհետէ հաստատուեցան այստեղ եւ եկեղեցի կանգնեցին[2]։*

---

1 S. Van Emdre, Historisch Berigt van alle de Gezindheden. Utrecht 1784, էջ 65.

2 "Amsterdam in zyne opkomst" etc. Door Jan Vagenaar. Amsterdam 1765. VIII հատ., էջ 124—126, 219. *տես նաեւ* II, 533։

Նորագոյն պատմագիրը, N. De Roever, որ առիթ է ունեցած մասնաւորապէս զբաղելու Ամստերդամի հայ գաղթականութեան կեանքով, մի ամբողջ ընդարձակ գլուխ է նուիրած այս հարցին, որից եւ մենք գլխաւորաբար օգտվում ենք այս հայ համայնքի սկզբնաւորութիւնը, գործունէութիւնն եւ վախճանը պատմելու համար[1]:

Կան նաեւ այլեւայլ հոլլանդական հրատարակութիւններ եւ ձեռագիրներ, որոնց մէջ դրուած են զանազան հետաքրքրական տեղեկութիւններ, որ մենք կը յիշենք իւրաքանչիւրն իր յատուկ տեղում:

Ինչպէս Ա. գլխում պատմեցինք, 1612ին կապուած է Թուրք-հոլլանդական դաշնագիրը, որի շնորհիւ առեւտրական յարաբերութիւնները իսկոյն ընդարձակ չափեր առին երկու երկիրների մէջ, հոլլանդական ապրանքները շուտով գրաւեցին Մերձաւոր Արեւելքի հրապարակները եւ ամէն տեղ սկսան փնտռուիլ: Միեւնոյն ժամանակ լուր տարածուեց Ջմիւռնիայում եւ շրջակայքում թէ արեւելեան ապրանքներն էլ հոլլանդական նաւահանգիստներում եւ առանձնապէս Ամստերդամում մեծ վաստակով են ծախ-

---

1 N. De Roever, "Mit onze Oude Amstelstadt„. Amsterdam, S. L. Van Loy, 1891. III հատոր, էջ 1—19. De armenische Kerk en gemeente. ("Մեր հին Ամստէլքաղաքը, այսպէս էր կոչվում Ամստերդամ՝ Ամստէլ գետից առնելով, որի վրայ նա հիմնուած է„, "Հայ եկեղեցին եւ համայնքը„.

վում: Այս լուրերը բնականաբար հայերի հետաքրքրութիւնը շարժեցին, որոնք եւ էվարանեցան անձամբ Հոլլանդա գալով փորձել իրողութիւնը: Նրանք հետաքննեցան, հիմնուեցան Ամստերդամում եւ. այնուհետեւ թոթափեցին Հոլլանդական վաճառականների միջնորդական լուծը:

Բոլոր օտարականները, որոնք Ամստերդամ էին գալիս իրենց բերած ապրանքը ծախելու, կամ տեղական, Հոլլանդական ապրանք էին գնում արտածելու նպատակով, այս գործողութիւնը կատարում էին տեղւոյն Սակարանում: Քաղաքային յիշատակարանները վկայում են, որ 1617ին հայերը ընդարձակ գործեր են կատարել Սակարանում, որից երեւում է, որ նրանք աննշան թիւ չէին կազմում եւ հաստատուած էին արդէն, այլապէս չէին կարող Սակարանում մուտք ունենալ: Վերոյիշեալ De Roever, որ ինչպէս ինքն է ասում, հայ գաղութի մասին ամբողջական գաղափար կազմելու համար "քրքրել է Ամստերդամի բոլոր քաղաքային եւ նոտարական արձանագրութիւնները", երկու հայի անուն է միայն յիշատակում, այն էլ 1627 թուին — "Godge Sarhadt եւ Jan Sacharis: Բայց մենք ունինք մի ուրիշ աղբիւր եւս, որ վկայում է անհերքելի կերպով, թէ նոյն 1627ին Ամստերդամում բնակվում էին ուրիշ հայ վաճառականներ եւս, որոնք յարաբերութեան մէջ էին թէ Արեւելքի եւ թէ ուրիշ եւրոպական նաւահանգիստների հետ:

Իտալիայի Լիվոռնոյ վաճառաշահ քաղաքի թանգարանում գտնվում է հոլանդերէն լեզուով գրուած մի պայմանագիր, որի վրայ իտալերէն լեզուով նշանակուած է. "Contratto fatto tra Jan Steen e gli Armenij in Amstelodamme„: Այս վաւերագրով Ամստերդամցի 6 հայ վաճառական՝ պայմանաւորվում են Jan Steen հոլանդացի նաւապետի հետ, որ սա Ամստերդամից նրանց ապրանքը բերէ Լիվոռնոյ: Պարագրութեան տեղ դրուած են վաճառականների անուանական կնիքները, որոնց վրայ կարդացվում են Սարհատ, Զաքար, Օհան, Մարկոս, պետրոս եւ Յովակիմ: Թուականն է 21 Նոյեմբեր 1627[1]:

Որչափ էր այն միջոցին հայոց թիւն Ամստերդամում. ոչ մի տեղ որոշ տեղեկութիւն չկայ: Ըստ De Roeverի, որ դարձեալ ամենաարժանահաւատ աղբիւրն է, երբ 1617ին, ինչպէս գիտենք, Ս. Պօլսում հոլանդական տների թիւը ընդ ամէնը 17 էր, ընդհակառակն 1660ին Ամստերդամում գտնուած 'ասիական, տները դրանց քառապատիկից էլ աւելի էին„: Այս հաշուով ութսմն առ նուազն 70 տուն, այսինքն առեւտրական տուն: Հետաքրքրական է այս ասիական կոչումն եւ բացատրութեան կարօտ:

Ամստերդամում բնակութիւն հաստատած հայ՝ երբ թէ բնիկ Փոքր Ասիացի էին եւ թէ ա-

---

1 Bronnen tot de geschiedenis van den Levantschen Handel, 1590—1660. Dr. K. Heeringa, s'Gravenhage 1910, էջ 96.

ուաւելապէս պարսկաստանցի (ջուղայեցիք)։ Այս վերջիններըը արձանագրուած են պարզապէս քրիստոնեայ պարսիկներ, իսկ առաջիններըը հայ, նոյնպէս քրիստոնեայ եւ զմիւռնիացի։ Այս պարսիկ կոչուածն այնչափ տարածուած էր, որ Հոլլանդացի պատմագիրներըը Ամստերդամի հայոց եկեղեցին, որ ջուղայեցիք էին կառուցել, ուղղակի "պարսկական եկեղեցի" էին կոչում, իսկ ժողովուրդը, թէ սրանց եւ թէ զմիւռնիացիներին յաճախ "ասիական ազգ" են անուանում։

Ջուղայեցիք, նոր եկողներըը, կամ առաջին անգամ այստեղ հաստատուողներըը բնականաբար անծանօթ էին տեղական լեզուին եւ կարգերին, ուստի ստիպուած էին միջնորդ-թարգմանի օգնութեան դիմել։ Այս դերըը կատարել են նրանցից յառաջ Ամստերդամ եկող մի քանի պարսկագէտ հրեաներ։ Առանձնապէս յիշվում է 1626ի քաղաքային արձանագրութիւններից մէջ, ուր Isaac Chamys (Իսահակ Խամայս կամ Խամիս), որի մասին ուր François Vinçon վկայութիւն է տալիս թէ "իր ընկերակից Խամիս վերջին 4 ամիսը նուիրուած էր ամբողջապէս՝ Ամստերդամ եկող հայ վաճառականներին. սրանց համար արտաքոյ կարգի նեղութիւն է կրել, մեծ գործեր է կատարել, նրանց բերած ապրանքներըը ձախելով թէ անձամբ եւ թէ ուրիշ միջնորդների միջոցով։ Եւ որովհետեւ այս հայերըը, շատունակում է արձանագրութիւնը, Հոլլանդերէն չգիտէին, ուստի Իսահակ միջնորդում էր նրանց

եւ Հոլանդացի յաճախորդների մէջ, հաշիւների կարգադրութեան, դրամի գանձման եւ այլ գործերին, ինչպէս նաեւ քաղաքային վարչութեան հետ յարաբերութիւններին դիւրութիւն ընծայելով։ Խոմիս միջնորդ էր հանդիսանում նոյն իսկ իրենց, հայ վաճառականների մէջ ծագած տարաձայնութիւնները հարթելու համար։ Այս կերպով, ամէն ուրիշ ղեկավարութիւնից զատ նա հայերից առատ վարձատրութիւն է ստացել[1]»։ Բայց այս առաջին հայերից յետոյ գալիս են ուրիշ վաճառականներ, որոնց մասին նոյն պատմագիրը վկայում է թէ «նրանց մեծ մասը կրթուած մարդիկ էին եւ իրենց մայրենի լեզուհայերէնից զատ խօսում էին նաեւ իտալերէն եւ գաղղիերէն։ Սրանք այս լեզուներով էին գործ տեսնում հոլանդացիների հետ»։ Պատմագիրը աւելացնում է թէ ընդհակառակ իրենց «կրթուած» լինելուն, այս հայ վաճառականները սովորութիւն ունէին ստորագրութեան փոխարէն «իրենց ազնուական կնիքները դնելու»։

Հայ գաղութի գոյութիւնն եւ գործունէութիւնը Ամստերդամում տեւել է մօտաւորապէս 200 տարի, իբրեւ առանձին համայնք, որ նշանաւոր դեր է կատարել ոչ միայն իր առեւտրով, այլ իր տպագրական աշխատութիւններով եւ իր եկեղեցիով։ 1660 թուականից նրանք արդէն երեւում են իբրեւ բաղմամարդ «ասիական ազգ», գրաւելով քաղաքի արեւել-

---

1 De Roever, անդ, գ. հատոր, էջ 7—8։

եան մասն, ուր ապրում էին խմբուած, իրար մօտ։ Այդ մասն, ուր միեւնոյն ժամանակ իրենք առեւտուր էին անում, նախ "Նոր Շուկայ, (Niewe markt) էր կոչվում եւ ապա երբ բազմացել են եւ բոլորովին այնտեղ հաւաքուել, սկսել է "Արեւելեան Շուկայ. (Ooster markt) կոչուիլ։ Այս թաղն, որ մենք անձամբ պտտել ենք, այժմ քաղաքի ետ ընկած մասն է, որովհետեւ Ամստերդամ այնուհետեւ, այսինքն ԺԹ. դարից յետոյ, մանաւանդ վերջին քառորդ դարի ընթացում սաստիկ աճած եւ ընդարձակուած է, բոլորովին նրա հակառակ կողմի տարածութեան վրայ։ Հայերը բնակուել են հեռեւեալ փողոցներում։ Monnikenstraat (կրօնաւորաց փողոց), Koningstraat (թագաւորական փողոց), Dykstraat (թումբի փողոց), Keizerstraat (կայսերական փողոց) եւ Boomsloot (ծառի ջրափ)։ Բնակութեան սովորութիւնն էլ այսպէս է եղել։ Գաղութի հին անդամներից կամ ունեւորներից մէկը վարձում է եղել մէկ կամ աւելի մեծ տուն, յատկապէս նոր եկողներին պատսպարելու համար եւ սրանց մաս առ մաս վարձու է տուել։ Այս տներում, ինչպէս եւ այդ "Արեւելեան" կոչուած թաղում նրանք ընդհանրապէս ապրել են համերաշխութեամբ, կամ ինչպէս հոլանդացիք վկայում են՝ եղբայրաբար։ Բայց ի հարկէ երբեմն վէճ էլ էր ծագում նրանց մէջ, այն ժամանակ տեղական հայ քահանան միջամտում եւ խաղաղեցնում էր։

եղել են հայեր, որոնք լեզուն սովորելու նպատակով ապրել են հոլանդացիների մոտ, հոլանդական պանսիոններում (pension)։ Այսպիսիները կարճ ժամանակում իւրացնում էին տեղական լեզուն եւ թարգմանի կամ միջնորդի դեր էին կատարում մի ս գլխաւորաբար նորեկ հայերի համար, որով օտար թարգմաններին այլ եւս հարկ չէ ճնացել դիմելու։ Բայց այսպիսիները հետզհետէ այնքան էին մտերմանում հոլանդացիների հետ, որ ամուսնանում էին հոլանդացի աղջիկների հետ եւ Ամստերդամի քաղաքացիները դառնում պաշտօնապէս։ Նրանք պարծենում են եղել իրենց հոլանդերէնի համառօտ թեամբն եւ շատերը փոխել են իրենց հայ անունները անճանաչելի դառնալու աստիճան։ Արձանագրութիւնների մէջ առանձնապէս յիշուած են այսպիսի երկու դէպք։ Serkis Bogos իր անունը վերածել է Joris Pauluszի, իսկ Eghia di Petros դարձել է Elias Pietersz։ Շատ յաճախ է մանաւանդ di մասնիկի գործածութիւնն, որ երեւում է մինչեւ իսկ գաղութի վերջին ծնացորդների անունների մէջ։

Հոլանդա եկող հայերը բնականաբար հիմնուել են եւ գաղութ են կազմել միայն Ամստերդամում, իբրեւ ամէնից կարեւոր եւ վաճառաշահ քաղաքում։ Այստեղից նրանք առեւտրական նպատակներով գնացել են երկրի միւս կողմերը, մանաւանդ այնտեղ, ուր իրենց փընտուած ապրանքների գործարանները կային։ Ոմանք էլ ապրանք են բերել տուել ուղղակի հոլ-

լանդական ուրիշ նաւահանգիստներն եւ այնտեղ ծախել, բայց իրենք այնտեղ բնակութիւն չեն հաստատել[1]:

Ամստերդամի հայոց առեւտրական գործունէութիւնը տարածվում էր Հոլլանդայից դուրս ուրիշ երկիրների վրայ էլ: Նրանցից ոմանք իրենց տները կամ ճիւղերն ունէին Վենետիկում, Լիվոռնոյում, Մարսէյլում եւ նոյն իսկ Սպանիայում, ուր գտնւում էին իրենց ազգականները եւ որտեղից ապրանք էին ստանում, կամ ուր իրենք էին ուղարկում Հոլլանդայից: Ջմիւռնիայից, Սիրեայից եւ առհասարակ Արեւելքից իրենց ստացած ապրանքների մէջ կային այն տեսակները, որոնք ուրիշ նաւերի վրայ բեռնաւորվում էին աւելի վերերը, դէպի Հիւսիս, Բալտեան ծովեզերեայ քաղաքները եւ այնտեղից ստանում էին դրանց փոխարէն ուրիշ ապրանք, առանձնապէս սաթ (ambre jaune), *որ մեծ յարգ ունէր Ջմիւռնիայի հրապարակի վրայ: Կային այստեղ անշուշտ պարզ յանձնակատարներ* (commissionnaire) *եւն, որոնց գերը կայանում էր՝ իրենց անունով Ջմիւռնիայից կամ ուրիշ տեղերից ուղարկուած ապրանքն*

---

[1] Հ. Ալիշան՝ Վենետիկի քաղաքային արձանագրութիւնների հիման վրայ գրում է Սիսականում. "ի նմին ժամանակի (1668) Ցուվհ. Եաւրի ի Վենետկոյ առաքեալ էր 24 հակ մետաքսի ի Guob(?) քաղաք Հոլլանդայ եւ այլք նոյնպէս առաքէին մետաքս եւ առեւ„ (Սիսական, Վենետիկ 1893, էջ 459): Այս Guob բառն անշուշտ սխալ ընթերցուածի հետեւանք է. պէտք է ուղղել Zwolle, որ կարեւոր նաւահանգիստ է Zuiderzee ծովածոցի վրայ:

այստեղ ծախելու կամ Հոլլանդական ապրանքներ գնելու եւ ուղարկելու մէջ, ուրիշների հաշուին։

Հայ վաճառականների մէջ եղել են այնպիսիներ, որոնք նշանաւոր հարստութիւն են դիզել, բայց կային նաեւ այնպիսիներ, որոնք կամ քիչ յաջողութիւն են ունեցել կամ յոլորովին աննպաստ ձեռնարկութիւնների են մատնուել եւ թողել հեռացել են։ Եղել են յաճախ դրամական տագնապի մէջ գտնուողներ։ Քաղաքային նոտարների տետրակներում կան յիշատակութիւններ, որոնց նայելով 4000 կամ 5000 ֆլորինի մուրհակներ մնացել են անվճար, բողքուել են եւ տէրերը դատի են կոչուել Հոլլանդացի-վաճառականների կողմից։

Հայ վաճառականները եկել են Ամստերդամ ժամանակաւորապէս։ Նրանք, որոնք առանձնապէս յաջողութիւն են ունեցել, բերել են տուել իրենց ընտանիքներն ու զաւակները եւ հաստատուն բնակութիւն հիմնել։ Իսկ նրանք, որոնք եկել են ամուրի եւ կամ Հոլլանդացիների հետ առեւտրական ընկերութիւն կազմելով, կամ տեղացի աղջիկների հետ ամուսնանալով հաստատ եւ մնայուն կապեր են ստեղծել, նրանք վերջնականապէս տեղաւորուել են եւ քաղաքացի արձանագրուել։

Հայոց ներմուծած ապրանքն էր պարսկաստանի հում մետաքս, մետաքսեղէն գործուածներ, մազեղէն կամ մորթեր եւ վերջերը նաեւ կաֆէ, զանազան եղեր եւ գինի։ Իսկ Հոլլանդայից ար-

տածում էին տեղական գործուածք, աստեղէն, մանածոյ կերպասեղէն, կահ կարասիք եւայլն։ Մեծ առուտուրի նիւթ էր նաեւ հոլանդական տնային զարդի առարկաներ։ Առհասարակ, ինչպէս հոլանդացի պատմագիրներն էլ վկայում են, հայերը հոլանդացի գործարաններին, մանաւանդ աստեղէնների լաւագոյն յաճախորդներն են եղած։

Հայերը պարսկական մետաքս ներմուծել են նաեւ Մոսկուայի ճանապարհով։ Ընդհանրապէս այս մետաքսի առուտուրը ԺԷ. եւ ԺԸ. դարերում, մանաւանդ 1700—1765ի շրջանում հայերի ձեռքն է եղել, ոչ միայն Հոլանդայում, այլ եւ Իտալիայում եւ Գաղղիայում։ Մոսկուայի ճանապարհով հայերը հոլանդա էին բերում նաեւ բրինձ, անշուշտ պարսկաստանից, որ այդ պատճառով էլ այստեղ "Մոսկովեան բրինձ" կոչուճն էր կրում։

ԺԷ. դարի միջնիքին, Ամստերդամի հայերից ոմանք, իրենց առեւտրի դիւրութեան եւ ապահովութեան համար, սեփական նաւեր եւ ունէին, որոնք հոլանդական դրօշի տակ էին նաւարկում։ Այս դրօշակը հարկաւոր էր, ինչպէս տեսանք, թրքական նաւահանգիստները հոլանդական ապրանք մտցընելու համար։ Այսպիսի 2 նաւի յիշատակութիւն ենք գտնում Լիվոռնոյի հոլանդական հիւպատոս Van der Stratenի իր կառավարութեանն ուղարկած տեղեկագիրներում։ Սա գրում է 1653 Ապրիլ 21ին թէ 7 հոլլ. մարտանաւ ուղեկցում են 5

առեւտրական նաւերի, որոնց 4ը գնում էին Միջերկրական Արեւելք, իսկ 1ը վենետիկ: Ինչպէս յայտնի է, այն դարերում Միջերկրական ծովը վխտում էր ծովահէններով, որոնց դէմ պաշտպանելու համար հարկ էր լինում մարտանաւերի ուղեկցութիւնը: Այս առեւտրական նաւերի թւում կային 2ը, որոնք կրում էին Coopman van Armenien (Հայաստանի վաճառական) եւ Coopman van Persien (պարսկաստանի վաճառական) անուններն եւ ըստ ամենայն հաւանականութեան հայոց էին պատկանում: Նոյն հիւպատոսը 1693 Մայիս 5ին տեղեկագրում է թէ "Gelderland մարտանաւը, որ Յունվար 6ին ուղեկցում էր De Armenische Coopman (Հայ վաճառական) նաւին, ամիս սկիզբը երկուքն էլ անվնաս հասել են Զմիւռնիա.: Ուրիշ մի հիւպատոսական տեղեկագիր 1654 Մայիս 29ին հաղորդում է թէ Զմիւռնիայում սպասում էին 3 հոլանդական նաւ, որոնց թւում՝ Coopman van Armenien եւ Coopman van Persien: Սրանք հայ եւ հոլանդացի վաճառականներից ապրանք չկարողանալով ստանալ, յանձն են առել գաղղիական ապրանք բեռցնել: Ցետոյ յիշում է թէ 5 հոլանդական նաւեր, որոնք ըստ երեւոյթին նոյնպէս հայոց էին պատկանում, բեռն են սպասում Զմիւռնիայում[1]: Վերյիշեալ Armenische Coopman նաւին մենք պատահում ենք դարձեալ 1689ին, երբ նա Ամստերդամից

---

1 Bronnen եւայլն K. Heeringaյի, էջ 173 եւ 612.

եկել է բեռով. Զմիւռնիա. վերջին յիշատակութիւնը, որ գտնում ենք հաւանականաբար հայ նաւի մասին, 1714ին է. այս նաւը կրում է Smirnsche Coopman (Զմիւռնիայի վաճառական) անունը եւ այն թուականին գտնվում էր Զմիւռնիայի նաւահանգստում։

Հ. Ալիշան իր Սիսականի մէջ, Հոլլանդայի հայ գաղութի մասին խօսելիս, յիշատակում է բազմաթիւ հայերի անուններ, որոնք բնակուել են Ամստերդամում։ Աւելորդ չենք համարում այս մասն ամբողջապէս յառաջ բերել այստեղ.

“Ի ժամանակի առաջնոց տպագրութեանց յԱմստերդամ, ի յիշատակարանս գրոցն յիշին ազգայինք ոմանք. եւ զատ ի Նոցանէ Սէֆէր ոմն (1658—1659), որոյ վէճ էր եւ պահանջ ի Ֆան Հալսդ Հոլանդացւոյ. Յակոբ որդի Ստեփանի (1667) նոյնպէս պարտատէր Հոլանդացի վաճառականաց։ Մովսէս Գալուստեան վաճառական Անկիւրական ստեւոյ, ընդ նմին եւ Գր. Սարուխան (1667)։ Թերեւս սակաւ ինչ յետ սոցա՝ Առաքելն այն ծերունի վաճառական, որ ամի ամի հանեալ ի Կիլանայ[1] բերէր մետաքս 5 միլիոն արժէից, տանէր յԱմստերդամայ ի Սպահան ազգ ազգ աղխամաղխի, յորս ի դէպ է զառաջին տեղին ունել չուխայից։

Վաղու իսկ ձգեալ էր Հոլլանդացւոց առ ինքեանս զմետաքսաբեր Հայս, յորժամ (1633)

---

1 Պարսկաստանի մի նահանգ։

ոչ յաջողեցաւ դքսին Հոլշտային համոզել լինել մեծի դքսին Մոսկովաց՝ թոյլ տալ մետաքսաբերացն գալ ի դաստակերտն իւր Գրէտէրիկշտատ։ Մինչեւ ցվերջ ԺԸ. դարու եւ անդր եւս յաճախէր Ամստերդամ երթեւեկ վաճառականաց Հայոց, որոց շատութեան՝ միանգամայն կրօնասիրութեան վկայէ ի ժամանակի շինութեան նորոյ եկեղեցւոյն (1717), տպագրութիւն համառօտ ժամագրոց վասն վաճառականաց, որպէս եւ կոչի գրքոյկն։

Ցիշխին յայնժամ յանուանէ Պր. Թարխան որդի Խոճայ Քանանի, Պր. Աւետ, Պր. Սահրատ, որք ետուն նկարել զպատկերս եկեղեցւոյն եւ ստոլագրել զանուանս իւրեանց։ Աղամալ որդի Ծատուրի, Սահաթմալ, Մանուէլ որդի Աղամալի, Մարութէ որդի Տէր Պաւղոսի, Պետրոս որդի Գուրգէնի. տատն ամօք յետոյ Պետրոս որդի Ցովհ. Խոշկաշինեցւոյ, Ցարութիւն Գարագաշ Կ. Պոլսեցի, առ որով քահանայ նոցա Տէր Եղիսէ գժտեալ ընդ ժողովրդեանն վտակեաց զեկեղեցին առ վայր մի. ապա գուն գործէր բանալ եւ զտպագրատունն, մինչ վաճառեալ իսկ էր կէս տատից։

Ցամի 1741 յիշին Խոճամալ որդի Գրիգորի, Ցովհաննէս որդի Ցակոբջանի, Պօղոս որդի Ոսկանի, Նազարէթ որդի Մկրտումի, առ որով եւ յետոյ վերանորոգէր զեկեղեցին՝ Ամատեացին Ցովհաննէս վարդապետ, որ յօրինեաց Բառագիրս Հայ-Լատին, եւ մի ի յաջորդաց նորա Տէր Ցովհ. Բագրատունի որդի Սիւնեացի Սարդարի,

աշակերտ Ղազարայ կաթողիկոսի կամէր տալ տպագրել ի Վենետիկ (1790)։

Էին առ սոքօք եւ տանուտեարքն տեղաբնակք, որպէս Ագուլեցին Պետրոս, որ կին աձէր ի Զօֆճեան տոհմէ (1765), փարթամն եւ բարեպաշտօն Առաքել որդի Պօղոսի, † 1773, որ կամէր թաղել ի հին եկեղեցւոջն առ որդւոյ իւրում, իսկ միւս որդին եւ ժառանգ բաղրամ յայնժամ ի Մոսկուա էր, եւ եկեալ դատ վարէր յերկար ընդ Շէհրիմանեանց. կտակատարքն հօրն էին անդ, Առաքել որդի Եսայեայ, Սաւալան, Ալեքսանդր որդի Մասէի, Աւետիս որդի Աստուածատրոյ, ընդ որս եւ Սողոմոն որդի Դանիէլի եւ Դինա սպասաւոր եկեղեցւոյն։ Բաղրամ յիշի ցվերջ կոյս դարուն իբրեւ գլխաւոր նուաղեալ վաճառականացն, եւ համախոհ Ցովհաննու սիրակոս եղանովիչ կոչեցելում եւ Բագրատունւոյն, որք ոչ կամէին փակել եւ վաճառել զեկեղեցին եւ զՀոգեստուն, որպէս ստիպէր կաթուղիկոսն (1790), ի ձեռն գործակալի իւրոյ Զմիւռնացւոյ, եւ դատ վարեալ յաղթող գտան վաճառականքն, եւ եկեղեցին տակաւին մինչեւ ի սկիզբն դարուս պաշտեալ լինէր, եւ լուեաց յետ մահուան վերջին վաճառականի Ստեփանի որդի Գաբրիէլի, յամի 1836 ...։„

Այս անուններուն վրայ մենք կ'աւելացնենք մի քանի ուրիշներ եւս, իբրեւ Ամստերդամում բնակողներ, որոնք իրենց այստեղ թողած գրքերուն վրայ իրենց ձեռքով իրենց անուններն են գրած։ (Այս գրքերը գտնվում են այժմ

Ամստերդամի համալսարանական մատենադարանում։)

Ջուղայեցի Շահրիմանենց Քասպար (1670).

Ջուղայեցի Խոջազադէնց Խոջա Պետրոս, պօղոս.

Ջ-եցի (Ջուղայեցի) Ածատուրի որդի մահտեսի Ղարախան (1724).

Ագուլեցի պրն Սարգիսի որդի ՑարուԹին (1724).

Յոհաննէս տի կիրակոս եղանօփ (ծն. 1742).

Կեսարացի Յոհաննէս[1].

Ագուլեցի Աղապապեան Ղազար (1780), ժեռել է Պետերբուրգում.

Ջուղայեցի Խալդարենց Խոջամալի որդի Գրիգոր (1783).

Գրիգոր Աղա (1794)[2].

աւետ Գրիգորիչ Սէրէպրով (1786), յետոյ նոյն գլխի վրայ,

եէկիմ վասիլիչ խաստատով Աստուծոյ յովակիմ որդի Ներսէս աղայի.

ալքսան մասէհեան (1790).

---

1 Սա իր գրքի վրայ (Ամստերդամ, տպ. Ածատուրի. Կ. Պոլիս 1752 (1200) գրել է իր ձեռքով. "Ի զմիրաէ ալտըմ պու կիրքի (գիրք) "2" ղրշ. կուՆահկեր Յոհաննէս քայսերլի"։

2 Գքրի վրայ (Ջարակնոց, տպ. Կ. Պոլիս 1784 ին) նոտր գրով գրել է այսպէս. "Գրիգոր Աղային է, Բարեաւ հնացուացէ, Ամէն"։

Այս անուններն անշուշտ գաղութի մի փոքր մասն են միայն ներկայացնում։ Բացի դրանից, պատմութեան ընթացքում մենք կը տանք ուրիշ անուններ եւս։

Հայոց գործունէութիւնն եւ նոյն իսկ գոյութիւնը դադարում են երբ սկսում են ԺԸ. դարի վերջն եւ ԺԹ. դարի սկիզբը նապոլէոնեան շրջանի պատերազմները։ Ֆրանսական բանակը գրաւում է Ամստերդամն եւ ապա ամբողջ Հոլանդան միացնում գաղղիային։ Ամստերդամ այդպիսով կորցնում է բոլորովին իր նաւագնացութիւնն եւ իր առեւտրական կենտրոնի դերը։ Պատերազմի երկար տեւողութիւնը, յարաբերութիւնների դժուարութիւնները եւ կեանքի ու ինչքի ընդհանուր վտանգը բոլորովին կդլխացնում են Ամստերդամը։ Այլ եւս ոչ մի նաւ չէր մտնում ներս. նաւահանգիստն ամայացել էր եւ քաղաքը սկսել էր դատարկուել։ Նոյն իսկ տեղացի Հոլանդացիք հեռանում էին։ Այդ վիճակը ամէնից աւելի վնասեց Հայ գաղութին, որի գոյութիւնը հիմնուած էր բացառապէս քաղաքի նաւագնացութեան եւ առեւտրի վրայ։ Գործերի դադարման, յարաբերութիւնների անջատման պատճառով, հայերը հետզհետէ հեռացան Ամստերդամից եւ ցրուեցան զանազան տեղեր. գաղութը վերջացաւ։ Երբ Հոլանդան իր անկախութիւնը վերստին գտաւ եւ քաղաքն իր գործունէութիւնը վերսկսեց, այլ եւս հայ համայնք չկար։ Հինները հեռացած էին, իսկ նորեր այլ եւս չեկան։ Ա յսպէս 1826 ին ընդամէնը միայն 3 հայ

էին ճնացել. Ալեքսան եւ Միքայէլ Մասէհեան (կոչվում էին Alexandre, Michael di Masse) եղբայրներն եւ Ստեփան Գաբրիէլեան (Stephan di Gabriel): Ի՞նչ եղան Մասէհեաններըը. հեռացա՞ն 1826ից յետոյ, թէ մեռան այստեղ, յիշատակութիւն չկայ: Իսկ վերջին հայը, Ստեփանը վախճանուել է 1836ին:

Ամստերդամից շոգենաւով կէս ժամ հեռու, Ամստել գետի վրայ կայ մի փոքր քաղաք՝ Oude Kerk (հին եկեղեցի) անունով, որի գերեզմանատան մէջ ճնում են իբրեւ անցեալի յիշատակ մի քանի հայ տապանները, որոնց մէջ հանգչում են այս երբեմնեայ նշանաւոր գաղութի ճնապորդները...:

Իսկ բուն երկրացիքը, հոլանդացիքը ի՞նչ հայեացք ունին այն հայ գաղութի մասին, որ շուրջ դար ապրել է իրենց մէջ եւ քաղաքական անյայտ պարագաների բերմամբ ստիպուած է եղել թողնել ու հեռանալ: Անանուն բայց շատ իրազեկ մի յօդուածագիր, Ամստերդամի կարեւոր մի շաբաթաթերթում պատմում է հայոց գործունէութիւնը "հայ եկեղեցին եւ համայնքը" (Ամստերդամում) վերնագրով գրուածքում եւ այս դատողութիւնն է անում.

"Հայ համայնքի պատմութիւնը մի ոսկեայ էջ է Ամստերդամ քաղաքի գրքում"[1]:

---

1 De Amsterdammer շաբաթաթերթ, 14 Օգոստոս 1887:

Գ.

Առաջին հայ տպագրութիւնները: Յովհ. Անկիւրացի Մոլինոս եւ իր տպագրական գործունէութիւնը: Հռոմի Հաւատոյ Տարածման ժողովն եւ հայերէն Աստուածաշունչը: Առաջին հայ տպարանն Ամստերդամում: Մատթէոս Ծարեցի, Պետրոս Աւետիս եւ կարապետ վարդապետ՝ տպարանական գործիչներ: Ամստերդամում տպուած հայերէն գրքերը 1660—1666: Պետրոս Մոլլէի լատին կրօնաւորն էջմիածնում: Ոսկան վարդապետ Երեւանցին: Աստուածաշունչի տպագրութիւնը: Ամստերդամի լատին նուիրակի յանձնարարականը: Ոսկանի տպած գրքերն Ամստերդամում: Ոսկանի հեռանալն եւ նոր ձեռնարկութիւնները: Յովհ. վարդապետ Հոլով:

—

Տպագրութեան գիւտից (1455) հազիւ 57 տարի էր անցել երբ երեւաց նրա հայերէն օրինակը: Մեր ժողովրդի քաղաքական եւ տնտեսական հանգամանքները միշտ այնպէս են դասաւորուել, որ քաղաքակրթական ամէն մի նոր քայլ, ամէն մի նոր ձեռնարկութիւն միշտ ըոյս է տեսել եւ իրականացել է դուն հայրենիքի սահմաններից դուրս: Այսպէս է եղած նաեւ տպագրութեան համար: Հայ տպագիրը առաջին անգամ յղացուած ու մարմնացած է այնտեղ, ուր միջոցներ ու յարմարութիւններ կային այդ նոր արհեստից օգտուելու եւ ուր նա ընդհանրապէս

ակսել էր զարգանալ։ Ինչպէս որ առաջին կա-
րեւոր հայ գաղթականութիւնը եւրոպական հողի
վրայ՝ հիմնուած է վենետիկում, այդպէս էլ՝
իրերի բնական բերմամբ առաջին հայ տպագիր
գործը իրականացած է այդտեղ, դուժերի այդ
եղակի քաղաքում, ուր շարժուն տառերի գու-
տից յառաջ արդէն գործածութեան մէջ էր
փայտագրութիւնը, այն է՝ տախտակի վրա
փորուած տպագիրն։ Վենետիկից է, որ այս ար-
հեստը անցած ու զարգացած է Գերմանիայում
եւ Հոլանդայում։

Առաջին հայ տպողը մի իտալացի է եղած,
ինչպէս ենթադրւում է, ոմն Zuan Andrea։
Արուեստի տեսակէտից դատելով՝ հայ տպագրու-
թեան այս առաջին փորձերը աղքատ են եղած
եւ չեն յառաջադիմած, թէեւ չեն էլ դադա-
րած։ Հայկական տպագրութիւնը՝ ընդմիջում-
բով շարունակուած է վենետիկում զանազան
մասնաւոր տպարաններում, մինչեւ որ Մխի-
թեան Միաբանութիւնը 1789ին յաջողած է
հիմնել իր սեփական տպարանը, եւ հաստա-
ւած այժմեան ճոխութեան։

վենետիկում 1512—1513ին առաջին
անգամ լոյս տեսնելուց յետոյ հայ տպագիրը
հետզհետէ երեւաց Կ. Պոլսում (1567), Լէմ-
բէրգում (1616), Հռոմում (1623), Միլանում
(1624), Փարիզում (1633), Նոր Ջուղայում
(1640) եւ Լիվոռնայում (1643), բայց բոլորն
ալ խեղճ եւ անճաշակ, մինչեւ Ամստերդամում
տպարան հաստատուիլը։ Հայկական տպագրու-

Թեան առաջին մաքուր եւ իսկապէս գեղարուեստական արտադրութիւնը Ոսկանի տպած Աստուածաշունչն է Ամստերդամում:

Հայերէն լեզուով Աստուածաշունչը տպելու խնդիրը Ոսկանից առաջ ղեկադրել է ուրիշներին էլ, բայց յաջողութիւն չեն ունեցել: Բոլորն էլ այդ նպատակով դիմել են նախ Հռոմ, ինչպէս եւ ինքն Ոսկան, որովհետեւ Հռոմի Ուրբանեան վարժարանի տպարանն ամէնից աւելի յարմարութիւններ էր ներկայացնում: Միեւնոյն ժամանակ Ս. Գրքի հրատարակութեան համար Հռոմէական եկեղեցական իշխանութեան բարեհաճ հաւանութիւնը եթէ ոչ անհրաժեշտ, գէթ մեծապէս կարեւոր էր համարուած:

Այս հարցը դեռեւս 1632ին Հռոմում արծարծել է Յովհաննէս Անկիւրացին, որին լատինական աղբիւրները կոչում են "Հայապգի Յովհ. Մոլինոս, վենետիկցիների թարգմանը Ջմիւռնիայում":

"Ես, նուաստս Հոգի Յովհաննէս անկիւրացիս, գրում է նա 1642ին վենետիկում տպած Սաղմոսարանի յիշատակարանում, առանձին պակասութիւն գրեանց ազգիս Հայոց եւ վրանէի ի մտի թէ զինչ լինի հնար բազմանալոյ հին եւ նոր կտակարանաց. քանզի պատճառ նուազութեան այս էր, զի բազում ծախիւք եւ դժուարութեամբ հազիւ կարէ ոք ստանալ Ս. (մէկ) գիրք կամ Բ. (երկու) եւ կամ երիս. թող թէ պիտոյանայ բազում": Նա գիտէր, որ Հռոմում Հայերէն տպագրութիւնը գոյութիւն ունէր

1623ից սկսած: Նրան յայտնի էր նմանապէս, որ Ամստերդամ քաղաքը տպագրական արուեստի կենդրոնն էր, ուր եւ հայ վաճառականներ էին հաստատուած: Ուստի իր ձեռնարկը նա սկսեց նախ Հռոմից: Նա գրաւորապէս դիմեց Հաւատոյ Տարածման ժողովին Թախանձագին խնդրելով, որ իրեն իրաւունք տրուի Հռոմում հայերէն լեզուով Ս. Գիրքը տպելու: Նրա նամակը կարդինալ Ուբալդինի ձեռքումն է Ս. ժողովին, բացատրելով իր կողմից, որ եթէ նրան այս արտօնութիւնը չտրուի, Մոլինոս մտադիր է դիմել Հոլլանդա: Կարդինալների խորհուրդը լուրջ քննութեան է առնում այս հարցն եւ որոշում է չմերժել՝ այլ յոյս տալ Մոլինոսին թէ նրա առաջարկութիւնը նկատի կ'առնուի, որպէս զի, ասուած է որոշմնագրի մէջ "հայերը այս նպատակի համար Հոլլանդացի հերետիկոսների հետ բանակցելուց հետ կեանան": ժողովը՝ ի նկատի առնելով, որ "նախիջեւանի արքեպիսկոպոս եղբայրը Աւգուստինոսի տուած տեղեկութեան համաձայն նախիջեւանի գաւառում գտնվում է դոմինիկեան կրօնաւորների ձեռքով կատարուած հայերէն մի թարգմանութիւն Աւրլգատայից", որոշում է գրել նրան, որ այդ թարգմանութիւնից մի օրինակ ուղարկէ Հռոմ: Այս որոշմնագրի լուսանցքի վրայ գրուած է. "Հռոմում տպուելի Աստուածաշունչի մասին, որպէս զի չլինի թէ Հոլլանդացի հերետիկոսները տպեն[1]":

---

[1] Ահա լատիներէն բնագիրը.

"Referente eodem Eminentissimo Domino cardi-

Յովհ. Անկիւրացին այս որոշման հիման վրայ 4 տարի ճնաց, Հռոմում անընդհատ պա~. տրաստութիւն տեսնելով "բաղում հարչարանօք, գրում է նա, զոր չէ հնար ի գիր արկանել, զոր ծածկագէտ ստեղծաւղն իմ գիտէ: Եւ հանի զպողպատն եւ զկաղապարքն եւ զծաղիկքն եւ զծաղկապրներն բաղում աշխատութեամբ„: Ընայելով այս հարչարանքին, նա չէ յաջողում տպագրել, որի մասին նա գրում է այսպէս.

"Ես Յովհաննէս Անկիւրացի, գրանկն Ճո~ վաննի Մուլինս կոչէ, եկի ի մեծն Հռոմ թվին Հայոց ՈՀԹ եւ կեցայ մինչեւ ՈՂ. վասն պայման առնելոյ զսուրբ աստուածաշունչն. բայց ոչ կա~ րացի աւարտ առնել վասն բազում պատճառից.

---

nali Ubaldino literas Joannis Molini Armeni interpretis Venetorum in Smyrna, in quibus certis propositis conditionibus instabat ut Romae biblia Armena imprimerentur, ne Armeni, ut paulo ante tentarunt, illa apud Hollandos haeriticos imprimerent, Sacra Congregatio censuit super huiusmodi negotio serius esse deliberandum. Interim tamen ut dictus Joannes Molinus serius eosdem Armenos a tractatione de huiusmodi re cum praefatis haereticis avertere possit, eidem per literas spem esse praebendam, quod dicta biblia Romae imprimerentur. Praeterea cum ex relatione fratris Augustini archiepiscopi Nascevanensis in provincia Nascevanensi reperiantur biblia vulgatae editionis in Armenum translata a fratribus Dominicanis, Sacra Congregatio censuit scribendum esse praefato archiepiscopo ut copiam Bibliorum mittat„. (In margine) — "De bibliis Armenis Romae imprimendis, ne Hollandi haeretici ea imprimant„.

Acta Sacrae Congregationis de Propaganda Fide Vol. VIII (1632—1633), fol. 11.

քայց ուշ ունիմ ի վանատիկ կամ ի Կոստանդինուպոլիս կատարել. զի ունիմ վաճենայն գործ, որ պիտոյ են վասն այդ բանիդ„:

Այսպէս էլ անում է: Հռոմից Անկիւրացին գնում է վենետիկ, եւ 1642ին տպում է այնտեղ Սաղմոսարանն եւ Հետեւեալ տարին՝ "Ճիտուս Որդին„:

Թէեւ Մոլինոս չէ յաջողում Աստուածաշունչը տպել Հռոմում, բայց նա այնքան վստահութիւն է գրաւել իրեւ լեզուագէտ, որ Ս. Ժողովը նրա քննութեանն է յանձնել լատիներէնից եւ իտալերէնից կատարուած զանազան հայերէն թարգմանութիւններ: Նա քննել է նաեւ հայերէն խորհրդատետրի լատիներէն թարգմանութիւնն, որի յիշատակարանում գրել է. "Ես Ցոհաննէս Մոլինի, թարգմանիչ հայոց, զգիրքս զայս հայի եւ լատինի լեզուով գրեալ, տեսի եւ կարդացի եւ վկայեմ վասն ճշմարտութեան զի ամենեւին հաւասարին միմիանց բարի եւ ստոյգ„:

Իսկ հայերէն Աստուածաշունչն այնու ամենայնիւ տպվում է "Հերետիկոս Հոլլանդայում...„:

Առաջին հայ տպարանը Ամստերդամում՝ հիմնուած է 1660ին:

Այս պատիւը պատկանում է Մատթէոս Ծարեցուն, որ էջմիածնից յատկապէս այդ նպատակի համար Եւրոպա էր ուղարկուած: Մատթէոս՝ փիլիպպոս կաթողիկոսի քով նստարի պաշտօն էր կատարում եւ հմուտ էր նկարչութեան, մանաւանդ "ծաղկելու„ արուեստին: Փիլիպպոսի մահից յետոյ նրա յաջորդի, Ցակոբ կա-

Թողիկոսի յանձնարարութեամբ Մատթէոս Օ-
րեցին 1656ին մեկնում է այնտեղից եւ ջմիւռ-
նիայի ճանապարհով գալիս է, ինչպէս գրում է
ինք, "ի գեղազարդ քաղաքն եւ ի նաւահան-
գիստն ի Վենետիկ": Բայց այստեղ չէ կարողա-
նում իր նպատակին հասնել եւ դիմում է Հռոմ:
Հռոմում նոյնպէս չէ յաջողում եւ նոյն իսկ
թշնամական վերաբերմունքի է հանդիպում: Նա
ոչ միայն իր վնասուած արուեստագէտներին չէ
գտնում այնտեղ, այլ ոմանք "բարեաւեացք եւ
հակառակասէրք գրգռեցին զմեծամեծս ու զժո-
ղովս առ ի խափանել զայս գործ" մինչեւ այն
աստիճան, որ արգելեցին արհեստաւորներին
"զայս արհեստ տալ ի ձեռս Հայոց": Դրանից
յետոյ միայն նա որոշում է գալ Ամստերդամ,
ուր լիուլի յաջողութիւն է գտնում: Այն միջո-
ցին Ամստերդամում կար մի ճարտար Հոլլան-
դացի փորագրիչ եւ ձուլիչ, Քրիստոֆ Ֆան Դիք
(Christoffel van Dijck կամ նոր ձեւով Dyck)
անունով, որ աշխատում էր տպարանապետ Էլ-
զէվիրսի քով: Յարեցին 1658 նոյեմբեր 27ին
պայման է կապում նրա հետ, որ Ֆան Դիք ձուլէ
Հայերէն տառեր իր ցուցմունքի համաձայն, 170
հատ հայր (poinçon) եւ 240 մայր (matrice)
մեծ, միջակ եւ փոքր չափերով, հատը 1 ֆլորին
70 սէնտով: Բացի դրանից նրբ գործը վերջա-
նալու, Ֆան Դիք կինն էլ ընծայ պիտի տանէր
10 ֆլորին[1]: Հոլլանդացի պատմագիրները Մատ-

---

[1] Պայմանագրի մէջ ասուած է՝ 34 struiver այն ժա-

թէոսին կոչում են Matheo Arac, որովհետեւ հօրն անունը Ասապ էր[1]: Տառերը դեռ բոլորը չէին ձուլուած, այլ միայն 50—60 հատ, երբ Շարեցին գործի է սկսում եւ 1660ին տպում է իր առաջին ու միակ գիրքը, Շնորհալու "Ցիսուս Որդին„:

Մատթէոս իր այս ձեռնարկութեան մէջ բնականաբար դժուարութիւնների է հանդիպում, բայց այդ այնքան չէ նեղացնում նրան որքան այն հակառակութիւնն, որ տեսել է տեղացի հայ վաճառականներից եւ նոյն իսկ քահանաներից, կամ ինչպէս նա գրում է, "ի սուտաձեւ կարգաւորաց եւ յաշխարհականաց թէ ի վնէտիկ եւ թէ աստ ի Մատրեամ, որք փոխանակ օժանդակութեան զոր պարտն էին՝ դիմանալ հակառակէին մշտապար„: Մինչեւ իսկ,

---

մանակի փողով, որ անում է 1 ֆլ. 70 ս. իսկ ֆլորինը կոչուած է Carolusgulden:

1 Հոլլանդացի պատմագիրներն այսպէս են բացատրում հայկական տպարանի հաստատութիւնը Ամստերդամում.

"Հայաստանի պատրիարք Յակոբ Ջ., արուեստի եւ գիտութեանց սիրահար մի մարդ, 1656ին լսելով, որ Վենետիկի եւ Ջուլֆայի տպարանների տառերը մաշուել, անգործածելի են դարձել, իր սարկաւագ Մատթէոս Շարեցուն Հոլլանդա ուղարկեց, որպէս զի այստեղ լաւագոյն տառեր պատրաստել տայր„:

Պատմական De Roever կարծում է թէ տպարանը հիմնուած է 1658ին; Բայց ինչպէս ճիշդ նկատում է Dr. Berg, "եթէ տառերը ձուլուած են 1658ին, դրանից չէ կարելի եզրակացնել թէ ուրեմն տպագրութիւնն էլ սկսել է 1658ին . . . : Իրօք 1660ին է, որ առաջին հայ տպարանը սկսեց գործել Ամստերդամում„: "Bibliotheekleven„, Jahrgang IX, Nr. 3, Maart 1924, Utrecht.

շարունակում է նա, երբ բարեպաշտ հոլանդացիներից ոմանք ուզենային նրան օգնել "զային եւս յուսահատեցուցանէին եւ ապաշաւել տային բարեգործութեանն": Բարեբախտաբար բոլոր հայերն այդպես չէին. կային Մատթէոսին գնահատողներ եւս, որոնք քաջալերում եւ օգնում էին նրան: Սակայն այս մասնակի օգնութիւնը չէ ծածկել նրա ծախքերն եւ նա տպարանի պատճառով պարտքի տակ լինկաւ եւ տեսաւ թէ անկարող էր թոյլ նիւթական միջոցներով շարունակել սկսած մեծ գործը, նա խնդրեց Ղլջենց Աւետիս վաճառականից (Ոսկան վարդապետի եղբայրը), որ "715 մաուէլ" փոխ տայ իրեն, որպէս զի այդ փողով 1200 օրինակ Յիսուս Որդի եւ 2000 օրինակ Սաղմոսարան հրատարակէ: Դրանց վաճառումից գոյանալիք շահը հաւասար պիտի կիսուէր նրանց մէջ: Աւետիս յանձ առաւ ընկերանալ, բայց պայման դրեց, որ տպարանը ընծայեն Էջմիածնին եւ Ս. Սարգիս վանքին: Մատթէոս ընդունեց եւ կտակ արաւ, որ իր պարտքերը հատուցուելուց յետոյ տպարանը Էջմիածնի եւ Ս. Սարգսի վանքի սեպհականութիւն դառնայ: Որպէս զի այս պարտքի խնդիրը արգելք չհանդիսանայ նուիրաբերութեան, մի ուրիշ վաճառական, Երեւանցի Սահմատինեան Պօղոսի որդի Գրիգորը մասամբ վճարում է տպարանի պարտքը:

Աւետիս իր յիշատակարանում ասում է թէ Մատթէոս տասերի եւ տպագրական ծախքերի համար պարտք էր թողել "հազար մաու-

չէր„ մինչ տպարանին գոյքը՝ այդ գումարին կէսն իսկ չարժէին։

Մատթէոսին չէր վիճակուած տեսնել նոյն իսկ իր այս միակ գրքի ամբողջացումը։ Երբ Յիսուս Որդին շարուած էր 38 թերթ եւ տպագրութիւնն էլ հասած էր 28 թերթի, Մատթէոս, որ արդէն տկար էր երբ սկսել էր տպել, վախճանեցաւ 1661ին (ՌՃԺ Յունուար 22)։ Նա կանխաւ պատրաստել էր այն յիշատակարանն, որ գրքի վերջը պիտի դրուէր եւ որի մէջ մանրամասն պատմում է այս գործի մէջ իր գլխից անցածը։

Ամստերդամի մէջ տպուած այս առաջին գիրքը “Իշխանութեան քաղաքին նորընծա փրինչիփային Վիլհալըմ Օրանեայ„, թէպէտ եւ տառերի ձեւի կողմից բաւական վայելուչ, ըստ բովանդակութեան սխալներով լիքն էր։ Նոյնը խոստովանում է եւ Մատթէոս իր յիշատակարանում եւ խնդրում է “ներել պակասութեան գրոցս, զի օրինակն մի էր եւ շարողք Փրանկք ոչ են տեղեակք գրոց մերոց եւ լեզուաց. եւ ես միայն եւ տկար գոլով կու սրբագրէի հազիւ այսքան կարի ստէպ„։

Աւետիսի այս գործում ընկեր դառնալն այն օգուտն ունեցաւ, որ տպագրական ձեռնարկութիւնը չդադարեց Մատթէոսի մահից յետոյ։ Աւետիս գրում է իր յիշատակարանում “...որ ժամ որ մեռաւ (Մատթէոս) ես, իբրեւ որբ տարակուսեալ եւ պարապ մնացի, ես եւ սահմանք եւ գործն եւ մշակն. ամիս ժամանակ անցաւ

սկսան նաւերն գնալ ի դէմ արեւելս ի քաղաքն Զմմրունայ աթոռն սուրբ Պօղիկարպոսի, որ է յեօթանասանից. անճարութեանն ճնացեալ Թ. տեառն տպագրեցի վախելով այսպէս սրբագրեցի. օրինակն ետի մի կողմ, տպագրածն մի կողմ, յորժամ որ սղալ լինէր կու մեկնի այսպէս սրբագրեցի մընացալ Թ. տեառն. ապա ուսայ ըզսրբագրելն որ դուրին է. Թվին ՈՃԹ մարտ ամսին իե. սուրբ Ատուածածինն միջնորդ ունելով „:

Աւետիս, որպէս զի կարենար շարունակել տպարանական գործը, պէտք ունէր արտաքին օգնութեան, թէ գրականն թէ դրամական: Այս նպատակով նա ընկեր առաւ Ամստերդամի Հայոց հոգեւոր հովիւ Անդրիանեցի կարապետ վարդապետին. իսկ դրամական օգնութիւն նա գտաւ 3 հայ վաճառականից, որոնք հարկ եղած դրամը փոխ տուին նրանց: Այս վաճառականներն էին Ամասիացի Խուտապաշխի որդի Մինաս եւ Զուղայեցի Շահրիման ու Յովհան Միրզէնց:

Աւետիս եւ կարապետ իրենց տպած գրքերն ուղարկում էին Զմիւռնիա, այնտեղից էլ երկրի ներսերը, ծախուելու: 1662ին նրանք տպեցին ժամագիրքը 3000 օրինակ "դիւրագին եւ ձեռնհաս եւ ամենեցուն ստանալի... Զոր հաւատացեալ եղեւ ի կենարարին Թուոյն ՈՈԿԲ յամենեան Օգոստոսի ԺԱ եւ Արամեան տոհմին ԹուականուԹեան ՈՃԺԱին. յամոյն մարգաց ի ...Յաշխարհին Փռանկաց երկրին յՕլանդայ, ի քաղաքն Ամստերտամ, յիշխանուԹեան տեղւոյս Վիլհելմուս Փրինց Փալին. ի տպարանս որ

կոչի Սուրբ Էջմիածնի եւ սիրելի վկային իւրոյ սրբոյն Սարգսէ զօրավարին, որ կառուցաւ ի նոյն Մատթէոս սարկաւագէ եւ ի ժամու վախճանին նուիրեցաւ վերոգրեալ սրբարանացն: Գոյիւք եւ արդեամբք եւ հոգացողութեամբ Ղլիճենց Աւետսին երեւանեցւոյ, որ է վերակացու եւ թարգման տպարանիս եւ մատակարարող եւ առաջնորդող ամենայն գործակալաց արուեստարանիս, ինչպէս ասուած է յիշատակարանում:

Աւետիս՝ վաճառական լինելով երբեմն ստիպուած էր հեռանալ քաղաքից իր գործերով. այն ժամանակ տպարանի գործը կաղում էր: Կարապետ վարդապ. որ երգեցողութեան խազերը էր փորել տուել Շարական տպելու համար, թէեւ օգնում էր նրան, բայց տպարանը շատ անորոշ վիճակի մէջ էր գտնվում: Այս միջոցին էր, որ Էջմիածին հարկ համարեց կտրուկ կարգադրութիւն անել, իբրեւ տպարանի օրինական տէրը: Այնտեղից ուղարկուեց մի նոր մարդ, այնպիսի մէկն, որ փոքր ի շատէ յարմարութիւն ունենայ այդ գործին, ամբողջապէս նուիրուի տպարանին եւ գործը հաստատուն հիմքի վրայ դնէ ու ընդարձակէ: Այս մարդը ոսկան վարդապետն էր, որ միանգամայն այն առաւելութիւնն ունէր, որ Աւետիսի եղբայրն եւ Կարապետի նախկին ուսուցիչը լինելով, ապահով էր, որ սրանց կողմից ամէն կերպ ձեռնտուութիւն պիտի գտնէր:

Բայց ոսկանի ամատերդամ գալուն եւ տպագրական գործին ձեռնամուխ լինելուն մի

ուրիշ կարեւոր պատճառ եւս կար: Սակայն նախ՝ ո՞վ էր Ոսկան:

Ոսկան ծնած էր Սպահանում, բայց իր ծնողքը Ղրըմից էին, ի բնէ երեւանցի էին եւ գանվում էին այն բոնի գաղթականների շարքում, որոնք Շահաբասի հրամանով տեղահանուեցան հին ջուղայից եւ հիմնեցին նոր ջուղան: Այս պատճառով էլ նա իր անուան մէջում էր կցել երեւանցի կոչումը: Ոսկան իր սկզբնական ուսումն առած էր նոր ջուղայում: Սիմէոն ջուղայեցի կաթողիկոսը նրա հայրենակիցն ու ժամանակակիցն էր: Նրանք երկուսն էլ աշակերտ էին կեսարացի Խաչատուր վարդապետին: Ոսկան՝ Մովսէս կաթողիկոսի հետ գնաց Էջմիածին, այնտեղ իր ուսումը շարունակելու եւ ապա դարձաւ իր հայրենիքը, իսկ երբ Փիլիպպոս կաթողիկոս, հայրապետական աթոռը բաղմեց, Ոսկանին կանչեց Էջմիածին, ուր եւ մնաց բոլորովին:

Այն ժամանակ Էջմիածնում էր բնակվում, ասում ենք բնակվում, որովհետեւ նա տարիներով ապրել է այնտեղ, մի լատին կրօնաւոր դոմինիկեան կարգից, Պօղոս Պիրոմալըի Սիդէոնացի, որ Հռոմից Մերձաւոր Արեւելք էր ուղարկուած քարոզչական պաշտօնով: Սա՝ տեղական տարիներով ամբողջ 4 տարի շրջապատել էր այն կողմերը եւ ապա եկել էր Էջմիածին Հայոց կաթողիկոսին այցելութեան: Վաստրականում եւ Այրարատեան գաւառում երկար ժամանակ մնալով բաւական հայերէն էր սովորել, որ քիչ չօգնեց նրա Էջմիածնում տեղաւորուելուն: Էջմիածնում Ոս-

կան եւ Պիրոմալլի այնչափ մտերմացան որ իրար ուսուցչութիւն էին անում: Իտալացի կրօնաւորը Ոսկանին լատիներէն էր սովորեցնում իսկ Ոսկան նրան հայերէն: Այսպէս փոխադարձ օգնութեամբ նրանք թարգմանութիւններ էին անում այս երկու լեզուներից, թէպէտ բաւական անյաջող: Պիրոմալլի 4 տարի մնաց Էջմիածնում եւ Հռոմ դառնալու ժամանակ հետը տարաւ հայերէն Աստուածաշունչի մի ձեռագիր եւ շատ աշխատեց, որ իրաւունք ստանայ տպագրելու Հռոմում: Բարեբախտաբար լատին բարձրագոյն իշխանութիւնը զլացաւ նրան այդ իրաւունքը. բարեբախտաբար ենք ասում, որովհետեւ Պիրոմալլի թեթեւամտութեամբ անտեղի սրբագրութիւններ էր մտցրել իր կողմից հայերէն գրչագրի մէջ, աշխատելով յարմարեցնել լատինական Վուլգատային, ուր որ ինչպէս յայտնի է, հայերէն թարգմանութիւնը կատարուած է “Եօթանասնից„ օրինակից: Պիրոմալլի հանգիստ չմնաց: Նա նորից Էջմիածին եկաւ եւ Ոսկանի հետ միասին, գլուխ գլխի տալով դարձեալ “սրբագրել„ ուզեցին հայերէն Աստուածաշունչը, փոփոխութեան ենթարկելով Ոսկեդարի թարգմանիչների թարգմանութիւնը: Հռոմում Պիրոմալլիի գտած ահա այս անյաջողութիւնը մասամբ պատճառ դարձաւ, որ Ոսկան Եւրոպա գայ իրականացնելու միեւնոյն նպատակը, այն է Աստուածաշունչը տպելը:

Ոսկան Էջմիածնից գնաց Զմիւռնիա, որ եթէ ոչ միակ՝ գէթ լաւագոյն ճանապարհն էր դէպի Միջերկրականի եւրոպական այն նաւահանգիստ-

ները, ուր հայ գաղութներ էին հաստատուած: Նա եկաւ նախ Լիվոռնոյ, ուր արդէն հայ գիրքը լոյս էր տեսած եւ շատ աշխատեցաւ, որ տեղւոյն հայ վաճառականները նիւթական միջոցներ տան իրեն՝ լայն չափերի վրայ հիմնուած տպարան հաստատելու, որպէս զի նախ Աստուածաշունչը տպագրէ եւ ապա ուրիշ եկեղեցական գրքեր: Բայց իր յուսացած օժանդակութիւնը չգտաւ: Հայ վաճառականները խնդրի վրայ նայել են զուտ շահադիտական տեսակէտից, կամ ինչպէս Ոսկանն է ասում, «ոչ զօգուտ ազգի եւ զսրբոյ աթոռոյն, այլ զանձանց զցանկութիւն եւ կամաց զհաճութիւնն կամէին լնուլ»: Այնտեղից նա գնաց Հռոմ, բայց աւելի յաջողութիւն չունեցաւ քան Պիրոմալլի. հակառակութիւն գտաւ «թէ ի մերայնոց ազանց եւ թէ ինքեանց սահմանաց եւ կանոնաց»: Հոգեւոր իշխանութիւնը դժուարանում էր, ըստ երեւոյթին, իրեն անհասկանալի լեզուով Սուրբ Գիրքը տպել արտօնելու: Որով Ոսկան ստիպվում է դառնալ Լիվոռնոյ գալ, ուր վերջապէս գտնում է 3 Ջուղայեցի, Պետրոս Աւագ Գոնսուլ Հայոց, Քթուէշէնց Գեւդորոս (Թէոդորոս) եւ Խոնենց Ստեփան: «Աստուածասէրք եւ Կորովլի այսոքիկ՝ հայելով ի նուաղութիւն աստուածայնոց կտակարանաց որ ի մէջ ազգիս Հայոց... ջերմեռանդ սիրով յօժարեալք յորդորեցին զմիմեանս, քաջալերելով եւ զիմս նուաստութիւն» գրում է Ոսկան, խոստանում են հարկ եղած դրամական միջոցները հայթայթել «Առ ի յօգուտ ազգիս եւ ի շահ սուրբ

աթոռի„: Այս բարի նպատակը հիմն է կազմում նրանց ստորագրած պայմանագրին, ըստ որում պետրոս եւ Ստեփան խոստանում էին տպագրութիւնք Աստուածաշունչի վաճառումից իրենց պատկանած շահը նուիրել Էջմիածնին, իսկ թէոդորոս էլ իր բաժին շահը պիտի տար կէսը Էջմիածնին կէսը Ս. Սարգսի վանքին: Այս յաջողութիւնից խրախուսուած, Ոսկան եկաւ Ամստերդամ, ընդունեց իր վրայ Աւետիսի տպարանի ղեկավարութիւնն եւ անմիջապէս ձեռնամուխ եղաւ իր փայլուն նպատակի իրագործման:

Ոսկան Ամստերդամ եկաւ 1664ին: Նրա գալն արդէն յայտնի էր իր եղբօրն Աւետիսին, որ երբ Զմիւռնիա էր մեկնում, տպարանը փակել էր եւ բանալին յանձնել իր մի ծանօթին, որ երբ իր բացակայութեան ժամանակ Ոսկանը գայ, բանալին տայ սրան:

Ոսկան անմիջապէս գործի սկսաւ Ամստերդամում: Տպարանն այն միջոցին երկու տեսակ տառեր ունէր, նախ՝ Ծարեցու շինել տուած առաջին տառերն, որոնք խոշոր էին ու անյարմար, երկրորդ՝ Աւետիսի պատուիրածներն, որոնք համեմատաբար աւելի լաւ էին, բայց բաւական չէին Աստուածաշունչի տպագրութեան համար, ուստի Ոսկան ինքն էլ պատուիրեց, գլխաւորաբար նոտրգիրեր[1]:

---

1 De Roever պատմում է, որ Christoffel van Dijk 1666ին Gabriel Grigoria (Grigorian?) անունով մի հայի հետ եւս պայման էր կապել նրա համար հայերէն տառեր ձուլելու: „Uit onze oude Amstelstadt„, էջ 11—12:

Բացի դրանից նա շինել տուեց նաեւ պատկերներ Ս. Գրքից առնուած, յատկապէս Աստուածաշունչի համար։

Մինչեւ այս պատրաստութիւնները լրանալը Ոսկան օգնում էր իր աշակերտ Կարապետ վարդապետին, որի Շարականն ու Սաղմոսարանը՝ 1664—1666ին՝ Ոսկանի գործակցութեամբ են տպուած։

Ոսկանի հրատարակած առաջին գիրքն էր՝ "Գիրք Այբուբենից յաղագս նորեկ տղայոց եւ մանկանց անկրթից, նաեւ արանց դեռ եւս ոչ ուսելոց, որոց լիցի օժանդակ հասանիլ ի կատարումն կրթութեան եւ ի վարժումն ճահապէս ընթերցողութեան։ Յօրինեալ ներտպարանում սրբոյ Էջմիածնի եւ սրբոյն Սարգսի զօրավարի։ Յամստերդամ քաղաքի։ Ի ներթուում փրկչին 1666, իսկ Հայոց ՌՃԺԵ Յունուարի Գ.„։

Ոսկանի գլուխ գործոցը, Աստուածաշունչը, լոյս տեսաւ նոյն 1666ին, երկիջեան, մաքուր տպագրութեամբ եւ պատկերազարդ։ Նրա վերնագիրն էր՝ "Աստուածաշունչ գրոց եւ նորոց կտակարանաց ներպարունակող, շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց։ Իսկ ըզկնի հրամանաւ վեհափառին տեառն Յակոբայ Հայոց կաթուղիկոսի՝ գլխակարգեալ եւ ընտրեալ ըստ դաղմատականացն, նաեւ զհամաձայնութիւն հանուրց գրոց աստուածաշնչից, ընդ երկարս առընթեր կարգեալ ամենեցուն, նուաստի ումեմն բանի սպասաւորի Ոսկանի Երեւանեցւոյ։ ՅԱմստերդամ ներտպարա-

ACAD.
LVGD. BAT.
BIBL.





նում սրբոյ Էջմիածնի եւ սրբոյն Սարգսի վրայարի ի Թուում փրկչին 1666 իսկ Հայոց ՌՃԷ »:

Այսպէս իրականացաւ վերջապէս հայ ժողովրդի միահամուռ փափագը, Ս. Գիրքը հայերէն տպագրութեամբ լոյս տեսաւ ընդհանուրի գործածութեան համար: Միեւնոյն ժամանակ Հռոմի Ս. Թողոմէի երկիւղն արդարացաւ. հայերէն Աստուածաշունչը տպագրուեց "հերետիկոս Հոլլանդայում »: Ոսկան ստիպուած էր շատ տեսակէտներով հաշուի առնել կաթոլիկ բարձր իշխանութեան այս տրամադրութիւնը: Բաւական էր նոյն իսկ միայն այն, որ Հռոմ կարող էր արգելք դնել նրա տարածման կաթոլիկ դաւանութեան պատկանող Հայոց մէջ, որոնք աննշան չէին որպէս թուով նոյնպէս եւ ազդեցութեամբ: Անհրաժեշտ էր ուրեմն Հռոմի բարեհաճութիւնը ձեռք բերել: Ոսկան դիմեց այս նպատակով Ամստերդամում պապի նուիրակ Յովհ. եպիսկոպոսին (Johannes episcopus Castoriensus): Նուիրակը խոստումն տուեց նրան, որ կամ ինքն երթայ անձամբ Հռոմ եւ կամ միսիոնարդի ձեռքով իր Աստուածաշունչը ներկայացնէ Ս. Թողոմէի քննութեանն ու հաւանութեանը:

Ոսկան անյարմար գտաւ, ի նկատի առնելով իր առաջին անյաջողութիւնը Հռոմում, որ ինքը գնայ Հռոմ եւ որոշեց իր օգնական կարապետ վարդապետին ուղարկել: Նա խնդրեց նուիրակից էլ, որ սա իր կողմից իր օգնութիւնը չզլանայ կարապետի այս առաքելութեան:

Լատին եպիսկոպոսը սիրով յանձն առաւ կատարել Ոսկանի խնդիրքն եւ յանձնարարական նամակ տուաւ յանուն Հաւատոյ Տարածման Ժողովի Քարտուղարին։ Ահա այդ յանձնարարականն, որ գրուած է Ամստերդամում եւ կրում է 22 Հոկտեմբեր 1668 թուականը։

“Մեծարգոյ եւ վերապատուելի Տէր.

Նամակաբերս վերապ. Տէր Կարապետ վարդապետ՝ անկարող լինելով իր լեզուով Ձեր Մեծ. Տէրութեան հետ խօսիլ, այս նամակս գրեցի, որ թարգմանի պաշտօն կատարէ։ Նա Ս. Աթոռին է ուղարկուած Հայ եպիսկոպոս Ոսկանի կողմից, Հայերէն լեզուով Ամստերդամում իր տպած Ս. Գիրքը վաւերացնել տալու համար, որպէս զի առաքելական հաւանութեան կնիքով օժտուի եւ Հռոմէական Եկեղեցուն միացած Հայերն էլ առանց մոլորութեան վտանգի կարենան կարդալ„։

“Գրաբերս Ձեր շնորհներին յանձնարարելով մնամ ամենախոնարհ ծառայ Յովհ. եպ. Կաստորեացւոց, առաքելական նուիրակ[1]„։

---

1 Arch. des Propaganda Rome, Scritture refarite in S. Congr., Vol. 419, fol. 315.

Պռոպագանդայի այս ժողովածուի Ժ. հատորում (1634—1639) ի մէջ այլոց մի հետաքրքրական զեկուցում կայ Կ. Պոլսի Հայերի մասին, Կ. Պոլսից գրուած.

“Կ. Պոլսում Հայերի դէմ մի հրովարտակ է ելած, որ այն Հայերն, որոնց բնակութիւնը այս քաղաքում 40 տարուց աւելի չէ, դուրս հանուին եւ տարագրուին Փոքր Ասիա, մինչեւ որ նրանց թիւը իջնէ 100.000ի„։

“...Edictum Constantinopoli emanasse contra Armenos, ut illi qui a 40 annis citra in dicta urbe habitant, discedant ac in Asiam se transferant, eosque ascendere ad numerum 100 milium animarum„. էջ 334։

Ոսկանի գործունէութիւնը Հոլլանդայում տեւել է 4 տարի եւ այդ միջոցին նա հրատարակել է հետեւեալ գրքերը.

1. 1666 Այբբենարան եւ քրիստոնէական.
2. „ Աստուածաշունչ.
3. „ Սաղմոս.
4. „ Քերականութիւն.
5. „ Քրիստոնէական.
6. 1667 Ժամագիրք Մեծ.
7. „ Աղօթամատոյց եւ Ժամագիրք.
8. „ Մաշտոց.
9. „ Քրիստոնէական, Հայ-լատին.
10. „ Աղօթամատոյց.
11. 1668 Աղուէսագիրք եւ Ուշխ. Խորեն.
12. „ Նոր կտակարան.
13. „ Տօնար.
14. „ Այբբենարան եւ քրիստոնէական.
15. 1669 Առաքել պատմիչ եւ
16. „ Շարակնոց:

Իր այս գործունէութեան ընթացքում Ոսկան երբեմն թեթեւ վէճեր է ունեցել իր տպարանի հայթայթիչների հետ: Այսպէս՝ Ամստերդամի նոտարական արձանագրութիւնների մէջ հանդիպում ենք այսպիսի մի վաւերագրի.

"1668 փետր. 21.

Ուրեմն ՃԷ. դարում հայերն այնքան մեծ բազմութիւն են եղել Կ. Պոլսում, որ տէրութիւնը ստիպուել է կարուկ միջոցի դիմել նրանց թիւը նուազեցնելու... մինչեւ հարիւր հազար հոգու:

"Ներկայացան ինձ, վկայեալ նոտար Henrich Outgersի, պ. Johan de Leeuw հայ՝ 23 տարեկան, եւ Jan Janoz Reckelman գրաշար, 27 տարեկան, երկուսն էլ Ամստերդամ քաղաքի բնակիչ, եւ այստեղի պարսկական ազգի եպիսկոպոս Ոսկան վարդապետի կողմից յայտարարեցին եւ հանդիսաւորապէս վկայեցին, որ յիշեալ Ինդրատուն (Ոսկան) պայման էր կապած գրա-թղթավաճառ Fredericq Schulerusի հետ, որ 200 թերթ տպագրական թուղթ բերէ յանձնէ իր տունը 7ից 8 շաբաթուան ընթացքում: Ոսկան Հոլանդերէն հասկանալով կարծել է թէ բերանացի խօսակցութիւնը բաւական էր պայմանը գործադրելու համար:

Յետոյ պարսկական ազգի քահանան վարդապետ ներկայանալով բացատրեց թէ իրօք 8 ամիս յառաջ այդպիսի պայման կապուել է, բայց Schulerus իր ժամանակին չէր յանձնել, այլ շատ վերջը, որով Ոսկան վարդապետ չէր ընդունել, այլ յանձն էր առել միայն ժամանակաւորապէս պահել իր տունը մինչեւ որ նա գայ եւ տանի...":

Ս. կարճ ժամանակով տպարանը գտնվում էր միմիայն վարդապետի ձեռքում եւ նրա անուան էր փոխադրուած: Աւետիք 1665ին դարձել էր Ջմիւռնիայից, բայց յետոյ Ոսկան նրա հետ միասին գնաց Լիվոռնոյ իր ջուղայեցի ընկերների հետ հաշիւ տեսնելու: Մեկնելուց յառաջ նրանք կանոնաւոր կտակ շինեցին, որտեղ յայտարարում են թէ իրենց բացակայութեան ժամանակ

եւ իրենց մահուան պարագային տպարանը դառնում է կարապետի սեփականութիւնը։ Այս պատճառով էլ 1668ին տպուած նոր կտակարանի վրայ գրուած է "...երկասիրութեամբ նուաստի Ոսկանի եպիսկոպոսի ... ի տպարանի աշակերտին իմոյ կարապետի բանի սպասաւորի..."։ կարապետ վարդապետ այդ միջոցին տպարանը Boomsloot փողոցից փոխադրել է աւելի յարմար տեղ, Kaizerstraat փողոցը։

Վերեւ յիշուած հրատարակութիւնների մեծ մասը մաքուր տպագրութիւն է։ Շատ լաւ է մանաւանդ Աղուեսագիրքը՝ "Գիրք Աշխարհաց եւ Առասպելաբանութեանց, որ է Աղուեսագիրք". որ սկսել է 1668ին "Ցամնթեղօտամուս ուճժէ։ Հոկտ. 1ին" եւ վերջանում է 1669 Յունվ. 20ին այսպիսի գոհաբանական խօսքով. "Շնորհօք եւ ողորմութ̃բ ամենազօրին Այ̃ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ աւարտեցաւ գրքուկս շահաւէտս", Այդ տարին, 1669ին էր, որ Ոսկան դադարեցրեց իր գործունէութիւնը Հոլլանդայում եւ հեռացաւ Իտալիա։ Հոլլանդացի պատմագիրները չգիտեն Ոսկանի հեռանալու պատճառը, իսկ Հ. Զարբհանալեան ասում է. "Գաղղիացի մի բանասէր՝ J. D. Bory[1] այս փոխադրութեան պատճառը կը համարի Ոսկանայ կողմանէ խիղճ մը, ուղղափառ (բողոքական) աշխարհի մէջ եկեղեցական գրքեր տպագրելը։ Մենք (Զարբհանալեան) աւելի հաւանական կը կարծենք նոյն խիղճը՝ զա-

1 Les Origines de l'Imprimerie à Marseille. Recherches historiques et bibliographiques, Marseille 1898.

նոնք ընդունող ու իրենց հոգեւոր պաշտամանց մէջ գործածող ժողովրդեան կողմանէ։ Ջնոյն կ'ակնարկէ Ջմիւռնիոյ ժողովրդեան կողմանէ առ խորհրդականս պռովանսայ արդարութեան ատենին ուղղած խօսքերը Ոսկանայ նկատմամբ թէ "ուղեց նախապէս՝ իրմէ հերետիկոսաց Ամստերդամ քաղաքին մէջ հաստատուած տպարանը Մարսիլիա փոխադրել, հռոմէական ուղղափառաց ոճովը գրքեր տպագրելու, ուստի եւ բռնադատեցաւ հոլլանդայէն երթալով ի Լիվոռնոյ հաստատել տպարանը։ Ա՛ուզէր թերեւս այս փոխադրութեամբ ստուտ հանել Համազասպեանի իրեն դէմ յարուցած ամբաստանութիւնները"։ Այս Համազասպեանը (Թադէոս քահանայ) նախ ընկերացել էր Ոսկանին տպագրական գործում եւ ապա "շահու տեսակէտով՝ ոչ թէ միայն իրարմէ զատուեր են այլ եւ իրարու հակառակամարտ երեւցած. եւ Թադէոս զՈսկան արեւմտեայց աչքէն հանելու եւ զինք անպատիւ ցուցնելու համար թուի թէ անոր կրօնական կարծիքն ալ ուզած ըլլայ ամբաստանել, յիրս իրս անհամաձայնութիւնն ընդ արեւմտեայս, որով թէ քաղաքական եւ թէ կրօնական իշխանութեանց առջեւ կասկածելի երեւցնելով անոր ընթացքն ու գործը, մտադրութիւն եւ զգուշութիւն հրաւիրել վրան"[1]։

Ոսկան որոշել էր գաղղիա յատկապէս Մարսիլիա տեղափոխել իր տպարանական գործն եւ որպէս զի գաղղիական կառավարութեան կողմից արգելքի չհանդիպի, 1669 Մայիս 26ին Լուդո-

---

1 Պատմ. Հայկ. Տպ., էջ 112։

վլկոս Ժ.Գ.-ին լատիներէն լեզուով մի աղերսագիր էր ուղարկել եւ իր տպագրած Աստուածաշունչից մի օրինակ ընծայել Թագաւորին։ Աղերսագիրը նպաստաւոր ընդունելութիւն էր գտել։ Ոսկան գնաց Պարիս եւ արտօնութիւն առաւ Մարսիլիայում, Լիոնում կամ Գաղղիայի որեւէ ուրիշ քաղաքում տպարան հաստատել հայերէն գրքեր տպագրելու, «որովհետեւ, ասուած էր արտօնագրում, այդ գործը մեծապէս օգտակար էր հասարակութեան եւ արեւելեան լեզուների ուսման մեծ դիւրութիւն պիտի ընծայէր»։ Բայց միեւնոյն ժամանակ այս արտօնագիրը պայման էր դնում, որ «հրատարակելի գրքերը հռոմէականկաթոլիկ կրօնի վարդապետութեան հակառակ բան չբովանդակեն»։ Ոսկան այս պայմանին համաձայնուեց թէեւ վախենում էր թէ այս սահմանափակումը կարող է առիթ դառնալ ապագայում հայկական արարողութիւնն ու ծէսերը փոփոխելու եւ նոյն իսկ գործադրութիւնը խանգարելու։ Ոսկանի այս երկիւղն անհիմն չէր, որովհետեւ այդ տարիներում ուրիշների ձեռքով տպագրուած գրքերում դրա նշաններն սկսել էին երեւալ։

Ոսկանի գործունէութիւնը Հոլանդայից դուրս՝ մեր պատմութեան չի վերաբերում։ Այսչափ միայն յիշենք, որ Ոսկան նախ Լիվօռնայում մէկ տարի գործելուց յետոյ տեղափոխուեց Մարսիլիա։ Լիվօռնայում 1670ին նա հրատարակեց 2 եկեղեցական գրքոյկ, «Պարտէզ» աղօթագիրքն եւ «Քրիստոնէական վարդապետութիւն»։ Նրա տպարանը շարունակում էր կրել Էջմիածնի

եւ Ս. Սարգիս զօրավարի անուններըը։ Իսկ Մարսիլիայում նա տպեց 1673—1675 ընթացքում, 9 գիրք, "Գրքուկ կարեւոր", ժամագիրք, նարեկ, ճարտասանութիւն, Այբբենարան, Արհեստ համարողութեան, փոքր նարեկ եւ "կանոնք զգուշութեամբ պահելոյ զանձն"։ Կաթոլիկ հոգեւոր իշխանութիւնը շատ խիստ կերպով հսկում էր Իտալիայում եւ Գաղղիայում օտար լեզուներով եղած հրատարակութիւնների վրայ. այս հսկողութիւնը տարածվում էր նաեւ հայկական տպագրութեան վրայ։ Այս նպատակով յատուկ քննիչ էլ կար Հռոմում, Յովհաննէս Ճակոբ վարդապետ Հոլով, զարգացած, բազմահմուտ եւ լուսագէտ մի եկեղեցական, որ ինքնուրոյն երկերից զատ թարգմանութիւններ էլ ունի տպագրուած։ Դժբախտաբար կային մոլեռանդ հայազգիներ, որոնք ճգնում էին կասկած յարուցանել Ոսկանի տպագրութիւնների "կրօնական մաքրութեան" մասին եւ Հռոմի ուշադրութիւն էին հրաւիրում նրանց "վնասակարութեան" վրայ։ Այս հանգամանքը քիչ չէ ազդած Ոսկանի բարոյական եւ ֆիզիքական կացութեան վրայ, մանաւանդ որ նիւթական միջոցների կողմից էլ նա շարունակ դժուարութիւնների էր մատնուած, որ մասամբ պատճառ է համարվում նրա մահուան 1674ին Մարսիլիայում։ Հայկական տպագրութեան պատմութեան մէջ այս եռանդուն եւ արդիւնաւոր աշխատաւորը պատուաւոր տեղ է գրաւում։

Ոսկան իր գործունէութիւնը Մարսիլիա փոխադրելով հանդերձ իր տպարանի ամբողջ

կազմը էր կարողացել հետը տանել: Նրա տա-
ռերի մի մասը մնացել էր Ամստերդամում: Հոլ-
լանդական աղբիւրների համաձայն այդ միեւնոյն
տառերը գնելով Անդրէաս Ակոլութուս (An-
dreas Acoluthus) տպել է Լայպցիգում 1680ին
իր Obadias Armenusը (Ճաշոց Գիրքն), որ գեր-
մանիայում առաջին հայ տպագրութիւնն է:

Դ.

Շահին կանդի Հալէպցի հայ լեզուագէտը
Լէյդէնում: Բոլոմկի-Ալի Բէյի Աստուածա-
շունչի թրքերէն թարգմանութիւնը: Շահինի
քննութիւնն ու եզրակացութիւնը դրա մասին:
Բոլոմկու ձեռագիրն Ամստերդամում: Լէյդէնի
պրոֆէսորներ Գոլիոսի եւ Պետրէուսի կարծիք-
ները Շահինի մասին: Շահինի վիճակը:

—

Այն ժամանակ երբ Ամստերդամում Աս-
տուածաշունչի հայերէն հրատարակութեամբն
էին զբաղուած, մերձակայ Leyde կամ այժմ
Leiden քաղաքում[1], մի ուրիշ ուսումնական հայ
աշխատում էր թրքերէն Աստուածաշունչի վրայ

---

1 Լէյդէն քաղաքը վաղուց համբաւաւոր էր իր պե-
տական հաստատութիւններով եւ այդ պատճառով "Հիւ-
սիսային Աթէնքի" փառաւոր կոչումն էր վայելում: Նշանաւոր
են այժմ էլ՝ համալսարանը, Ազգագրական թանգարանն եւ
Ս. Պետրոս եկեղեցին, ինչպես նաեւ քաղաքային Տունն իր
հազուագիւտ արեւելեան դորգերով:

Ա. *յս հայը կոչվում էր* Շահին Կանդի (Shahin Kandi), *որ ծննդեամբ Հալէպցի էր, ուրեմն Սիրեցի։ Սա՝ Էյդէնի համալսարանի մատենադարանում արաբերէն, պարսկերէն եւ թրքերէն ձեռագիրների վրայ հսկող ու օրինակող էր եւ միանգամայն այդ լեզուների թարգման։*

Laurens de Geer *ուսումնասէր ու հարուստ Հոլլանդացին, որ Էյդէնի համալսարանի խնամակալն էր, որոշում է Թուրք ժողովրդի մէջ քրիստոնէութիւն տարածել եւ այս նպատակով Աստուածաշունչն ամբողջապէս այսինքն թէ Հին եւ թէ Նոր կտակարանները Թրքերէնի թարգմանել տալ։ Նա դիմել է Լոնդոն, Կ. Պոլիս եւ Էյդէն, ուր որ յոյս է ունեցել Հմուտ թարգմանիչներ գտնելու։ Նրա յանձնարարութիւնն ընդունել եւ կատարել է Կ. Պոլսում* Albertus Bobovius *կամ* Bobovski *անունով մի լեհացի, որ մահմեդականութիւն ընդունելով, անունը վերածել է Ալի Բէյի եւ սուլթան Մուհամմէդ Դ.ի Ա. թարգմանն է դարձել։ Լաբէնա՝ Բոբովսկու կատարած թարգմանութիւնն ուղարկել է Էյդէնի Համալսարանն, որպէս զի քննեն այնտեղ թէ որչափ ճիշդ է կատարուած։ Համալսարանն էլ այդ գործը յանձնում է Շահինին, իբրեւ մասնագէտի։ Շահէն երկարօրէն զբաղվում է այդ թարգմանութեամբ եւ եզրակացնում է թէ նա անյաջող է, մէջը խոշոր սխալներ կան, Թրքերէնը խորթ է, օտարոտի բառերով լի։ Որպէս զի իր քննութիւնը եւ եզրակացութիւնը հաշափելի կերպով ապացուցանէ, Համալսարանի*

առաջարկութեամբ ինքն է թարգմանում թրքերէն լեզուով Աստուածաշունչից մի քանի գլուխ, համեմատութեան մէջ դնելու համար: Համալսարանը՝ յանձին նրա պրոֆէսոր Գոլիուսի (Golius[1] կամ Gool), մեծապէս հաւանում է շահինի կատարած թարգմանութիւնն եւ 1666 Ապրիլ 5 թուականով հետեւեալ նամակն է ուղղում Laurensին, որը մենք յառաջ ենք բերում ամբողջովին, թարգմանօրէն.

"Ընդ սին ուղարկում եմ երկու թարգմանութիւն, որ Հայն է կատարած, փորձի համար, մէկը ամբողջ թերթի վրայ, միւսը կէս թերթի համար: Եթէ դուք կը նախընտրէք, որ թարգմանութիւնը գրուի ամբողջ թերթի վրայ եւ տողերը միմեանցից չբաժնուին այդպէս էլ կարելի է անել: Bobovius-ի թարգմանութիւնը քննեցի եւ շատ թերութիւններ գտայ մէջը, ոչ միայն թրքերէնի ոճի տեսակէտից այլ եւ իբր սխալ թարգմանութիւն: Մի քանի տեղ Ս. Գրքի իմաստը չէ հասկացել. տեղ տեղ բոլորովին մոռացել է թարգմանել. տեղ տեղ էլ լատիներէնից եւ յունարէնից առնուած բառեր է ու-

---

1 Այս հոլանդացի ուսումնականը նշանաւոր արեւելագէտ էր, հմուտ՝ արաբերէնի եւ թրքերէնի (ծն. 1596, վախճ. 1647): Նա ճանապարհորդած է Մերձաւոր Արեւելքում եւ մէկ տարի էլ Կ. Պոլիս է մնացած, հոլլ. դեսպան Հապայի մօտ: Նա ունի լեզուագիտական հետեւեալ հրատարակութիւնները, ի մէջ այլոց արաբ-լատին բառգիրք, որ տպուած է 1653ին Ամստերդամում (Jacobii Golii, Lexicon Arabico-Latinum contextum ex probatioribus orientis Lexicographis եւ այլն):

ծել, որոնք բոլորովին անծանօթ են թրքերէնում։ Չգիտեմ ինչ բնագիր է ունեցել թարգմանիչն իր աչքի առջեւ, ուստի գրեցի նրան, որ յայտնէ թէ ո՞ր լեզուից է թարգմանուած, որպէս զի ըստ այնմ կարելի լինի հնամեմատել, որով սրբագրելն էլ աւելի հեշտ է»։

«Ինձ թւում է թէ Հայլը, որի թարգմանութիւնը ձեռքիս տակն է, կարող էր շատ յաջող կերպով այս ամբողջ աշխատանքը կատարել։ Նա նոյն իսկ կարող է աւելի դիւրութեամբ նորից թարգմանել արաբերէն բնագրից, որ վաղուց գործածութեան մէջ է դրեւելքում, քան թէ Բոլովկու այս թարգմանութիւնը սրբագրել եւ թրքերէնի դարձնել։ ... Ես կարծում եմ թէ նոր թարգմանութիւնն աւելի ծախք չի պահանջի, քան թէ եղածը սրբագրելը։ Թէեւ չեմ կարող ուրիշի աշխատանքը գնահատել, բայց որովհետեւ ես ինքս վճարում եմ ֆլորին 0.80 ամէն մի թերթին, որ բաղկացած է 4 էջից, իւրաքանչիւրը 21 տողից, հետեւաբար այս պատուական մարդը (Շահին), որ ստիպուած է քննել, ուղղել եւ օրինակել, անշուշտ 25—30 սէնտ աւելի պէտք է որ վարձատրուի։ Եւ քանի որ ամբողջ թարգմանութիւնը հարկ է փոխել արաբական բնագրին յարմարցնելու համար ուստի արդարութիւնը պահանջում է, որ նրան վճարուի թերթին ֆլ. 1.25։ Ինչ վերաբերում է այն թրքերէն թարգմանութեան, որ կատարուած է Անգլիայում[1], Ջէման (կամ Սի-

---

1 Novum Testamentum graece et Turcice, versum

ման) անունով անգլիացու ձեռքով եւ տպուած է Անգլիայում, որից էլ 2 թերթ ուղարկել էին ինձ, Հայրը այս էլ քննեց եւ գտաւ որ այս թարգմանութիւնն էլ յաջող չէ, որովհետեւ բացի նրանից, որ գրուածքը գժուարութեամբ է կարդացվում, լեզուն շատ տեղ անհասկանալի է, ոճը բունազբօսիկ եւ խորթ: Հայրը ինձ հետ միաին պաւղոս Առաքեալի առ Տիմոթէոս թղթին 5դ գլխի առաջին 5 տողերը քննելուց եւ համեմատելուց յետոյ նորից թարգմանեց այդ՝ թրքական լեզուի ոգւով ըստ կարելւոյն պահպանելով բնագրի ոճը: Նրա այս թարգմանութիւնն այնչափ ընտիր է, որ մեծ հաճոյք պիտի պատճառէ հմուտ ընթերցողին...»:

Նամակի շարունակութեան մէջ Golius *խոստում է երկարօրէն թէ որչափ աստուածահաճոյ կարեւոր գործ է, որ Աստուծոյ խօսքը հասկանալի եւ ընտիր թրքերէն լեզուով թարգմանուելով տարածուի մահմետական թուրք ժողովրդի մէջ*[1]:

---

per Gul. Seaman, Oxon. 1666, 4° (Catal. impr. in Bibliotheca Bodleiana, Oxonii 1738, II, 577).

Այս միեւնոյն թարգմանութեան մասին մի հետաքրքրական նամակ կայ լատիներէն լեզուով, նոյն Laurens de Geer*ին ուղղուած. նամակագիրն է* J. C.: *Այս տառերի տակ ծածկուած է* Johan Comenius, *աստուածաբանն եւ մանկավարժը, որ վախճ. Ամստերդամում* 1670*ին, բայց սա կապ չունի մեր պատմութեան հետ, ուստի աւելորդ ենք համարում մէջ բերել:*

1 De Bockhandel te Amsterdam, voor namelijk in de 17° Eeuw, door M. M. Kleerkooper, aangevuld en uitgegeven door W. P. Van Stockum, 's Gravenhage 1914.

Ինչ հետեւանք է ունեցած Գոլիուսի այս գրապրուելիւնը յայտնի չէ, բայց Բոլովսկու բուն ձեռագիր թարգմանութիւնը այժմ գտնվում է Ամստերդամի համալսարանի Մատենադարանում եւ պահվում է մեծ խնամքով առուր փայտէ տուփի մէջ: Մենք առիթ ունեցանք քննելու այն-տեղ այդ ձեռագիրը պարզապէս հետաքրքրութեան համար եւ միայն թղթերէն լեզուի հարաստութեան տեսակէտից, ի նկատի ունենալով, որ դրա մասին էր քննադատների գլխաւոր դժգոհութիւնը: Իրօք շատ բառեր կան այնտեղ որոնք ոչ մի նմանութիւն չունին թղթերէնի, գոնէ Ս. Պոլսի այժմեան գրական լեզուի. դարձուածները, բացատրութեան ձեւերն եւ առհասարակ ոճը — խորթ են, անհարթ եւ շատ տեղ անհասկանալի: Բայց դրա փոխարէն ձեռագրի արտաքին տպաւորութիւնը շատ նպաստաւոր է. գիրը շատ գեղեցիկ, կոկիկ եւ դիւրաւ ընթեռնլի: Հետաքրքրական է այնտեղ նաեւ հետեւեալը, լուսանցքներում, տեղ տեղ, կան կարմիր թանաքով գրուած լուսաբանութիւններ եւ նոր թարգմանութիւն այս կամ այն պարբերութեան: Ուր որ այսպիսի երկրորդ թարգմանութիւն է ձեռեղուած, առաջինի, այն է բնագրին տակ կարմիր գիծ է քաշուած, համեմատութիւնը դիւրացնելու համար: Այս նոր թարգմանութիւնները աւելի հարազատ են, այսինքն թղթերէն լեզուի կողմից աւելի հասկանալի եւ աւելի մա-

---

(Գրավաճառութիւնը Ամստերդամում, ձէ· դարում, տպ· Հաագում 1914, էջ 1242:)

քուր ոճով: Շատ հաւանական է, որ Շահինն է կատարած այդ, ապացուցանելու համար Թոքսովսկու գրութեան անյաջող լինելը, բայց ձեռագրում ոչ մի տեղ այս մասին որոշ յիշատակութեան չհանդիպեցանք:

Ինչպէս երեւում է Լէյդէնի համալսարանի արեւելագէտները վաղուց են զբաղուել Աստուածաշունչի Թրքերէն թարգմանութեամբ, որովհետեւ այդ թուականից էլ յառաջ, այն է 1662ին դարձեալ գրագրութիւն կայ այդ մասին, այս անգամ ոչ թէ լատիներէն կամ հոլլանդերէն լեզուներով այլ գերմաներէն: Ուստուցչապետ Petrejus[1] 1662 դեկտեմբեր 24 թուով գրում է Կ. Պոլսի հոլլանդական դեսպան Levinius Warnerին[2], այդ խնդրի առթիւ եւ յիշում է թէ Լէյդէնի համալսարանում կայ մի արաբ, որ շատ լաւ հմուտ է արաբերէն, պարսկերէն, Թրքերէն, իտալերէն եւ հայերէն լեզուներին, որի աջակցութեան ինքն անհրաժեշտ է համարում դիմել Թրքերէն թարգմանութիւնը քննելու, համեմատելու եւ ուղղելու համար: Այս արաբը միեւնոյն շահին կանդին է, որին նամակագիրը պարզապէս արաբ է անուանում իր երկրի (արաբական Սիւրիա) վրայ հիմնուելով, ինչպէս Նոր-Ջուղայեցի հայերին՝ հոլլանդայում

---

[1] Այս գիտնականի մասին (նաեւ Petraeus ձեւով) տես C. G. Jöcher, Allg. Gelehrten-Lexicon, III, 1751, S. 1439.

[2] Levini Warneri De rebus Turcicis, epistolae ineditae. Lugd. Bat. 1883, 8°.

երբեմն ալարսիկ էին համարում պաշտօնապէս՝ իրենց պարսկաստանցի լինելու պատճառով։

Շահին՝ Լէյդէնում, վերջին տարիները շատ կարօտութեան մէջ է ճնացել։ Այս երեւում է նրա՝ պրոֆ. Գոլիուսին գրած մի նամակից, որտեղ նա գանգատւում է թէ ոչ ինքը Գոլիուս եւ ոչ միւս արեւելագէտ ուսուցչապետը պետրէուս եւ ոչ էլ մի այլ պաշտօնական անձ, նրան չեն օգնում իր նիւթական նեղ դրութեան մէջ։ Այս-տեղ Շահին պատմում է թէ "իր հայ բարեկամները" տեսնելով նրա վիճակը, Իտալիա ուղեւորուելու ժամանակ առաջարկել են նրան, որ գնայ իրենց հետ, խոստանալով որ կը հոգան նրա բոլոր ծախքերը, բայց ինքը չէ ուզեկցել, իսկ այժմ զղջում է, որովհետեւ, ասում է նա, շնորհիւ այդ հայ բարեկամների կարող էր այնտեղ, Իտալիայում "հաշար տեսակ գործ գտնել, ուր որ այտեղ նրա մասին այլ եւս հոգացող չկայ" եւ նա բացատրում է այս՝ հետեւեալ պարսկերէն առածով. "երբ ջուրը երկար ժամանակ անշարժ մնայ, կը հոտի"...։

Շահինի գրութիւնները հրատարակող Հոլանդացին՝ M. Houtsma՝ իր արած գիտողութիւնների եւ տուած բացատրութիւնների մէջ, մեծ գովասանքով է խօսում նրա մասին.

"Շահինի նամակները, ասում է նա, լիքն էին պարսկերէն առածներով. մի անգամ էլ յառաջ է բերած Թուքերէն մի առած, բայց Շահին իր նամակները միշտ արաբերէն էր գրում...։ Նա գիտէր նաեւ հայերէն"։ "Ա"

հասարակ նա շատ խելացի եւ հմուտ արեւելքցի էր»:

«Պրոֆ. Գոլիուսի աշխատակիցների մէջ Շահին լաւագոյն արաբերէն գրողն էր, ի բաց առեալ բնականաբար Մոհամէդ-ալ-Հութթաթին: Պարսկերէն յիշատակութիւնները ցոյց են տալիս Շահինի սրամիտ եւ միանգամայն զարգացած մարդ լինելը: Նրա արաբերէն գրուածները արժանի են արաբական Հատընտիր ընթերցուածքների (Christomatie) մէջ դրուելու...»:

«1669 Մայիս 31ից յետոյ ոչ մի տեղեկութիւն չկայ Շահինի մասին. Մեռա՞ւ նա թէ Հոլլանդայից հեռացաւ, յայտնի չէ. հաւանական է որ նա մեկնած լինի Արեւելք, իր հայրենիք»:

Houtsma վերջացնում է հետեւեալ դառն տողերով իր հայրենակիցների հասցէին.

«Մեր երկրում Շահին կանդիի համար այլ եւս գործ չկար, որովհետեւ Գոլիուսի մահից յետոյ արաբերէնի ուսուցչի պէտք չէին զգում: Մեր հայրերը Արեւելքի հետ առուտուր անելով մեծ հարստութիւն էին դիզել. Նրանց որդիքը այդ հարստութիւնը վայելում էին, առանց որ եւ է ծախք կամ զոհողութիւն յանձն առնելու: Շատ ստանալ եւ քիչ տալ՝ անգլիացի եւ հոլլանդացի վաճառականների համար սկզբունք էր դարձել, որի տխուր հետեւանքը նրանք շուտով պիտի զգային[1]»:

---

1 "Uit de oostersche correspondentie van Erpenius, Jac. Golius en L. Warner... Door M. Th. Houtsma, Amsterdam 1887, in 4°, էջ 69–74.

Ե.

Տպարանի վերականգնումը Ամստերդամում 1685 ին: Մատթէոս Յովհաննիսեան եւ իր տպարանական վաւերագիրները: Վանանդեցիների տասնամեայ գործունէութեան շրջանը: Թոմաս արքեպիսկոպոս եւ Ղուկաս Վանանդեցի նուրիչնանեան: Թոմասի կտակը: 1695—1705 տպուած գրքերն եւ նրանց յիշատակարանները: Թոմասի մահը:

—

Ոսկանի հեռանալուց յետոյ, մօտ 15 տարի Ամստերդամում տպարանը դադարեց գործելուց, բայց 1685 ին վերստին սկսեց աւելի մեծ եռանդով եւ աւելի ընդարձակ կերպով: Այս նոր գործունէութիւնը ամբողջապէս 3 Վանանդեցու[1] ենք պարտական, որոնք Ամստերդամի Հայ գաղութի փառքն են կազմում, մանաւանդ մէկը, Ղուկասը:

Երբ Ոսկան վախճանուեց, նրա քեռորդին Սոլոմոն Լեւոնեան տպարանի վարչութիւնն իր վրայ առնելով 4 գիրք հրատարակեց Մարսիլիայում: Գործը սակայն, այնուհետեւ մեծ անյաջողութիւնների հանդիպեց, գլխաւորապէս կրօնական տարբերութիւնների եւ նեղբին վէճերի պատճառով, թէ գաղղիայում եւ թէ մա-

---

1 Վանանդ գեղը գտնւում է գողթան գաւառում, Ալբուլխից մօտ 14 կիլոմետր հեռու: Սրա բնակիչները նոյն ձեռնարկու ոգին ունէին ինչ որ առհասարակ ազուլեցիք եւ ցրուած էին զանազան կողմեր, գործունէութեան ասպարէզ փնտռելու:

նաւանդ Իտալիայում եւ նոյն իսկ դատերի ա-
ռարկայ դարձաւ, որով Սողոմոն տխրուած եղաւ
տպարանը վերստին տեղափոխել Ամստերդամ,
ուր ամէն ազատութիւն ապահովուած էր իրեն:
Այս պարագան յայտնի է նաեւ Հոլլանդացի
պատմագրին, որ գրում է "Ոսկան 1670ին իր
տպարանը Մարսիլիա տեղափոխեց, բայց այնտեղ
նրա տեւողութիւնը երկար չեղաւ: Հայերի իրար
մէջ ունեցած նեղքին տարաձայնութիւնները,
որոնց մէջ խառն էր նաեւ Ոսկան եպիսկոպոս,
վերջ ի վերջոյ պատճառ դարձան տպարանի փակ-
ման...: Նոր վէճերի առաջն առնելու համար
հայերը լաւագոյն համարեցին տպարանը դար-
ձեալ Ամստերդամ բերել"[1]: Այս անգամ տպա-
րանի ղեկավար ու տէր դարձաւ Մատթէոս Ցով-
հաննէսեան Վանանդեցին, որ թէ՛ համուտ գրա-
շար էր եւ թէ՛ առհասարակ լաւ տեղեակ ա-
րուեստին, քանի որ 14 տարի գործել էր այս
ասպարէզում նախ Ոսկանի եւ ապա Սողոմոնի
մօտ: Ահա ինչպէս է պատմում ինքը Մատթէոս՝
իր ձեռնարկութիւնը, Ամստերդամում 1685ին
իր տպած առաջին գրքի, Շարականի յիշատա-
կարանում:

"Ես նուաստս յամենից Մատթէոս գպիրս՝
եկի ծառայելու ընդ արենակից վարդապետին
իմոյ յերկիրն Իտալացւոց եւ ի մայրաքաղաքն
Հռոմ, եւ վեհն իմ (Ոսկան եպիսկոպոսի մասին
է խօսքը) գնաց յայլ ուրեք, եւ ես դարձայ
յԱլիկօռնոյ առ ոտս աշակերտի տեառն Ոսկանայ

---

1 Bibliotheekleven 1924, Nr. 3, Utrecht.

արհիեպիսկոպոսի՝ տեառն Կարապետի վարդապետի, եւ ուսայ ի նմանէ զարհեստ շարաբարդութեան եւ ճնացի ընդ վեհին Ոսկանայ արհիեպիսկոպոսի եւ քեռորդւոյ նորա Սաղոմոնի ամն չորեքտասան եւ վարձուց կողմանէ ոչինչ ընկալայ. քանզի եւ տէր Յակոբ կաթողիկոսն գրեաց առ իս ի Մարսիլեայ թէ ընկալայ զհամբաւած ի քէն զբարուդք ուսանիլն զարհեստիդ. վասն որոյ եւ զփոքր նաւակս օրհնութեան առաքեցի առ հոգեւոր որդեակդ իմ Մատթէոս, զի բարուդք ծառայիցես տեառն Ոսկանայ արհիեպիսկոպոսի աշակերտի իմոյ եւ զկնի վախճանի նորա մի ումեք կարօտասցիս. այնպէս համարեա՛ թէ ինձ ես արարեալ որպէս ասէ Տէրն. եւ ես զքոյ վարձն հատուցանելոց եմ. եւ թէ մահ հասարակաց հանդիպի՝ զհետանաճեայ նստող սրբոյ աթոռոյն պարտին հատուցանել: Սակս որոյ ժամանակս բաղումս ծառայեցի եւ զկնի փոխելոյն նոցա առ Աստուած, եւ իմ տեսեալ զչարակրութիւն եւ զանաջողութիւն յամենայն կողմանց, վասն որոյ դիմեցի յերկիրն Հոլանդիոյ՝ ի վայելուչ քաղաքն Ամստէլօտամ, եւ գտի զլաւ վարպետ իմն, որ անուամբ Նիկողայոս ասի եւ ետու յօրինել զգիրս այբուբենից բազմօք աշխատանօք եւ զայլ տեսակս եւս գրոց նօտրի եւ բոլորի: Եւ ի աւարտման գործոյս՝ ոչ ունելով բաւականապէս զդրամս վասն տպելոյ զգիրս, եւ ընկերացայ ընդ տեառն Յոհաննու երեւանցւոյ սրբանուէր քահանայի եւ ընդ ջուղայեցի պարոն Պօղոսին սակս երկուց գրոց միայն՝ Շարակնոցի եւ Ժամագրքի»:

Մատթէոսի յիշած ընկերներն էին՝ գաղղիի հոգեւոր հովիւը՝ Յովհ. քահ. Ուղուրլեան երեւանցին եւ ջուղայեցի վաճառական Ալեքսան Պօղոսեան: Տպարանն ի սկզբան շատ լաւ գործում է, բայց շատ չանցած թիւրիմացութիւնն ու վէճերը սկսում են ընկերների մէջ, որոնք յանգում են դատավարութեան: Այս վէճերի մասին մի քանի նոտարական արձանագրութիւններ կան, որոնք ցոյց են տալիս այն ժամանակի տպագրական գործի ինչպէս եւ գրքերի վաճառման հանգամանքները, ուստի աւելորդ չենք համարում յառաջ բերել, թարգմանելով հոլլանդերէն բնագիրներից.

1. *Ալեքսանի գանգատները.*

"1694 Մարտ 3. վաճառական Alexan Bogos *կամ* Paolo՝ *գանգատ ներկայացրեց* Oannes de Ogorlou *հայ քահանայի դէմ, որ հիւանդ պառկած է իր տունը*":

"Գանգատաւորը յայտնեց թէ հայ քահանան, Matteo Joannes *եւ ինքը՝ ընկերութիւն են կազմել հայերէն լեզուով գրքեր տպելու եւ ծախելու,* — շահելու նպատակով: Նրանք հրատարակել են մինչեւ հիմայ 8300 օրինակ զանազան գրքեր, որոնցից 6000 օրինակը՝ Ալեքսան՝ իր ընկերների հաւանութեամբ Ջմիւռնիա է տարել ծախելու, բայց մեծ դժբախտութեան է հանդիպել: Ջմիւռնիայում տեղի ունեցած մեծ երկրաշարժի ժամանակ նա կորուցել է իր բոլոր ունեցածն, ի մէջ այլոց նաեւ այդ գրքերը, բաց ի մի քանի հատից, որոնց վաճառման արդիւնքը

գործ է ածել իր ապրուստի համար: Երբ Ալեքսան Ջմիւռնիայից դարձել ու իր գլխին եկած փորձանքը պատմել է, մեղադրեալը (քահանան) տուել է իր հաճութիւնը եւ մխիթարել է նրան: Բայց այստեղ ճնուում էր 1600 օրինակ հայերէն գրքեր, որոնց երրորդ մասը պատկանում է իրեն, Ալեքսանին, որն եւ պահանջել է Ուղուրլեանից, բայց սա մերժել է տալ»:

Մեղադրեալ քահանան 1694 Մարտի 5ին Ալեքսանի այս գանգատը նոտարի միջոցով ստանում է եւ պատասխան է ուղարկում թէ ինք հիւանդ պառկած է եւ անկարող է գործի մասին խօսիլ:

Նոյն Ալեքսանը քիչ յետոյ գանգատ է տալիս միւս ընկերի, Մատթէոսի վրայ: Ահա ի՞նչ է ասում այս գանգատը.

"1694 Յունիս 20. Գանգատ հայ վաճառական Paolo Alexanի կողմից Matheus di Hovannesի դէմ„:

"Ալեքսան կանոնաւոր հաշիւ է պահանջում Մատթէոսից այն հայերէն գրքերի համար, որոնք տպուել են ի հաշիւ 3 ընկերների, Յովհ. քահ. Ուղուրլեանի, Մատթէոս Յովհաննէսեանի եւ գանգատաւոր Ալեքսանի: Ալեքսան յայտնում է թէ դուք, Մատթէոսդ, ծախել էք գրքերը, օգտուել էք դրանից եւ նրա բաժինը չէք տալիս: Բացի դրանից դուք պարտաւոր էիք պահել մամուլը, տառերն եւ այլ տպարանական իրերը„:

"Մեղադրեալը, Մատթէոս, պատասխանեց թէ երբ իր կատարած ծախքերը հանէ, այն ժա-

մանակ պատրաստ է օրինաւոր հաշիւ ներկայացնելու„։

“Նոտար D. Van Liebergen„։

2. *Մատթէոսի պահանջը.*

“1694 դեկտ. 2. ներկայացան իմ, François Tixerandet Ամստերդամի նոտարիս առջեւ, վկաներ՝ պպ. Gerrit Huijgens 75 տարեկան, Thomas Clapheck 49 տարեկան եւ Gaspar Steen 53 տարեկան, երեքն էլ կազմարարներ եւ ի ներկայութեան հայ տպարանատէր Matteo Joannesի հանդիսաւորապէս եւ ճշմարտապէս յայտնեցին թէ ինչ էր այս վերջինի պահանջը։ Gerrit վկայեց թէ 8 կամ 9 տարի յառաջ (ճիշդ չէ յիշում) պահանջատէր Matteoի հետ գտնվում էր Nicolaesի տունն, որին Մատթէոս պատուիրեց մի շարք տպարանական իրեր, մամուլ եւ տառեր եւ Nicolaes Kis յանձն առաւ չինել Մատթէոսի ուզած իրերը։ Այս բանակցութիւնը տեղի ունէր իր, Gerritի միջոցով„։

“Thomas Clapheck վկայեց թէ ինք 9 տարի յառաջ պահանջատիրոջ հետ էր, երբ սա գնեց այրի Christoffel Conradusից մի տպագրական մամուլ 150 փլորինի եւ այս գումարը Մատթէոս լիովին վճարեց նրան։

“Gaspar Steen էլ վկայեց թէ ինք 2 տարի յառաջ հայ քահանայ De Ogourlenից խնդրել է, որ տպարանական մամուլը ծախէ կամ փոխ տայ իրեն, բայց քահանան պատասխանել է թէ չէ կարող ոչ ծախել ոչ փոխ տալ„։

3. Կայացած համաձայնութիւնը.

Հայ տպագրական գործիչների այս գանգատները բնականաբար յուզել են հայ գաղութը, որ իրաւունք ուներ դժգոհ մնալու, ուստի ազդեցիկ վաճառականներ միջամտել են եւ յաջողել են գործը հաշտութեամբ կարգադրելու, ինչպէս վկայում է հետեւեալ վաւերագիրը:

"1695 ապրիլ 15.

"Ներկայացան պարոնները Charriman di Morat, Persich di Moceta, Vangely di Panos եւ Pietro di Girakos, *բոլորն էլ այս քաղաքում հաստատուած հայ վաճառականները եւ թարգմանի միջոցով վկայեցին թէ այս ապրիլի 1-ին վերոյիշեալ* Charriman*-ի (Շահրիման) տանն էին գտնվում իրենք եւ* Alexan Paolo *ու* Matheo Joannes *հայերն: Ընտեղ այս երկուքի մէջ՝ հայերէն գրքերի վերաբերեալ իրենց մէջ ունեցած վէճը հետեւեալ կերպով վերջացրին: Մատթէոս՝ 14 օրուան ընթացքում Ալեքսանին պիտի յանձնէ 600 օրինակ երաժշտական գիրք (Շարական) եւ պիտի պահէ իր բաժինը տպարանական ինչքի մէջ. իսկ Ալեքսան պիտի վճարէ Մատթէոսին 325* Rijksdaalder[1] *„:*

"*Սրանք էլ (Ալեքսան եւ Մատթէոս) հանդիսաւորապէս յայտարարեցին թէ այս եղանակով են կարգադրած իրենց վէճը: Ա յս ձեւի յայտարարութիւնը հայոց մէջ հաւասար է եղել ծանր երդման...„:*

1: Մէկ Rijksdaalder *արժէր 2 ֆլ. 50 սէնա, դուրսը = 812,90 հոլանդական ֆլորին:*

“Ամստերդամի նոտար Tixerandet.„

Իսկ Ուղուրլեան քահանայի հետ միայն 4 տարի վերջն է հաշտութիւն կայանում, որի մասին հետեւեալ արձանագրութիւնն է կազմուել.

“1699 Յուլիս 7.

“Ներկայացաւ պ. Martin Grigory, որ բնակվում է այստեղ եւ անձամբ ծանօթ է ինձ, նա յայտարարեց թէ ինքն իբրեւ փոխանորդ Ալեքսան քահանի ստացած է հայ քահանայ Ուղուրլեանից հայկական տպագրական մամուլը, տառերն եւ գործիքներն, որով Ալեքսան այլեւս որեւէ պահանջ չունի քահանայից„:

“Նոտար J. Bronw[1]„:

Այս վէճերն ու գանգատները բնականաբար վատ ազդեցին տպարանական գործի վրայ: Մատթէոս իր ընկերների հետ, ինչպէս տեսանք, տպել էր Շարական եւ ժամագիրք: Նա առանձին 1686ին տպեց Խորենացու պատմութիւնն եւ Աշխարհագրութիւնն, 1688ին երկրորդ անգամ ժամագիրք եւ ապա ստիպուեց դադրեցնել իր գործունէութիւնը: Նա անկարող էր շարունակել մի կողմից վէճերի, միւս կողմից անձնական նիւթական միջոցների պակասութեան պատճառով: Եթէ նա միանակ մնար, անշուշտ ստիպուած պիտի լինէր վերջ տալ բոլորովին իր սիրած գործին, բայց բարեբախտաբար նրան օգ-

---

[1] De Boekhandel te Amsterdam voor namelijk in de 17e Eeuw, door M. M. Kleerkooper, aangevuld en mitgegeven door W. P. Van Stookum. 's Gravenhage 1914. (Գրավաճառութիւնը Ամստերդամում մէջ. դարում, Հաագ 1914, էջ 773, 1124—1126).

նուիրեան հատան 3 ուրիշ վանանդեցիներ՝ իր հօ-
րաքրոջ որդին Թոմաս եպիսկոպոսը, գողթան
գաւառի Ս. Խաչ վանքի վանահայրը, եւ սրա
եղբօրորդիքը Ղուկաս եւ Միքայէլ Նուրիջանեան-
ները: Ընորհիւ սրանց՝ տպարանը վերակազմուեց
նոր տառերով եւ գործիքներով: Թոմաս եպիս-
կոպոս դարձաւ սեպհականատէր եւ միանգամայն
ղեկավար, Ղուկաս վանանդեցին՝ ընկերութեան
գլխաւոր գործողն եւ մտաւոր ոյժը եւ սկսեց մի
նոր փայլուն շրջան, որ ամբողջ 10 տարի տեւեց
անընդհատ: Մատթէոս Ցովհաննէսեանի փորձա-
ռութիւնն եւ համբաւութիւնը յայտնապէս երեւում
է նրա բոլոր տպագրած գրքերի վրայ, որոնք
տպարանական արհեստի տեսակէտից ընտիր ար-
տադրութիւններ են:

Վանանդեցիներն այս 10 տարուան ըն-
թացքում 14 գիրք են հրատարակած, բոլորն էլ
նշանաւոր իրենց կատարելութեամբն եւ օգտա-
կարութեամբը, ի նկատի առնելով ժամանակի
հանգամանքները: Մի հետաքրքրական վաւերա-
գիր կայ վանանդեցիների այս գործունէութեան
մասին, որ իսկապէս Թոմաս եպիսկոպոսի կտակի
բնաւորութիւնն է կրում եւ որը մենք ամբող-
ջապէս տալիս ենք ստորեւ: Այս նոտարական
գիրը յօրինուած է լատիներէն, բայց մենք բնա-
գիրը չենք տեսել, այլ աչքի առաջ ենք ունե-
ցել նրա հոլանդերէն թարգմանութիւնը:

Ահա այդ վաւերագիրը:

"1705 Հոկտեմբեր 30: Ներկայացաւ իմ,
Hendrik de Wilde, Ամստերդամի նոտարիս առ-

ջեւ, գերապատիւ Տէր Թոմաս վարդապետ, արքեպիսկոպոս Սուրբ Խաչ վանքի, որ գտնվում է Հայաստանի Գուլթան (? = Գողթան) գաւառում եւ յայտնեց թէ ինքը, 10 տարուց ի վեր, այն է 1695 ից սկսած այս քաղաքումն (Ամստերդամ) հաստատած է իր ազգի ծառայութեան եւ պէտքերին նուիրուած մի տպարան, բոլոր հարկաւոր պարագաներով, յատկապէս Հայերէն լեզուով գրքեր եւ քարտէսներ հրատարակելու համար եւ թէ այս տպարանում իր ծախքով տպել է հետեւեալ գործերը -

1. *Նախ եւ յառաջ* 1695 *ին մի մեծ աշխարհացոյց քարտէս* Adrian *եւ* Pieter Damian Schoonebeck *եղբայրների ձեռքով պղնձի վրայ փորագրուած:*

2. *Նոյն տարին մի գիրք, Հայ ազգի ծագման, պատմութեան եւ Հայրենիքի վրայ, որի հեղինակն է* Moses Grammaticus *անունով Հայը (Մովս. Խորեն.),* in octavo:

3. 1696 *ին մի գիրք, որ ծառայում է իբր ուղեցոյց վերոյիշեալ աշխարհացոյցին, որ կազմել է իր եղբօրորդին* Lucas Gregory:

4. *Նոյն տարին Թոմաս կեմպացու "Նմանողութիւն Քրիստոսի" գիրքը,* Lucas Gregory *ի մեկնաբանութեամբ,* in duodecimo:

5. 1697 *ին մշտատեւ Տարեցոյց* (Almanack) *որ կազմել է նոյն* Lucas Grigory*ն,* in duodecimo:

6. *Նոյն տարին մի գիրք, որ կոչվում է*

գանձ վաճառականների համար, Lucas Grigoryի հեղինակութեամբ, in octavo:

7. 1698ին նոր կտակարանը, պղնձեայ տախտակի պատկերներով զարդարուած, եւ նոյն Lucasի ձեռքով կարեւոր մեկնութիւններով լուսաբանուած, in duodecimo:

8. 1699ին մի գիրք, որ կոչվում է Ոսկի դուռ հայ մանուկների համար, նոյն Lucasի հեղինակութիւնը, in octavo:

9. նոյն տարին մի ամէնօրեայ Աղօթագիրք հայոց համար, դարձեալ Lucasի հեղինակածը, in octavo:

10. 1702ին հայերէն մի երաժշտական գիրք in octavo (Շարակնոց):

11. նոյն տարին Օգերեւութաբանութեան վրայ մի գիրք նոյն Lucas Gregoryի հեղինակութիւնը, in octavo:

12. 1704ին մի գիրք աստուածաբանական խնդիրների վրայ, in octavo:

13. 1705ին, Breviarium vel horologion ecclesiae Armeniae (ժամագիրք), in octavo:

14. նոյն տարին մի գիրք, որի վերնագիրն է "Առաջնորդ երկնից", լատիներէնից թարգմանուած Լեհաստանի Վարդան արքեպիսկոպոսի ձեռքով, in octavo":

"Այս տպարանն իր բոլոր պարագաներովը, Թոմաս արքեպիսկոպոս սարքել է ի սէր Գիտութեան եւ ի սէր ծառայութեան իր Ազգին եւ բոլոր գրքերն ու քարտէսները հրատարակել է իր անձնական միջոցներով, ի բաց առեալ նրանցից,

որ տպել է ուրիշների հաշուին: Յիշեալ գերապատիւ արքեպիսկոպոսը յայտարարեց թէ իր տպարանը բոլոր առարկաներով եւ բոլոր տպուած գրքերը, նա մտադիր է թողնել իր սիրեցեալ Հայրենիքին, որպէս զի այն խեղճ քրիստոնեաներն, որոնք դեռ գտնվում են խաւարի մէջ եւ տառանյի լծի տակ, լուսաւորուին„:

"Յիշեալ տէր արքեպիսկոպոսը ինձ ներկայացրեց երկու յանձնարարական գրութիւն իր տպարանի վերաբերմամբ, իբրեւ իր քրիստոնէական եռանդին ապացոյց: Դրանց մէկը հանգուցեալ ամենողորմած Լէոպոլդ կայսրից է տրուած, Վիեննայում, 1697 Սեպտ. 5ին. միւսը պարոն Augustus Hermanns Franctiusի կողմից, որ Մագդէբուրգի մօտ Hall քաղաքի ուսուցչապետ է„:

"Եւ որպէս զի այս իրողութիւնը յայտնի դառնայ եւ ամէն տեղ իբրեւ ճշմարտապէս կատարուած ընդունուի, արքեպիսկոպոսը՝ Michael le Blon եւ Cornelis van Born վկաների (Ամստերդամի գրավաճառներ) ներկայութեամբ այս յայտարարութիւնն արաւ եւ խնդրեց որ Ամստերդամում հարկ եղած օրինաւոր վաւերագիրը շինուի„:

Այստեղ ամէնից առաջ աչքի է ընկնում այն ընդարձակ մասնակցութիւնն, որ ունեցել է այդ հրատարակութիւնների մէջ Ղուկասեանանգեցին Նուրիջանեան, որ իր հօր անունով Grigory է կոչուած, թէ իբր հեղինակ թէ իբր թարգմանիչ եւ թէ իբր մեկնաբանող: կարեւոր է եւ այն, որ տպուած գրքերը մեծ մասով թոմասի ծախքով

են կատարուած եւ մի քանիսը միայն "ձախիւք եւ արդեամբ„ ջուղայեցի վաճառականների։

Այժմ մի ընդհանուր ակնարկ նետենք այդ 14 հրատարակութիւնների վրայ։

Թ. 1 եւ 3. Սկսինք առաջին գործից, "Համառասած Աշխարհացոյց„ից, որ շատ կարեւոր եւ ուշադրութեան արժանի աշխատութիւն է։ Աշխարհացոյցը 8 թերթից է բաղկացած, փորագրուած է հայերէն եւ կենդրոնում միայն լատիներէն յիշուած է փորագրիչ արհեստաւորների անունը. "Hadrianus et Petrus Damianus Schoonebeck Fratres faciebant Amstelodami 1695„։ Նրա վրայ կայ Թոմաս եպիսկոպոսի հետեւեալ յիշատակարանը.

"Նորոգ քանդակ գեղեցկավէպ Հանրանշան
Փոխաբերեաց Թոմա յետնորդ ոստ Վանանդեան,
Փորագրութիւն յոյժ ցանկալի
Ի ձեռն եղբարց Հարապատի
Ադրիանու Ըսկօնպէկի
Եւ Պետրոսի քաջավարժի
Ընդ Ղուկասու Համտագունի
Երկամբք բազմօք յայտ ածողի
Եղբօրորդի իմ անդրանկի
Պահեցէ էն յիւրում ծոցի„։

Այս գեղեցիկ գործն, որի գլխաւոր արդիւնքը պատկանում է Ղուկասին, միեւնոյն ժամանակ էլ հիացման առարկայ է ինչպէս իր կազմու-

թեամբը, նոյնպէս եւ փորագրութեամբը[1]: Եւ որպէս զի ամէն ոք հնարաւորութիւն ունենայ նրանից օգտուելու, վանանդեցին նրան կցել է *"Բանալի Համաւսարած Աշխարհացոյցի"*, այսպիսի յառաջաբանով.

"Շահաւէտութիւն եւ պիտանութիւն որ յաշխարհացուցէն յառաջագայի... բայց եւս քան զեւս պիտանանայ վաճառականաց, մանաւանդ հայկազարմից, որք ի մէջ ասիական եւ արեւելեան ազգաց, ընդունելիք եւ յոչ սակաւուց սիրելիք, ընդ ամենայն աշխարհ զանբոյթ երթեւեկութիւն ունելով, զամենայն երկիր առոտն հարելով յաճախեն. վասն որոյ ոչ ընդ վայր աշխատիմք ի շահ եւ յօգուտ մերազնեայցդ, ի լոյս ածելով զհամատարած աշխարհացոյցն հայկական բառիւ եւ տառիւ տպեցեալ...: Ցիշեցէք... զեռամեծ վարդապետն մեր եւ զհեզահոգի վեհն, վսեմախորհուրդ զտէր Թոմաս եպիսկոպոսն սրբոյ Խաչի վանից Գողթնեաց, զի ընծայէ զծաղիկ բերկրութեան ցանկալի ազգին Արամեան. եւս զյոգներախտ եւ զմիակ բուն տպագիրն Հայոց զանուանին Մատթէոս Յոհաննիսեան, ապա եւ զտրուպ գպիրս Ղուկաս, Ծնունդս Գրիգորի, սերունդս Նուրիջանի, սնունդս Հռոմայու եւ զմատուցողս այսր Գործակի":

---

1 Սրանից մի օրինակ կայ Լէյդէնի Համալսարանի մատենադարանում: Մի օրինակ էլ Պարիսի Ազգային Մատենադարանում կայ (L. Vallée, Notice des documents exposés à la section des Cartes, Paris 1912, no. 293).

Թ. 2. Վանանդեցիների հրատարակած առաջին գիրքն էր Խորենացին, "Ազգաբանութիւն Տոմին Յաբէթեան յօրինեցեալ ի Մովսիսէ Խորենացւոյ...", որի յառաջաբանի 6 տողն մէջ կարդում ենք.

"Ընծայէ ծաղիկ բերկրութեան
Յանկալի ազգին Արամեան
Եռամեծն Վանանդեան
Թոմաս Նուրիջանեան,
Սորին մօրեղբօրորդի
Ես Մատթէոս շարեցի":

Գրքի վերջում, Թոմաս պատմում է թէ ինչպէս է ձեռք գարկել տպագրական գործի.

"...Ես հուսկ յետին ի դէրս մանկանց եկեղեցւոյ՝ տունկս տաղարթապաճոյճ եւ անդաստան տատասկաբեր Թոմաս Եպիսկոպոս, ի գաւառէ գողթնեաց ի մանէ Վանանդու, տարագրական հողմավարութեամբ անցի ի կալուածս Եւրոպէու եւ մեծաջան աշխատութեամբ փութացայ ժամանել ի գեղեցկադիր եւ ամենայն գովասանութեան արժանաւոր քաղաքն Ամստերդամ, առ ի յօրինել եւ հոգալ զբուն գործին տպագրութեան եւ զձախտական պղնձեաց՝ վան փորագրելոյ զդէրս համայնց գաւառաց զոր երկամբք բազմօք եւ յոգնակի ծախուք կատարեցաք ընդ Մատթէոսի, որ է որդի Եղբօր Մօր իմոյ, զոր նախ յիշեցի ի նոյն քաղաք, սակս պատրաստելոյ զպարագայս առաջնիկայ գործոց մերոց, եւ զկնի կազմելոյ եւ յօրինելոյ զոր պարտն

էր եւ պատեհ, հաճեցայ տպել զվիպագրութիւն բազմերախտ Առն Մօսխի քերթողահօրն, իբր Առաջին Պտուղ Երախտեաց՝ իմոց աշխատութեանց եւ իմովք ծախիւք: Այլ ի լինել ձեռնամուխ սմին իրին՝ մինչեւ ցաւարտումն կրեցաք եւ արբաք զյոգնազան եւ զանբերելի դառնութիւնս եւ զտուժանս ի մերայնոց ուսումնատեաց, հանապազասուտ եւ չարախօսաց Արանց, որք մոլթովք ոչխարենիք պարուրեալ զինքեանս, իսկ ի ներքուստ յաւէտ գիշատող քան զգայլս եւ բերանք նոցա լիք դառնութեամբ անհարազատ ամենայն բարւոյ, որոց կատարածն ըստ գործոց իւրոց„:

Իր հայրենակիցների հասցէին այս դառն գանգատներն ուղղելուց յետոյ Թոմաս եպիսկոպոս շարունակում է.

“Բայց սակայն աղաչեմ մեծաւ թախանձանօք զգաստ Եղբարցդ Սրբազանից, ի պատահել ձեր սմին, ընթեռնլով եւ տեսանելով, եթէ գտանիցի ի սմա սխալումն ինչ, ներել մաղթեմ...„:

Յետոյ՝ իր անձն ու իր ծնողքը յիշելով վերջացնում է իր գործակիցները գովելով, “*զհարազատ զՉեռնասուն Գործակալս իմ՝ զՄատթէոս, զկատարեալ Հմուտն յԱրուեստն Տպագրութեան եւ զեղբօրորդին իմ զՂուկաս Փիլիսոփայ, որ վարժ է զանազան լեզուաց*...„:

Թ. 4. Վանանդեցիների չորրորդ հրատարակութիւնն է “*Գիրք Թումայի Քէմփացւոյ, յաղագս Նմանեաւմանն Քրիստոսի,*

թրգմնեցել ի Յովհ. Վ. Պոլսեցւոյ, ի խնդրոյ ջուղայեցի Խօջայ Սահրատի որդւոյ պարոն Քասպարին. Գործեօք եւ ծախիւք Թովմասու սրբափայլ Եպիսկոպոսի սրբոյ Խաչին, Յամի Տեառն 1696. Յամստէլոդամի". որի Յիշատակարանում Թովմաս գրում է.

"...Ես հեղս եւ ողբոց բազմաց ստորակայեալս... պատճառաւ վարկայ զհամեղախօս եւ զքաղցրաճաշակ գիրս Թովմայի Քեմփացւոյ տպագրել յիմում գործարանի, զոր յարմարեցի եւ կազմեցի վշտօք անթուելեօք. այլ եւ զծախս նոցունց յիմոց ընչից, զի գոնէ յընթերցասէր եղբարցդ խնդրեցից օժիտս սիրոյ...: Յիշել մաղթեմ զբազմերախտ եւ զկառավարող գործարանին եւ բանհմուտ եւ վարժ յարուեստ տպագրութեան զվարպետ Մատթէոսն, որդի եղբօր մօր իմոյ... եւ զորդիս եղբարց իմոց զՂուկաս եւ զՄիքայէլ...":

Այս միեւնոյն գիրքը, նոյն Յովհ. վարդ. Հոլով Կ. Պոլսեցու թարգմանութեամբ տպուած էր արդէն, սրանից յառաջ, Կ. Պոլսում, "ի թուաբերութեան հայոց ռճխ եւ Թ. (9) Հոկտեմբեր ամսոյն" (1691), բայց փոքր ինչ տարբեր վերնագիր է կրում. "Գիրք Թովմայի Գեմբեցւոյ կանոնանակի կրօնաւորի ի կարգէ սրբոյն Օգոստինոսի, Յաղագս Համահետեւմանն Քրիստոսի...":

Թ. 5. Կտակի ցուցակի մէջ յիշուած Almanackը "Համաձայնութիւն Հնգետեսակ ամսոցն..." է, "շարեցեալ ի Յոհաննիսեան

Մատթէոսէ եւ յօրինեալ յապիրատ Նուրիջանեան Ղուկասէ Վանանդեցւոյ։ Տպիւք եւ ծախիւք թոմայ եռամեծ վարդապետին, յամի տեառն 1898 յԱմստերդամ„։ Այստեղ 10 տող ոտանաւոր կայ նուիրուած “Եռամեծ թոմայ Վանանդեան բաբունւոյն, որում ենթարկին Տպարանս, ամենայն աշխատանք եւ աշխատաւորք Տպարանիս„։

Թ. 6. “Գանձ վաճառականների համար„ կոչուածն է՝ “Գանձ չափոց, կշռոց, թուոց եւ դրամից բոլոր աշխարհի, որ է գիտութիւն ամենայն տեսակ կշռոց, չափոց եւ դրամից, որով բոլոր աշխարհի վաճառականութիւնն վարի։ Ժողովեալ եւ ի մի վայր հաւաքեալ աշխատութեամբ Ղուկասու ապաշնորհ ջահրնկալի Վանանդեցւոյ։ Ծախիւք եւ ի խնդրոյ հայցման Ջուղայեցի Խաչատուրի որդի պարոն Պետրոսի„։

Այս գիրքն իսկապէս մի “գանձ„ էր ընդհանրապէս հայ վաճառականների եւ մասնաւորապէս Ամստերդամում հաստատուած ջուղայեցիների համար, որոնք անմիջական յարաբերութիւնների մէջ էին զանազան առեւտրական շուկաների հետ եւ ստիպուած էին տեղեակ լինել այդ երկիրների դրամներին, չափերին եւ հաշուական միութիւններին։

Թ. 7. “Աստուածաշունչ Նոր Կտակարան„ը սկսել է տպուել 1698ին եւ աւարտել է 1700ին (ռճխթ) “տպագրեալ վայելչագիր եւ գեղեցկագիր յօրինուածովք„։ Սրա յիշա-

տակարանում Թոմաս՝ երախտագիտութեամբ է յիշում Աստուածաշունչի առաջին տպագրող Ոսկանի անունը. “Վաղ ուրեմն նախ տպագրեցեալ գոյր ի մեծ է եւ յերջանկագոյն վարդապետէ Ոսկանայ Երեւանեցւոյ... ուստի եւ ես յոգնաջան վիրօք լցեալս ձեռնարկի երկրորդումն տպագրել բազում փշօք”: Ապա ըստ սովորականին աւելացնում է իր աշխատակիցների անունները՝ “...զվարպետն Մաթէոս եւ զՂուկասն Գրիգորեան, որ աշխատեցան եւ աշխատին յօգուտ եւ ի պայծառութիւն Եկեղեցւոյ Սրբոյ Ամէն”:

Թ. 8. “Ոսկի դուռ”ն է “Դուռն Իմաստութեան կամ Ոսկեայ Դուռն Դպրատան”, հեղինակութիւն նոյն Ղուկասի “վասն դեռակիրթ եւ խակավարժ մերազնեայ մանկանց”, այնտեղ աւելացուած են բազմաթիւ սկզբնական գիտելիք եւ տեղեկութիւններ:

Թ. 9. Պատկերազարդ գեղեցիկ գիրք է “Պաշտօն Աստուածային անպատում Փրկական եւ ահաւոր խորհրդոյ Սուրբ Պատարագին... Երկասիրութեամբ ումեմն Ղուկասու՝ նուաստ եւ յետնեալ Դպրի ի լացիական (լատինական) լեզուէ թարգմանեցեալ”: Առաջին երեսի պատկերը ներկայացնում է խորան՝ խաչելութեամբ եւ Քրիստոսի վարշամակով, եւ 2 աշտանակ: Սեղանի վրայ դրուած են սկիհ, բաժակներ եւ Աւետարան: Քահանան ծնկաչոք է սեղանի առջեւ: Պատկերի տակ դրուած է լատիներէն՝ Mysteria Passionis et Missa: Այսպէս

33 պատկեր կայ հետզհետէ պատարագի մասերը ներկայացնող եւ ներքեւը լատինական համապատասխան ստորագրութեամբ: Քահանայի զգեստաւորումն էլ լատինական է:

Գրքի վերջը կայ այսպիսի յիշատակարան. "Որ ունի զամենայնն յորմէ եւս է ամենայնն որ ետ եւ անարգ ծառայից նպաստուել իւն յաւարտ ածել զայս նորածին եւ գեղեցկատիպ հիւսուածս յանջնջելի յիշատակ ջուղայեցի Քառասուն Մանկանց, խօջայ կարապետին եւ որդւոյ սորին Մղդսի խօջայ Աւետին, խօջայ Յոհաննէսին եւ պարոն Յարութեանն, որոց ծախիւք եւ արդեամբք ի լոյս ածաւ այս հոգեշահ եւ Աստհածոյ պաշտօնարանս: Արդ որոց ընդունելի թուիցի այս նորատիպ գործակս՝ յիշեսցին ի ջերմեռանդ յաղօթսն գվերոյ ասացեալ խօջայ կարապետեան հանդերձ սորին զարմիւքն եւ ժառանգօքն. նաեւ պարոն Նալարէթի որդի զյեսանեալ էնչին եւ զապիկար արբանեակն Յոհաննէս, որոյ հոգաբարձու վերակացութեամբն տպեցաւ այս հոգւոյ գանձս. յիշեսցին եւ զայլ ամենայն արեանառու մերձաւորսն, զկենդանիսն եւ զհանգուցեալսն վերոգրեցեալ անձանցն, իսկ եթէ ումեք անհաճոյ ինչ երեւիցի, զանմեղադրելիս կալցէ զմեզ՝ աղաչեմք զի ձեր եմք միշտ եւ յամենայն ուրեք անարգ ծառայքս Մատթէոս եւ Ղուկաս վանանդեցիք":

Թ. 10. Շատ մաքուր տպագրութիւն է Շարակնոցը, "Երաժշտական Երգեցմունք Հոգեւորականք Աստուծոյ երջանկաց սրբոց վար-

դապետաց, Հայոց Թարգմանչաց, տպեցեալ յԱմստերտամում քաղաքի»: Սրա յիշատակարանում յառաջ են բերուած Թոմասի բոլոր մերձաւոր ազգականները. «Յիշեցէք... զծնողսն իւր զՆուրիջան եւ զԳիլզար, զեղբարսն զԳրիգոր (Ղուկասի հայրը), զԱրիստակէս եւ զՅակոբ. զքոյրն Ջանայ, զհանգուցեալսն ի Քս. քանզի միայն նոյն վեհանձին (Թոմասի) հաւանութեամբն, տպիւքն եւ ծախիւքն յերրորդում նուագիս ի լոյս ածաւ այս Ածաշունչ երգարանս եւ յանկ ելեալ աւարտեցաւ յԱմի Տեառն 1703 Յուլիսի 15: Ի վախճանի յիշեցէք ի սուրբ սրտէ զհարազատ աշխատաւորս... զՄատթէոս, զՍինանն եւ զառոտն կոխեալ Ղուկաս...» (որ անշուշտ հեղինակն է այս յիշատակարանի):

Թ. 11. Օդերեւութաբանութեան վրայ գիրքն է «Բնաբանութիւն իմաստասիրական կամ՝ տարրական, որ է բան յաղագս տարերաց եւ տարերական որակութեանց, խառնուածոց եւ վերամբարձ զբօսանացն, ուստի գոյանայ ամպն, մառայլն...: Յօրինեալ ի Մատթէոսէ եւ ի Ղուկասէ յապիրատ Վանանդեան դպրաց, ի պէտս բանասէր մերազնեայ եղբարց»:

Թ. 12. «Աստուածաբանական խնդիրներ» տրուած գիրքն է՝ «Յոգնադիմի Աստուածաբանական, բարոյական եւ քաղաքական իրողութեանց սահմանք, երկասիրութեամբ մեղուաջան արանց ի մի վայր ըստ կարգի այբուբենից հաւաքեալք: Ի լոյս ածեալ տպիւք եւ արդեամբք առաքելաշաւիղ Թոմայ եռամեծ վար-

դապետի Վանանդեցւոյ„: Կայ հետեւեալ ոտանաւորը.

Որ հրահանգից վարժարանի
Չէ տակաւին ներկուռ բանի
Կամ ի հանդէս փիլոսոփի
Ջանձն իմաստիւք կրրթեալ չունի
Ջայս սահմանաց թ՚ի միտս ունի
Մեծի ուսման ժառանգ լինի:

Իբրեւ վերջաբան գրուած է հետեւեալ լատիներէն պարբերութիւնը հայերէն տառերով. “Ֆինիս կօրինատ օպուս„:

Թ. 13. Ժամագիրք:

Թ. 14. Առաջնորդ Երկնքի կոչուածը լատիներէնից թարգմանութիւն է “Ձեռքածութիւն (Manudictio) յերկինս„ կարդինալ Բոնիի հեղինակութեան, որ արդէն իր առաջին տպագրութիւնն էր ունեցած Հռոմում 1671ին: Միայն թէ այն ժամանակ թարգմանիչը դեռ քահանայ էր, իսկ այժմ Բ. տպագրութեան ժամանակ, 34 տարի վերջը, արքեպիսկոպոս է արդէն: Ամստերդամեան այս տպագրութիւնն ունի հետեւեալ ծանօթութիւնը. “Յամի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 1705 իսկ ըստ Հայոց 1154 Օգոստ. 7 Մարգաց 5 յԱմստրդամ քաղաքի՝ տպագրեցաւ այս գիրք վայելուչ եւ մեծաշահ, ի տպարանի Թոմասու Վանանդեցւոյ, ծախիւք նորին եւ հաւանութեամբ: Վասն զի գոյր նախնաբար թարգմանեցեալ՝ քաջաբան եւ յամէնիմաստ վարդապետէն, ի լաթին լեզուէ ի Հայ-

կական բարբառ: Եւս զի նա յաճախօրէն եւ լիապէս խօսի, գեղեցկաշար եւ համեղ բանիւ, յորդորական եւ խրատօրէն առ մերայինսն, բաւական եւ քաղցր ոճով: Եւ մեք ոչ հաճեցաք յօդել ի բանս նորին, որք են խորիսխ մեղու, սուղ ինչ ոսպն կամ բանջարեղէն, այլ զնորայն ընկալեալք, որք քաղցեալք եւ ծարաւիք իցեն հմտութեան եւ ուսման, նոքօք լցցին զփափաք իւրեանց եւ զծարաւ...: Պարտաւոր Թոմաս ծառայ ծառայիցն Աստուծոյ, լոկ անուամբ վարդապետ„:

Մենք հարկաւոր համարեցանք յառաջ բերել այս յիշատակարանները, որոնք պատկերացնում են տպագրիչների եւ առանձնապէս բազմարդիւն Թոմաս եպիսկոպոսի նուիրական եւ հոգեկան դրութիւնը: Թոմաս եպիսկոպոս իր այս կտակաձեւ յայտարարութիւնը կատարելուց յետոյ ձեռք է քաշել տպարանից: Նա վախճանուել է 1710ին:

Զ.

Ղուկաս Վանանդեցու գործերը՝ Թոմասի մահից յետոյ: Վենետիկի եւ Կ. Պոլսի մրցումը Ամստերդամի հետ: Ամստերդամի հայկական տպարանի վերջը: Տառերի վաճառումը Մխիթար Աբբային: “Հաւատով խոստովանիմ„ 24 լեզուով: Ջուղայեցի վաճառական Առաքելի նոր տառերը: Գէորգ Արծրունու դրանց գնելը Թիֆլիսի Ներսէսեան Դպրոցի համար:

Բազմերախտ տպագրիչ Թոմաս վանանդեցու արժանաւոր ինչպէս եւ իրական ժառանգն էր Ղուկաս վանանդեցին, իր եղբօրորդին եւ գլխաւոր գործակիցը։

Թոմասի մահից անմիջապէս յետոյ այն է 1711ին, դեռ տեսաւ իր տառերով, բայց օտար տպարանում Զուղայեցի Յոհաննէս վարդապետի հեղինակած "Համառօտ Քերականութիւն եւ Տրամաբանութիւն, որ է գերթուածիւն բառի եւ կրթուածիւն բանի", ընդ ամէնը 78 էջից բաղկացած մի գիրք։ Հետաքրքրական է այնտեղ, հետեւեալ ոտանաւորը։

"Գեղ կամակար անծագ հոլդէ,
Կէղ կամակոր ձանձալա յորդէ,
Ցեղ զայս համր գիրք ի հարկս հոլով
Հեղ զայն յամր գիրք ի յարկս յոլով,
Ամաց հերձի ամաց պատուէր,
Զի էր պատուէր՝ զի նա պատուէր։"

Ինչպէս ընթերցողը նկատեց, այստեղ իրար հետեւում են նոյն հնչումով բայց տարբեր գրութեամբ եւ նշանակութեամբ բառեր։

Ղուկաս վանանդեցին մեծ ջանքերով հաղիւ կարողանում է տպարանի նիւթական կացութիւնը կարգի բերել եւ 1713ին վերսկսում է իր գործունէութիւնը, Զուղայեցի մի երկու վաճառականի ընձեռած դրամական աջակցութեամբ։

Այդ տարին նա տպեց "Հայելի Աստուածաշունչ Հին Կտակարանի պարզաբանեալ

վայելչալուր տաղաչափութեամբ, դիւրահաս եւ համառօտապատում հոգեշահ մեկնութեամբ, մեղուաջան երկասիրութեամբ Ղուկասի Դպրի Վանանդեցւոյ: Ի լոյս ածեալ հայցմամբ Խնդրոյ եւ ծախիւք Ջուղայեցի Խոջազադայ Պօղոսի որդւոյ պարոն Պետրոսին... յամի տեառն 1713, ի մեծ թուին Հայոց 1162 իսկ ի փոքր թուին 98. ի տպարանի Ղուկասու Վանանդեցւոյ, Յամաէլօղամ „: Գրքի սկզբում կայ նախերգանք, որի վերջում կարդում ենք "...Արդ մանաւանդ հոգեշահութեան քան թէ զօշաքաղութեան եւ փառամոլութեան աղագաւ ըսկիզբն արարի Աստուծով պարզաբանել զայս Թարգմանական պատմութիւն Հինտակարանին վայելչալուր եւ գեղեցկայեա աւելի քան զՀաղար եւ հինգհարիւր զոյգ ոտիւք եւս եւ արձակ բանիւ...: Ցիշել մաղթեմ բազկատարած եւ ձեռնամած աղօթիւք առ Աստուած... այլ եւ զարթակենցաղ Հայր, Հօրեղբայր եւ վարդապետն իմ զԹոմաս Եպիսկոպոսն Վանանդեցի Քրիստոս հանգուցեալ...„:

Հետեւեալ տարին, 1714ին Ղուկաս տպեց Սաղմոսարանը, որի մէջ դարձեալ երախտագիտական տողեր է նուիրում "Թոմայ եւսաիայլ եպիսկոպոսին, որոյ յոգնաջան քրտամբքն կանգնեցաւ այս գեղեցկատիպ եւ հիքոյս կուսակաւ նորին ի ժառանգութիւն ժամանեալ տպարանս„:

Սաղմոսարանը զարդարուած էր գեղեցիկ պատկերներով, որոնք փայտի վրայ փորուած էին

van Siehem ճարտար փորագրիչի ձեռքով։ Այս հրատարակութիւնն իբրեւ օրինակ է ծառայել 1780ին Կ. Պոլսում Պետրոսեանի Տպարանում տպուած Սաղմոսարանին, որտեղ յառաջաբան է գրուած՝ “Յաղագս տեսակացն Սաղմոսի, ըստ Ղուկասու Վանանդեցւոյ„ եւ “ըստ Եբրայեցւոց եւ Յունաց„ բաժանումներով։

Այնուհետեւ Ղուկաս հրատարակեց՝ իր հեղինակութիւնը՝ “Պատկերասէր պատկերատեաց, սէր եւ համաձայնութիւն պատկերաց, 1716ին, նուիրեալ եւ Տեառնագրեալ Ջուղայեցի Գիլանէնց ի Տէր Հանգուցեալ Սարգսի որդւոյ Պետրոսին։ Յօրինեալ երկասէր եւ տպագիր աշխատանօք Ղուկասի դպրի Վանանդեցւոյ„, իսկ 1717ին “Կարճառօտ Ժամագիրք ի մի վայր ժողովեալ ի պէտս Հայոց վաճառականաց„։

Ինչպէս տեսանք, Ղուկաս օգտուել էր ջուղայեցիների օժանդակութիւնից իր ժառանգած տպարանը վերականգնելու համար, բայց երբ այս նպաստը դադրեցաւ, այն է երբ նա հրատարակիչ չգտաւ իր աշխատութիւնները տպելու եւ ուղեց իր սեփական միջոցներով շարունակել, չկարողացաւ գործը յառաջ տանել, պարտքի տակ ինկաւ եւ ստիպուած եղաւ տպարանը փակել։ Ամստերդամի հայ տպարանը, որ այնչափ արդիւնաւոր տեղ է գրաւում հայերէն գրքերի հրատարակութեան եւ տարածման գործում, վերջացրեց իր դերը, տեղի տալով աւելի նորերին, որոնք սկսել էին գործել աւելի բազմահայ կենդրոններում։ Եւ սա բնական երեւոյթ էր։

Ամստերդամի վաճառականները այլ ևս չէին օգնում, որովհետև հայ տպագրութիւնը շահադիտական առարկայ լինելուց դադարել էր և վնաս էր անում. չենք խօսում այն հազուադէպ օրինակների մասին երբ զուտ բարեգործական կամ աւելի ճիշտը կրօնասիրական զգացմունքն էր թելադրում հայ վաճառականին՝ այս կամ այն գրքի մեկենատ հանդիսանալու: Ուրիշ տեղ հաստատուած հայ տպարանները մրցում էին Ամստերդամինի հետ գրքերի յաջող վաճառման կողմից: Սրանք գլխաւորաբար Վենետիկում (հայ կամ օտար) և Կ. Պոլսում հիմնուած տպարաններն էին, չնայելով, որ նրանք մասամբ իրենց գոյութիւնը պարտական էին Ամստերդամի նախաձեռնութեան, որովհետև օգտուել էին այնտեղ ձուլուած տառերից: Մէջընդմէջ հայերէն գրքեր երեւում էին նաեւ ուրիշ քաղաքներում, ինչպէս Հռոմ, Լիվոռնոյ և Մարսիլիա: Վենետիկ և Կ. Պոլիս 1700ից սկսած գրեթէ անընդհատ տպագրում ու տարածում էին շատ աւելի յաջողութեամբ, թէեւ այդ հրատարակութիւնները արուեստի տեսակէտից չէին կարող համեմատուիլ Ամստերդամի՝ այսինքն Ոսկանի և վաճառականների տպագրութիւնների հետ, որոնք շատ աւելի մաքուր և գեղեցիկ էին քան առաջինները, ընդհանուր առմամբ: Բուլանդակութեամբ էլ գրեթէ ամբողջովին հոգեւոր և եկեղեցական պաշտամունքի վերաբերեալ գրքեր էին, փոքրիկ բացառութիւններով, ինչպէս էր օրինակի համար Մխիթար Աբբայի կազմած

"Դուռն Քերականութեան Աշխարհաբար լեզուին Հայոց„, տաճկերէն լեզուով, "առ ի յօգուտ այնց Հայոց, որք զտաճկական լեզու միայն գիտեն եւ փափաքին ուսանիլ զաշխարհաբար Հայերէնն„, տպ. 1727, Վենետիկ, Ս. Պօղոսի տպարանում:

Եւ այսպէս Ամստերդամում Հայկական տպարանն, որ 60 տարուան մեծապէս արդիւնաւոր գործունէութիւն էր ունեցած, 1717 ից յետոյ բոլորովին լուեց:

Հոլլանդայի պատմագիրներն էլ խոստովանում են այս արդիւնաւորութիւնն եւ գովասանք են կարդում Հայ տպարանի հասցէին: Ցիշենք նրանցից նորագոյնին, որ գրում է. "թէեւ Հայերէն տպագրութիւնների հետ մանրամասնօրէն ծանօթ չենք, բայց բաւականաչափ տեղեակ ենք առհասարակ տպարանի եւ տպագրական գործին եւ կարող ենք վկայել, որ այստեղ (Ամստերդամի Հայկական տպարանում) տպուած են այնպիսի Հայերէն գրքեր, որոնք դեռ այսօր էլ տպագրութեան արուեստի եւ տառերի գեղեցկութեան կողմից լաւագոյնն են եւ մեծարժէք: Այս գրքերը միեւնոյն ժամանակ կարող են պարծանք համարուիլ Ամստերդամի տառաձուլիչներին, որոնց հռչակը տարածուել էր, շնորհիւ այդ գրքերի, մեր սահմաններից դուրս[1]„:

Եթէ ցաւալի է, որ Ղուկաս Վանադեցու նման մի նշանաւոր գրական եւ տպագրական գործիչ, անյաջողութեան հանդիպեց իր կեանքի

---

1 Dr. Berg, "Bibliotheekleven„, 1924, Nr. 3, Utrecht.

վերջին տարիներում, եւ աննպաստ հանգամանքների բերմամբ Ամստերդամի տպարանի գոյութիւնը վերջ գտաւ, մեծապէս մխիթարական է գոնէ այն, որ տպարանի գոյքն, այսինքն տառերի ամբողջ կազմը, Ղուկասի մահից յետոյ, անցաւ Մխիթարեան Միաբանութեան ձեռքն եւ ծառայեց Մխիթարեան Տպարանի ծաղկման: Մխիթար Աբբայ գոհ էր այն հայերէն տառերից, որ իր ժամանակ կային Վենետիկի իտալական տպարաններում եւ ձգտում էր աւելի ընտիր հայր եւ մայր դրոշմներ ձեռք անցընելով սեփական տպարան ունենալ: Երբ նա լսեց թէ Վանանդեցիների տպարանը պարտքի փոխարէն անցել էր պարտատիրոջ ձեռքը, իսկոյն միջոցներ ձեռք առաւ այդ տպարանի տառերին տիրանալու, շատ լաւ գիտնալով նրանց առաւելութիւնը: Եւ յաջողեցաւ: Այս մասին շատ հետաքրքրական է Մխիթարեան վանքի ժամանակագրութիւնն, ուր մանրամասն պատմուած է այս նշանակալից դէպքը: Այնտեղ յառաջ են բերուած թէ Վանանդեցիների ունեցած տառերի մանրամասնութիւնները եւ թէ այն միջոցն, որով Մխիթար Աբբայ տիրացել է դրանց: Ահա ժամանակագրութեան այդ էջը (353):

“Ցամի 1729. Հասին առ մեզ պղնձի գաղափարք տպագրական տառից, եւ ընդ իւրաքանչիւր նոցա պողովատիկ նշանագիծք, յորոց դրոշմելոյ լինին գաղափարքս այսոքիկ. եւ էին սոքա երից կարգաց. զի էր ի նոսա խոշորագիր, մանրագիր եւ միջասահման. եւ յիւրաքանչիւ-

րուժ կարգի եղեալն ունէր զնուր գլխագիրն ըստ իւրում պայմանին. այլ եւ նշանագիծս կէտից, շեշտանշակաց եւ այլոց նշանախեցից, որք առ տպագրութիւն գրոց կարեւորք են. ամբողջ, անեղեալ եւ անվթար: Մանրագիրն եւ միջասահմանն ունէին եւ զնատրգիր ըստ իւրեանց պայմանի, այլ խոշորագրին ոչ գոյր: Էին եւս նշանագիծք խազից շարականաց. ամենեքեան տոքա պողովատիկք ամբողջք, անվթարք եւ վայելչատիպք եւ անաղարտք: Այլ թէ ուստի եւ զնարդ եղեւ մեզ ի ձեռս բերել, ոմն ի վաճառականաց Յարութիւն անուն, բարեկամ էր Աբբահօր մերում. սա յորժամ հանդերձիւր յամսդելօտամ երթալ՝ յանձն արար նմա, հարցփորձ առնել անդ եւ գիտել՝ թէ յո՞ր ձեռս անցեալ իցեն եւ առ որո՞ւմ կացցեն տպագրից գաղափարքն եւ նոցա պողովատիկ դրօշմիչքն, յետ անցանելոյ նոցա, որք զկնի Ոսկանայ եպիսկոպոսին փոխանորդեալք զտպագրատուն կալան յամսդելօտամ, եւ զայլ գաղափարս յաւելեալ ի նոսա ճոխացուցին: Եւ եղեւ ի հասանել նորա անդր, հարցփորձ առնէր զայսմ իրէ եւ գտանէր առ միում ի վճար պարտուց տուեալ այն ամենայն: Ծանեաւ զգին նոցա եւ ազդ արար Աբբահօր մերում. յայնժամ գրեաց առ նա աբբահայրն գնոց առնուլ զնոսա վասն մեր, եւ այնպէս արարեալ եբեր առ մեզ, եւ աբբահայրն մեր տուեալ նմա զգինն ամենեցուն, էառ զամենայնս[1] *»:*

---

[1] Հ. Զարբհանալեան, Պատմութիւն Հայկական Տպագրութեան, Վենետիկ 1895, էջ 159—160:

Սուրբ Ղազարի տպարանի լոյս ընծայած հրատարակութիւնները "խիստ անշուք են աչքի բերան, մանաւանդ գործածուած թղթին եւ այլ պարագայից նկատմամբ", այնպէս որ "ուրիշ ազգային այլ եւ այլ տպարաններ՝ իրենց տառից մթերքը ճոխացնելով պարծանք եւ գեղեցկութիւն ընծայեցին Հայ արուեստին եւ առանձինն՝ եւ թերեւս շատեր գերազանցելով, Համանուն Ուխտին տպարանն ի Վիեննա եւ Արամեանն ի Պարիս...": ԺԹ. դարի առաջին քառորդին Վենետիկի Միաբանութիւնը նոր ջանք գործ դրեց իր տպարանը ճոխացնելու, բազմաթիւ օտար տառեր աւելցրեց եւ "այդ բազմազգի տառից առաջին անգամ տպագրեցաւ Շնորհալի սուրբ Հայրապետին Հաւատով խոստովանիմ աղօթքը քսանուչորս լեզուով" 1833ին: Մխիթարեան Միաբանութիւնը շատ գեղեցիկ միտք է ունեցել այն ժամանակ այդ իր բազմալեզու ճոխ հրատարակութիւնը նուիրելու այն երկրի իշխանին ուր առաջին անգամ Հայ տպագրական արուեստը ծաղկեց ու զարգացաւ: Հոլանդայի թագաւորը Գուլիելմոս Նասաու՝ շնորհակալութեամբ ընդունելով այդ հազուադէպ ընծան, իր գլխաւոր պաշտօնեան հետեւեալ նամակն է ուղարկել Միաբանութեան՝ 1834 Ապրիլ 15 թուով.

"Je me suis empressé à remettre à S. A. le Roi, le cadeau intéressant d'un exemplaire de choix de l'édition polyglotte des Praeces S. Nierses Clajensis, que vous avez

bien voulu à confier à cette fin ; et S. M. sensible à cette attention bienveillante, a non seulement ordonné la déposition de ce volume dans la Bibliothèque Royale, ici en ville (La Haye), mais a daigné aussi par un arrêté spécial, décerner à votre établissement util la médaille d'honneur, en argent, destinée, comme une rémuneration royale vis à vis des personnes, et portant d'un coté son effigie et de l'autre une inscription honorable, en mémoire de ce présent[1]„.

ԺԸ. դարի երկրորդ կէսին, մի նոր եւ շատ լուրջ փորձ եղաւ վերանորոգելու Ամստերդամի Հայտպարանի գոյութիւնը: Շահան Չրպետ պատմում է, որ "1756ին Առաքել անունով Ջուղայեցի մի զարգացած վաճառական, Ամստերդամում 10 զանազան տեսակ հայերէն տառեր շինել տուեց մի ճարտար գերմանացի, Fleischman *անունով արուեստաւորին եւ մի նոր կառարեալ տպարան հիմնեց իր ծախքով: Նա հրատարակեց իր լեզուով բազմաթիւ երկասիրութիւններ եւ իր մահից յետոյ ամբողջապէս կտակեց հայ եկեղեցուն[2]„: Ճիշդ է, որ Ամստերդամի վաճառականներից Ջուղայեցի Տէր Առաքելենց Պօղոսի որդի Առաքել, որ զարգացած անձ էր,* Arachiel di Paulo *եւ հարուստ, 1755 դեկ-*

---

1 Անդ, էջ 163—164:

2 Notes de Chahan de Cirbied, Ան. հիւս 1904, Փարիզ:

տեմբր. 16ին Jan Michael Fleischman փորագրիչին շինել է տուել 7 տեսակ Հայերէն տառեր եւ երգեցողական խազեր, ընդ ամէնը 500 հայր եւ համապատասխան թուով մայր տառեր, որոնց իւրաքանչիւրին վճարել է 3 ֆլորին եւ "եթէ հարկաւոր լինէր նոր յաւելուածական մայրեր-հատին մէկ ֆլորին պիտի վճարէր": Այս մասին արժանահաւատ աղբիւր է հոլանդական նշանաւոր ձուլարան Euschede տան հրատարակութիւնն իր ձուլած տառերի մասին (1768), որի յառաջաբանում ասուած է. "J. M. Fleischman 1756ին եւ 1757ին եօթը ձեւ զարմանալի գեղեցկութեամբ Հայերէն տառեր փորագրեց Arachiel di Paulոյի համար, որ այժմ էլ օրինաւոր տէրն է դրանց": Հրատարակիչը դրանցից յառաջ է բերել 4 տեսակ Հայերէն տառերի օրինակներ՝ Text Armenisch, Augustyn Armenisch, Mediaan Armenisch եւ Descendiaan Armenisch կոչումներով, որոնցից երրորդ տեսակով տպուած է Հայերէն ամբողջ մի պարբերութիւն "...քանդակեալ եղեւ եւ տպեցաւ ի թուին փրկչին ռչծզ մայիսի մէկ, յԱմստերդամ": Բայց թէ Առաքել իր այս տառերով Ամստերդամում "բազմաթիւ երկասիրութիւններ" հրատարակած լինի, ինչպէս պատմում է Ջրպետ, կասկածելի է թւում, որովհետեւ ոչ մի տեղ չեն յիշուած, գոնէ մենք ոչ Ամստերդամում եւ ոչ Լէյդէնում կամ Հոլանդայի որ եւ է այլ մատենադարանում 1756ի կամ այնուհետեւ Հայերէն տպագրութեան չենք հանդիպած:

Սակայն Առաքելեան այս նոր տառերի գոյութիւնը ծանօթ էր Հայութեան կենդրոններում: Սիմէոն կաթողիկոս 1765ին գրում է Ջմիւռնիայի առաջնորդ Ղուկաս վարդապետին, որ միեւնոյն ժամանակ Էջմիածնի նուիրակն էր այնտեղ, թէ Ամստերդամում "ազնիւ եւ ընտիր փորագրութեամբ" հայերէն տպագրական տառեր կային, որոնք ոմն Առաքել շինել էր տուել եւ պատշաճաւոր բանուորի պակասութեան պատճառով չէր կարողացել տպարան հաստատել, ինչպէս ցանկանում էր ինք, ուստի պատուիրում էր, որ բանակցի Առաքելի հետ, գնէ այդ տառերն եւ ուղարկէ Էջմիածին: Ինչպէս երեւում է Ղուկաս վարդապետ չէ կարողացել կատարել այս պատուէրը, որովհետեւ կաթողիկոսը գրել է Ամստերդամի գաղութի հովիւ Յովհաննէս վարդապետին (Ամասիացի) խստիւ հրամայելով, "զի զԱռաքելի գիրն՝ կամ անդ տպարան հաստատել տալ եւ կամ առնուլ եւ ի սուրբ Աթոռն յղել. իսկ եթէ Առաքելն չտայցէ եւ թէ անդ տպարան իցեն հաստատելոց կամ ոչ, նոյն փորագրողին, զձեռն ի գիր վասն սուրբ Աթոռոյն՝ փորեցուցեալ յղեսցէ": Կաթողիկոսը դրա հետ միասին ուղղակի Առաքելին էլ է գրում, որ իր ունեցած տառերը եւ ամբողջ տպարանական կազմը Էջմիածին ուղարկէ՝ կամ իբր նուէր եւ կամ արժէքը ստանալով Ջմիւռնիայի Առաջնորդից: Իսկ եթէ նա մտադիր է իր սեփական տպարանը բանալ Ամստերդամում եւ այդ տառերն այնտեղ գործածել, խնդրում է, որ նոյն

փորագրողին էջմիածնի հաշուին մի մի օրինակ եւս փորել տայ իր ունեցած բոլոր տառերից, ծաղկագրերից եւ զարդերից։

Ընայելով Սիմէոնի օգտաւէտ ջանքերին եւ պատուէրներին, Առաքելի տառերը մնացել են Ամստերդամում։ Այս այն տառերն են, որ Գէորգ Արծրուն[1] ամբողջապէս գնելով ընծայել է ներսէս Ե. կաթողիկոսի 1814ին Թիֆլիսում հիմնած եւ իր անունով կոչուած Ներսիսեան Դպրոցին, որ այս կերպով հնարաւորութիւն ունեցաւ սեփական տպարանի տէր դառնալու։

Վերոյիշեալ Euschede հոլլանդական տունը՝ 1825ին հրատարակած նոր տառացուցակի մէջ, անդրադառնալով նոյն հայերէն տառերին, ասում է. "Շատ ցաւում ենք, որ Fleischman՝ Ամստերդամի հայ եկեղեցու համար փորագրած հայերէն տառերը չկարողացանք ձեռք անցընել, որովհետեւ դրանք, շատ ժամանակ չկայ, որ փոխադրուեցան Ռուսաստան"։

---

1 "Մշակ" լրագրի խմբագիր-հիմնադիր Գրիգոր Արծրունու պապն, որ Վանից տեղափոխուել էր Թիֆլիս եւ այնտեղ բնակութիւն հաստատել։ Գէորգ Աղան, ինչպէս դեռ հիմայ յիշում են նրան Թիֆլիսցիք, համարում էր թէ ինքն Արծրունիների նախարարական տոհմից է եւ բազմաթիւ տոհմային վաւերագրեր ներկայացնելով ռուսական կառավարութիւնից խնդրել էր, որ իշխանի տիտղոս յատկացուի իրեն եւ իր ժառանգներին։ Բայց իր այս խնդիրքն առանց հետեւանքի մնաց։

Է.

Վանանդեցիների աշակերտ՝ Շրէօդէր գերմանացի հայագէտը. Նրա “Գանձ Արամեան Լեզուի„ հեղինակութիւնը։ Շրէօդէրի անտիպ “Հայ-լատին բառարանը„։ Ագուլեցւոց բարբառով մի հին ոտանաւոր։ Լակրոզ հայագէտ գաղղիացին եւ Նրա անտիպ “Հայ-լատին բառարանը„ Լէյդէնի Մատենադարանում։ Լակրոզի կարծիքը Շրէօդէրի մասին։

—

Վանանդեցիք Ամստերդամում հաստատուելով ոչ միայն հայկական տպագրութիւնը զարգացրին, այլ մասամբ զարկ տուին նաեւ հայագիտութեան տարածմանն Եւրոպայում։ Հայերէնի ուսումը հրապուրեց մի քանի եւրոպացի նշանաւոր արեւելագէտներին, որոնք մեծապէս օգտուած են Ղուկասից։ Դրանցից երկուսի գործունէութիւնը կապուած է Ամստերդամի հետ, ուստի եւ աւելորդ չենք համարում առանձնապէս խօսիլ նրանց մասին։

Ծանօթ է Շրէօդէր (Schröder) գերմանացին կամ ինչպէս ինքն է գրում հայերէն — “Յովհաննէս Սկրօդէրեան„ — իր “Գանձ Արամեան Լեզուի„ վերնագրով, հայերէն լեզուի ուսումնասիրութեան նուիրուած հմտալից ընդարձակ երկասիրութեամբը։ Շրէօդէր եղաւ, “որ զտելով, լրացնելով եւ ամփոփելով իր նախորդների խառն, անսիստէմ եւ շատ անգամ

սխալ տեղեկութիւնները հայ լեզուի եւ գրականութեան մասին, տուեց 1711 *ին լատին լեզուով իր "Արամեան Լեզուի գանձը„ (էջ* XVI + 64 + 410 + 80), *իսկապէս մի հայկական հանրագիտակ-*encyclopédie *հայ բանասիրութեան: Հայ լեզուի ծագումը եւ զարգացումը (հարկաւ նոյն ժամանակի գիտութեան համաձայն), հայկական տպագրութիւնը, հայոց տաղաչափութիւնը՝ եւրոպական երաժշտական նօտաներով, "դաւանութիւն հայոց„՝ հայ բնագիրներով եւ լատին թարգմանութեամբ ու մեկնութիւններով, արեւելեան աշխարհաբարի քերականութիւնը եւ նրա լուսաբանութիւնը կենդանի լեզուի օրինակներով, "խօսակցութիւններով„ ընտանեկան սովորոյթների, գաղափարների եւ կենցաղի մասին, նամակագրութեան օրինակներ եւ վերջապէս հայուլատին բառերի ընդարձակ ցանկեր, — ահա թէ ինչ է պարունակում "Արամեան Լեզուի գանձը„*[1]:

Շրէօդէր իր այս հեղինակութիւնը՝ "Thesaurus linguae Armeniacae„ *հրատարակած է Ամստերդամում, Հոլանդական տպարանում, վանանդեցիների տուած հայերէն տառերը գործածելով: Իր գրքի լատիներէն յառաջաբանում նա՝ երախտագիտական պարտք է համարում հնորհակալութիւն յայտնել իր հայերէնի ուսուցիչներին, "հայ արքեպիսկոպոս Թոմաս Գոդէ-*

---

1 "Ցուշարձան„ Մխիթ. Միաբ., Վիեննա 1911, էջ 181. Պրոֆ. Գրիգոր Խալաթեանցի յօդուածը:

նեցուն (Thoma Golthanenti) եւ սրա եղբօրորդի Ղուկաս Նուրիջանեանին (Luca Nurigianide)„։ Շրէօդէր գովասանքով է խօսում մանաւանդ Ղուկասի մասին, որ "նշանաւոր էր բազմաթիւ ասիական եւ եւրոպական լեզուների հմտութեամբ„։ Նա խոստովանում է որ "Հայերէնի ուսման մէջ մեծ յառաջադիմութիւն է արել շնորհիւ այս ամենահաւատարիմ ուսուցչի„։

Ղուկասի մասնակցութիւնը "Արամեան Լեզուի գանձում„ երեւում է նաեւ նրանից, որ այնտեղ ինքն էլ հետեւեալ ոտանաւորն է զետեղել իբրեւ վերջաբան.

"... Թէեւ յայլոց այս գործ փորձեալ
Բայց Գանձ սորին գերազանցեալ
Զի հայկական ներկուստ եղեալ
Զարհեստ տաւից ներհուն վարժեալ
Քաջդ Յոհաննէս պայծառացեալ
Գերմանացւոց փառք ծագեցեալ։
Ով ազգ պայծառ բարեօք լըցեալ
Ի փիւնիկեայ զարմէ սերեալ
Որ ոչ հեռի Հայոց եղեալ
Եւ ոչ միմիանց օտար գըտեալ։
Արի զուարթ մեզ մերձեցեալ
Որպէս խնամի եւ ազգակցեալ.
Այսու գործով օժանդակեալ
Զաւրատեան գանձըս գիտեալ
Զի Սկրօդէրեանն զայս ինչ գանձեալ
Ի մէջ գանձից Գանձ նոր ցուցեալ
Ամենայնիւ սա գանձացեալ
Գանձասիրաց յառաջ եղեալ։„

Շրէօդէրի այս երկասիրութեան "Դաւանութիւն Հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց" բաժինը հրատարակուած է վերստին Լոնդոնում 1780ին, "Թարգմանեցեալ ի հայկական լեզուէ ի լատին բարբառ ի Յոհաննիսէ Սկրօդէրեան գերմանացւոյ։ Եւ արտահանեալ ի "գանձ Արամեան" կոչեցեալ գրգոյն, աշխատութեամբ ջուղայեցի Խալդարեանց Խօջամալի որդւոյ Գրիգորի։ Իսկ այժմ վերստին տպեցեալ՝ ի խնդրոյ Գերապայծառ Տեառն Յովսէփայ Աստուածաբան վարդապետի եւ Առաջնորդի Աշտարխանու եւ Նոր Նախիջեւանու"։ "Արդեամբք եւ ծախիւք նոյնոյ Գրիգորի"[1]։

Շրէօդէր թողել է նաեւ երկու անտիպ երկասիրութիւն, որոնք հայ-լատին բառարանի նիւթեր են, ինչպէս նկարագրում է պրոֆ. Խալաթեանց, որ անձամբ տեսել ու քննել է դրանք։

"Դրանցից մէկը, գրում է նա "Յուշարձանի" մէջ, իր վերոյիշեալ յօդուածում, մի գիրք է 332 էջ in 4°, այսպիսի խորագրով, որ հեղինակին է պատկանում. "Index vocum in Lexico Armeno-Latino comprehensarum"։ Այստեղ պատրաստուած են լատիներէն բա-

---

[1] Վերջին էջի վրայ կայ մի երկար յաւելուած, որ սկսում է այսպէս. "Եւ սաստ ի պարապ տեղւոջս եդաք սակաւ ինչ բան յաղագս համեստութեան, թարգմանեալ ի յանգլիացւոց.

"Ո՞վ ես դու մարդ, որ վստահանաս յիմաստութիւն քո, կամ ընդէ՞ր պարծիս ի ստացուածս քո ... եւ այլն" ընդ ամէնը 29 տող։ Այս յաւելուածը, երեւի նոյնպէս "նոյնոյ Գրիգորի" աշխատութիւնն է ...։

ռերը, որոնց իւրաքանչիւրի դէմ նշանակուած է մի թիւ. այդ թուերով որոնելու է նոյն լատին բառի հայերէն նշանակութիւնը միւս գրքում— in F^0 գիրքով եւ 640 էջով՝ նոյնպէս դեղին թղթի վրայ գրուած, ուր այբբենական կարգով դասաւորուած են հայերէն բառերը։ Սրանից զատ այս մեծադիր թերթերի մէջ զետեղուած են՝ իբրեւ մաքուրի առած՝ in 4^0 թերթեր„ — լատին նշանակութեամբ հայերէն բառեր։ — Բառերի դէմ գրուած են համառօտակի՝ որոշ հոլովներ, բայերի դէմ՝ խնդիր սեռի կամ բնութեան եւ առանձին գիտելիք՝ ոճերի մասին. վկայութիւն՝ թէ ո՞րտեղ է պատահում այդ բառը՝ ես չնկատեցի, թէեւ հեղինակը, ինչպէս կը տեսնենք բառարանի ընդարձակ խորագրից, դիտաւորութիւն ունէր այսպիսի ցուցումներ եւս անել։ Ընդհանրապէս այս բառարանը (դեռ անկատար) նոյն տպաւորութիւնն է անում, ինչ որ միւս հայ-լատին բառգրքերը՝ ինչպէս Ռիվոլայինը (1631 թ.) Վիլոթինը (1713 թ.)...։ Միծադիր 15րդ եւ 16րդ էջերի մէջ կայ մի in 4^0 թուղթ, որ ըստ երեւոյթին Շրէօդէրի ապագայ բառարանի խորագիրն է կրում. "Բառարան Հայկօ-լատին. Dictionnarium Armeno-Latinum, in quo ex sacris et profanis scriptoribus omnia quae occurrerunt vocabula fideliter explicantur, loca auctorum notantur, barbara et exotica a geminis distinguuntur etc. H. S. J. W. Schröder 1757, opera ac studio Joachimi Schroeder... ab anno 1706։ — Հեղինակը

ուրեմն աշխատելիս է եղել այդ գործի վրայ ճիշտ 50 տարի՝ յուսալով գուցէ 1757 ին տպագրել նրան, ինչպէս նշանակուած է խորագրում, բայց վախճանուեց մի տարի առաջ՝ առանց իր նպատակին հասնել կարենալու„:

“Այնուհետեւ Շրէօդէրը նշանակում է այն գրեանքը, որոնցով օգտուել է նա իր բառարանը կազմելիս. “Catalogus librorum qui ad notitiam meam pervenerunt et quorum subsidio atque auctoritate usus sum in hoc libro„: Ժէ. դարում Հռոմ, Պարիս եւ այլուր տպագրուած կրօնական, քերականական եւ բառարանական բովանդակութեամբ 22 լատին գրքեր մի առ մի նշանակելուց յետոյ Շրէօդէր ասէ թէ մէջ է բերում նոյն դարում լոյս տեսած նման բովանդակութեամբ հայ հրատարակութիւնները. այստեղ կայ եւ մի ներբող Խորենացուն, ուր Ամստերդամի հայագէտը՝ ի միջի այլոց՝ նշանակում է հայ պատմաբանի աղբիւրները՝ թուով 32 եւ ապա դնում է հայ մատենագիրների ցանկը՝ Ագաթանգեղ, Զենոբ Բիւզանդ... մինչեւ Առաքել պատմագիրը: Սրանից յետոյ՝ մի քանի թերթ մաքուր թողած՝ Շրէօդէր՝ թուելով Հոլանդիայի Լէյդէն քաղաքի մատենադարանի 17 տպագիր լատին եւ հայ գրքերը... յիշում է եւ նոյն մատենադարանի 12 հայ ձեռագրերը[1]...: Յետոյ գալիս է Վենետիկի թուա-

---

[1] Լէյդէնում այժմ անհամեմատ աւելի մեծ թուով հայերէն գրքեր եւ ձեռագիրներ կան. սրանց մասին պիտի խօսինք առանձին, աշխատութեան վերջում:

թոլի տպարանի մինչեւ 1709 թիւը հրատարա-
կած հայ գրքերի ցանկը. ապա Բեռլինի արքու-
նական մատենադարանի հայ գրքերի ցուցակը,
որը այն ժամանակ շատ աղքատ էր ... եւ վեր-
ջապէս Ըրէօդէր նշանակում է Հռոմի Վատի-
կանի մատենադարանում իր ժամանակ գտնուած
հայ ձեռագիրները ...: Ըրէօդէրի յիշած նիւ-
թերի վերջում կայ եւ այսպիսի մի հետաքըր-
քրական նկատողութիւն. Ըտէֆինի Ս. Մարիամ
եկեղեցում գտնուած մատենադարանում պահ-
վում է մի մեծագիր հայ ձեռագիր՝ ոսկեզօծ
կողերով, որի ճակատին գրուած է. Ego Cptany
Armenorum presbyter, Arrakel vocant me, no-
mine Jacobus de Grigoriis, veni huic Bero-
linum et habitavi aliquandiu ut irem ad ...
et multos habens libros non potui eos por-
tare mecum, prae paupertate hunc librum
vendidi Sacerdoti (Andrea Musero) 1674...[1]:„

"Անհամեմատ աւելի հետաքրքրական է Ըրէօդէրի հաւաքած նիւթերի մէջ եւ կարելի է ասել՝ թանկագին մի գիւտ է այժմ մեզ համար — Ազուլեցոց քարտուղով մի ոտա-նաւոր, որը գտայ ես Հայկաբանի թղթերի մէջ: Ինչպէս երեւում է՝ նախապէս պատրաստուած է եղել սա "գանձի„ համար եւ սրա մի աննշան մասն է, որ լոյս տեսաւ այդ աշխատութեան մէջ

---

1 "Արդեօք սա նոյն Յակոբ Գրիգորենց քահանան չէ, որ 1676 թուին Լայպցիգ էր եկել եւ որոշ ծառայու-թիւններ մատուցել Յանօթ գերմանացի Հայապէտ Ակոլու-թոսին„. Յանօթ. Գր. Խալաթեանցի՝ "Ցուշարձանում„:

(էջ 356)։ Ոտանաւորը, որ "Տուն գողթան քերթօղ եւ թարգման„ վերնագիրն է կրում եւ որը հաղորդած կամ յօրինած պէտք է լինին Շրէօդէրին շատ բանում օգնող Ամստերդամի էջմիածնապատկան[1] տպարանի կառավարիչ Գողթնեցի Թոմաս եպիսկոպոսը եւ նրա քրոջ որդի Վանանդեցի Ղուկաս Սուրիջանեան, — բաղկացած է 55 տողից . . .[2]„։

Շրէօդէրի չափ եթէ ոչ աւելի՝ նշանաւոր է միւս հայագէտը Լակրոզ (Lacroze)[3] գաղղիացին, որ բազմաթիւ լուրջ պատմական ու-

---

1 Այստեղ "էջմիածնապատկան„ խօսքը իր տեղին չէ, որովհետեւ Թոմաս եպիսկոպոս երբեք չէ յայտարարել ոչ մի տեղ, որ իր տպարանն էջմիածնին է պատկանում. ընդհակառակը նա՝ իր կոտակովը շատ որոշ կերպով հաստատել է թէ տպարանն *իր անձնականին է պատկանում*, որն եւ ինքը նուիրում է "իր սիրեցեալ հայրենիքին„։ Էջմիածնին պատկանել է, ճշդապէսը՝ էջմիածնին նուիրել են Ամստերդամի անդրանիկ տպարանը՝ Մատթէոս Ծարեցու հիմնադիր եւ Ոսկան եպիսկոպոսի կառավարածը, ինչպէս պատմեցինք։

2 "Ցուշարձանի„ մէջ ամբողջապէս տպուած է (էջ 184) այս հետաքրքրական ոտանաւորը, որ "քարքառագիտութեան տեսակէտից մանաւանդ կարեւոր է„, ինչպէս գրում է Խալաթեանց։

3 Lacroze *կամ լուն անունով*, Mathurin Veyssière de la Croze ծն. Նանտ (Ֆրանս.) *քաղաքում* 1661 *ին եւ մեռած Բերլինում* 1739 *ին։ Նա մտել էր* 1677 *ին Սոմիւրի Բենեդիկտեաններին վանքն եւ* 1682 *ին կրօնաւորական կարգն ընդունել, բայց վանքի մեծաւորի հետ կռուելով փախաւ Ջուիցերիա, Բալ* (Bâle) *քաղաքն եւ այնտեղ բողոքականութիւն ընդունեց։ Բերլինում, նա նշանակուեց մատենադարանի կառավարիչ եւ մտերմական յարաբերութիւններ ունեցաւ Լէյբնիցի հետ։* Nouvelle Biographie Générale par Firmin Didot frères. T 46. Paris MDCCCLXVI։

ստմնասիրութիւններ ունի արեւելագիտութեան վերաբերեալ: Նա ունի ի մէջ այլոց՝ Histoire du Christianisme des Indes *տպ. Հաագում, 1724ին, որ նրա լաւագոյն աշխատութիւնն է: Նա ունի նաեւ* Histoire du Christianisme d'Ethiopie et d'Armenie, *տպուած նոյնպէս Հոլանդայի մայրաքաղաքում 1739 ին եւ դրանցից զատ նաեւ բազմաթիւ անտիպ Հեղինակութիւններ, մեծ մասը արեւելեան լեզուների բառգիրքեր, որոնց թւում առաջին տեղն է բռնում Հայ-լատին բառարանը: Լակրոզ խորին Հըմտութիւն ունէր Հայերէն լեզուի. դեռեւս այն ժամանակ նա անխնայ քննադատած է Մ. Խորենացու պատմութիւնն եւ կասկած է յայտնած Քերթողահօր՝ Ե. դարի մատենագիր լինելուն:*

Լակրոզի Հայերէն բառարանն, որ անտիպ է մնացած եւ որի ձեռագիրն այժմ գտնվում է Լէյդէնի Համալսարանի մատենադարանում[1] *2 Հատորից է կազմուած, ծանօթ է իր բոլոր կենսագիրներին, եւ նոյնպէս երկար տարիների աշխատութեան եւ որոնումների արդիւնք է ինչպէս Շրէօդէրինը:*

Պրոֆ. Գր. Մակլէր, որ տեսած եւ քննած է այս կարեւոր երկասիրութիւնը Լէյդէնի Մատենադարանում, այսպէս է նկարագրում.

"Ա. Հատոր ի տիտղոսն է՝ Dictionnarium Armenico-Latinum ‖ summo studio et labore ‖ ex sacris biblis variisque Armenorum recen-

---

1 Leiden. 119 Worneri Mss. Orient. N 431 A.

tio ‖ ris et veteris aevi libris ‖ elaboratum a ‖ Maturino Veyssière Lacroze, qui et Prae ‖ fationem addidit, de antiquitate et usu Linguae ‖ Armeniacae ‖ ... Pars prima ‖ Berolini ‖ anno Domini nostri Jesu Christi ‖ MDCCXII ‖ Martii XXIII . . .„

„Յառաջաբանը շատ կարեւոր է պատմական տեսակէտից. հեղինակը հայերէն Աստուած բառը մերձեցնում է Astyage, Աստվագին . . .:„

„Բառարանը սկսում է ա. տառի բացատրութեամբ. թարգմանուած առաջին բառն է՝ աբեղայ = cœnobita, monachus, իսկ վերջինը՝ կցորդիլ = communicare . . .:„

„Բ. Հատոր. տիտղոս՝ Lexico armenico-latinum. Dictionnarii Armenico-latini pars altera. սկսում է հ. տառով եւ հա բառով եւ վերջանում է ք. տառով եւ քովք բառով: 611 երես էջի տակ դրուած է. "վերջ. finis. Incoepi X. Mensis Junii A. C. M. DCC. IX. Absolvi XXII. Januari A. C. M. DCC. XII. Maturinus Veyssière La Croze. Berolini . . .„

„Ա. Հատորը XCIX + 649 էջ եւ 3 սպիտակ թերթ: Բ. Հատորը՝ 622 էջ եւ բազմաթիւ պարապ երեսներ գրքի վերջը . . .[1]:„

Լակրոզ մեզ առանձնապէս հետաքրքրում է այն տեսակէտից, որ նա շատ խիստ կերպով է

---

1 Rapport sur une Mission scientifique en Belgique, Hollande, Danemark et Suède (Juillet–Sept. 1922) par M. Frederic Macler, Paris 1924, էջ 26–27:

քննադատում Շրէօդէրի “Գանձ Արամեան Լեզուի„ իր մի մասնաւոր նամակում, որ նա ուղղել է իր հոլանդացի մի բարեկամին։ Ամստերդամի համալսարանի Մատենադարանում պահվում է հոլանդական Deventer քաղաքի գիտնական քաղաքապետ Gijsbert Cuperի ընդարձակ հոլանդերէն նամակը յանուն մի ուրիշ գիտնական քաղաքապետի, Nicolas Witsenի, որ արեւելագէտ էր եւ երկար ճանապարհորդութիւններ է կատարած Մերձաւոր Արեւելքում, ի մէջ այլոց նաեւ Հայաստան, եւ Ամստերդամի գաւառապետն էր։ Նամակը գրուած է Oxenից եւ կրում է 1712 Օգոստ. 19 թիւը։ Այնտեղ Cuper խօսում է Լակրոզի մասին, որից մենք մէջ կը բերենք այն մասերը, որոնք նրա հայագիտութեանն են վերաբերում.

“…Ցիշեալ պարոն Lacrosiusը, գրում է Cuper, շատ խոր հմտութիւն ունի արեւելեան լեզուների. յօրինած է հայերէն լեզուի բառարան, որի մասին ինձ հետեւեալն է գրում։ “J'ai achevé mon Dictionnaire arménien, et je l'ai chez moi, relié en deux volumes en grand fos de plus de 3000 pages, avec une préface fait longue: De Antiquitate et usu linguae Armeniacae (ստորագծումը նամակագրինն է). J'y ai fait entrer beaucoup d'observations curieuses dont aucunes n'ont jamais esté dites par qui que ce soit. Si j'avais esté en Hollande, j'aurais porté cette préface avec moi pour la soumettre à votre critique„.

"Լակրոզիուս այս վերջին պարբերութիւնը նրա համար է գրուած, որովհետեւ մտադրութիւն ունէր Հոլանդա գալ եւ ինձ այցելել: Ես ի հարկէ ամենամեծ սիրով կ'ընդունէի այդպիսի մի մեծ պիտանականին„:

"Նա ինձ ուրիշ առթիւ էլ գրած է թէ՝ շնորհիւ Հայերէնի կարելի է կենդանացնել Մարաց լեզուն: Այս դիտողութիւնը շատ ճիշդ է թւում ինձ. դրանից կարելի է այն եզրակացութիւնը հանել, որ Հայերէնը Մարաց լեզուի յաջորդը կամ ճնացորդն է, որով պէտք է ենթադրել թէ կանխապէս այդ երկիրներում մի ընդհանուր լեզու գոյութիւն ունէր:„

"Ես տեսնում եմ, որ պարոն Sperlingius իր թէ կարդացել է Olearius'ի մէջ թէ պարսիկները թռչունի ձեւով գլխատառեր ունին: Չեմ իմանում, ճիշդ է այս պարսկերէնի մասին թէ ոչ, որովհետեւ ես այդ գրքից չեմ օգտուել, բայց հաստատ գիտեմ, որ հայերը շատ ճարտար կերպով իրենց գլխատառերին մարդու, ձկի եւ նոյնպէս թռչունի ձեւեր են տալիս. այս երեւում է 1709 ին Շրէօդէրի Ամստերդամում տպած Thesaurus Linguae Armenicae գրքից, որ ի մէջ այդպիսի 30 գլխատառ կայ: Լակրոզ Շրէօդէրի այս աշխատութեան մասին էլ գրել է ինձ 1711 Մայիս 8 ի նամակում եւ հետեւեալ նկատողութիւնն է անում„. J'ai enfin reçu le "Thrésor de la langue armenienne„ de Mr. Schroeder. J'appréhendais, qu'il ne m'eut enlevé quelqu'une de mes découvertes, mais je

n'avois rien à craindre. Nous marcherons bien cent ans lui et moi sans nous rencontrer. Je ne sais comment il a pû faire pour être si sterile dans une matière si abondante. Je tacherai de mettre au net mes observations sur cette langue; plust à Dieu que je puisse disposer comme lui des caractères arméniens qu'il a eu à sa disposition à Amsterdam. Cela m'engagera peut-être à faire un voyage, à Hollande vers la fin de cette année si Dieu me conserve la santé...„:

(*Հոլլանդացի նամակագիրն այնուհետեւ ուրիշ նիւթի մասին է խօսում, որն աւելորդ ենք համարում յառաջ բերել:*)

Թէ որչափ իրաւացի էր Լակրոզ իր այս խիստ քննադատութեան մէջ Շրէօդէրի "գանձ Արամեան Լեզուի„ գրքի մասին, չենք կարող դատել քանի որ իր սեպհական թանգագին հեղինակութիւնը — Հայ-լատին բառգիրքն, մնացեալ նրա ձառայլաբանը, դեռ մնում է անտիպ Էջմիածնի մատենադարանում եւ մատչելի չէ բանասէրներին, որոնց համար անհրաժեշտ է նախ ծանօթանալ Լակրոզի յիշած "բազմաթիւ հետաքրքրական դիտողութիւնների„ հետ: Սակայն տարակոյս չկայ, որ նրա նման լուրջ արեւելագէտը՝ առանց բաւականաչափ հիմք ունենալու չէր գրի այնպիսի ծանրակշիռ նկատողութիւն, ինչպէս է "Je ne sais comment il a pu faire pour être si stérile dans une matière si abondante . . .„:

Ը.

Առաջին հայ աղօթատունը Ամստերդամում 1663ին։ Եկեղեցու հիմնարկութիւնը 1713ին։ Ամստերդամի վաճառականների աղերսագիրը Ատուածատուր կաթողիկոսին։ Եկեղեցու նորոգութիւնը 1749ին։ Պաշտաւմունքի դադարումը 1806ին։ Եկեղեցու վրայ իրաւասութեան դատերը։ Ռուսական կառավարութեան միջամտութիւնը։ Եկեղեցու վաճառումը 1874ին։ Կ. Պոլսեցի Մասէհեաններուն ժառանգական պահանջը։ Օսմանեան կառավարութեան միջամտութիւնը։ Հարցի փակումը։

—

Հոլլանդայի եւ Թիւրքիայի մէջ կնքուած 1612ի դաշնագրի պայմաններից մէկն էլ այն էր, որ երկու տէրութիւնները փոխադարձաբար կրօնական ազատութիւն էին երաշխաւորում իրենց հպատակներին։ Ընդհէ այս հանգամանքի թրքական նաւահանգիստներից հետզհետէ սկսան Հոլլանդա գալ առեւտրական նպատակով ոչ միայն քրիստոնեաներ այլ եւ մահմետականներ։ Այն ժամանակ երբ հռոմէական կաթոլիկ դաւանութեան պատկանող եկեղեցականներն առանց հոլլանդական կառավարութեան յատուկ արտօնութեան չէին կարող հոլլանդա մտնել, թրքահպատակ հայերը իրաւունք ունէին ազատօրէն քահանայ բերել տալ իրենց համար Ամստերդամ։

Առաջին հայ քահանան, որ մեր պատմութեան շրջանում երեւացել է Հոլլանդայում, ոմն տէր Մարկոս Աբրահամեան է բայց նպաստաւոր ձեւի տակ: Հոլլանդական "Ընդհանուր Նահանգների" (Staten Generaal) 1618 Օգոստոս 28 թուով մի պաշտօնական որոշումը կայ, որի համաձայն "Մարկոս Աբրահամ Հայաստանցի քահանային եւ Տեննեդոցի յոյն կոնստանտինոյին յատկացվում է տասնական փլորին իբրեւ ճանապարհածախք[1]:

Հայ եկեղեցու մասին այն դարի Հոլլանդացիք շատ աղօտ գաղափար ունէին: Նրանք ենթադրում էին թէ Ամստերդամ եկող "հայերը կաթոլիկ էին, բայց այնպիսի կաթոլիկ, որոնք Հռոմից կախում չունէին":

Հայերն այս ձեւով անարգել մուտք գործեցին Հոլլանդա եւ թէ առեւտրական թէ կրօնական ազատութիւն էին վայելում: Երբ Նրանցից յառաջ եւ աւելի մեծ թուով Ամստերդամ եկող հրեաներին տեղական իշխանութիւնը մերժում էր "Ամստերդամի քաղաքացիութեան" իրաւունքը, հայերին իսկոյն շնորհուեցին այդ կոչումն եւ դրա հետ կապուած իրաւունքները:

Ամստերդամի գաղութի համար առաջին անգամ ծ. դարի կէսին զգալի եղաւ սեփական աղօթատուն ունենալու պէտքը: Գաղութի անդամներն այդ ժամանակ բաւական բազմացել էին եւ նրանց համար խորթ էր՝ օտար եկեղեցին

---

1 Bronnen եւայլ Heeringaյի էջ 263:

եւ անհասկնալի՝ օտար արարողութիւնը, մանաւանդ երբ շատերն արդէն հաստատուն բնակութիւն էին հիմնել եւ իրենց գերդաստանը բերել տուել: Նրանք նախ ժամանակաւորապէս մի տուն վարձելով, 1663ին այդ տունը յանուն Ս. կարապետի՝ մատրան վերածեցին: Առաջին քահանան եղաւ Անդրիանեցի կարապետ վարդապետան[1] որի տպագրական գործունէութիւնն արդէն յիշեցինք: Սա ծնած էր 1623ին եւ ըստ Հոլանդացի պատմաբանների "սահուն կերպով Հոլանդերէն էր խօսում", որով այս կողմից մեծապէս օգտակար հանդիսացաւ Ոսկանին:

Առաջին հայ աղօթատունը՝ բացի նրանից, որ վարձու, ուրեմն ժամանակաւոր շէնք էր, անյարմար տեղ էր գտնվում, ուստի գաղութը փնտռում էր աւելի յարմար մի վայր, որպէս զի յատուկ սեփական եկեղեցի կառուցանէ: "Հայերը, ասում է մի Հոլանդացի պատմագիր, ինչպէս բոլոր արեւելեան ժողովուրդները, շատ էին սիրում արտաքին զարդարանքը. ուստի նրանք ոչ միայն իրենց սեփական եկեղեցին ու-

---

1 Հոլանդական յիշատակագրութիւնները գործածում են այն վարդապետ — Wartabeth բառը, բայց իբրեւ մականուն ընդունելով: Կարապետ՝ իր անունը Հոլանդերէն Carabed Wartabeth էր տառադրում: Ուսոի երբ յետոյ Ոսկանն եկաւ եւ նա էլ սկսեց գրել Wuscan Wartabeth, Հոլանդացի արձանագրողները դրանից եզրակացրել են թէ նրանք երկու եղբայրներ էին քանի որ միեւնոյն Wartabeth մականունն էին կրում եւ այդպէս էլ նշանակել են: Ցիշատակագրութիւնների մէջ Ոսկանի եւ Կարապետի գործերը գտնելու համար հարկ եղաւ, որ Wartabeth անունի տակ փնտռենք նրանց եւ այդպէս էլ գտանք:

*ղեցին ունենալ, այլ իրենց վայել եւ ճոխ եկե-
ղեցի, այս նպատակով երկար ժամանակ ժողո-
վարարութիւն էին անում իրենց մէջ...»: Այս
դիտաւորութիւնը վերջապէս իրագործվում է
1713ին: Հայ վաճառականների աւագագոյն
անդամները, որոնք աղօթարանի ամուսնականները
էին, պապաջան Սուլթանեան եւ Նիկողայոս
Թէոդորեան կամ, ինչպէս նրանք ստորագրել են,*
Babasan di Sultan *եւ* Nicolaas Theodore,
*յանուն Հայ գաղութի աղերսագիր տուին Ամ-
ստերդամի քաղաքապետին, որով իրաւունք էին
խնդրում իրենց դրամական միջոցներով, սեփա-
կան Հայ եկեղեցի կառուցանելու: Քաղաքային
վարչութիւնը յօժարութեամբ համաձայնուեց:
Քաղաքային իշխանութեան 1713 Հոկտեմբ.
26ի որոշման մէջ այսպէս է արձանագրուած
այդ իրաւունքը. "Աստեղի Հայ վաճառական-
ների խնդիրքի հիման վրայ, պատշաճաւոր խոր-
հրդակցութիւնից յետոյ, բարի համարուեց ար-
տօնել, որ նրանք այս քաղաքում մի տուն գնեն
եւ եկեղեցիի վերածեն իրենց յատուկ աստուա-
ծային պաշտամունքը կատարելու համար"*[1]:

*Այս արտօնագրի հիման վրայ յիշեալ
վաճառականները շատ յարմար տեղ,* Booms-
loot *փողոցի վրայ, քաղաքի այն ժամանակի կեն-*

---

1 *Անգ բնագիրը.* "Op 't versoek van de Armenische Kooplieden alhier is na deliberatie goedgevonden haerlieden toe te staen binnen dese stad een huis te mogen Koopen om Daer een Kerk van te maeken, tot oefeninge van hunne goddienst. *Տես* Regering en Oud-Burgemeesteren van Amsterdam, fol. 35, verso.

դրոնում, մի շէնք գնեցին որ ապրանքի շտեմարան էր, քանդեցին լոլորովքին եւ եկեղեցու հանդիսաւոր հիմնարկութիւնը կատարեցին: Ամստերդամի քալաքապետն եւ ուրիշ պաշտօնական անձեր ներկայ են գտնուել այս հիմնարկութեան իբրեւ հետաքրքրական հանդէս, որ առաջին անգամ էր պատահում նրանց քաղաքում: Շնորհիւ պապալեանի եւ Նիկողայոսի, որոնք գործի գլուխ էին կանգնած եւ ուրիշ բարեպաշտ հայերի առատ նպաստներով, եկեղեցին շատ շուտով կանգնուեց: Ուրիշ չերմեռանդ անձեր յանձն առին եկեղեցու ներքին զարդարանքը. պատերի վրայ պատկերներ կախուեցան, խորանի վրայ արծաթեայ անօթներ դրուեցան եւ հարկաւոր եղած եկեղեցական պգեստները պատրաստուեցան: Ժամանակակից պատմագիր Wagenaar, որ անձամբ տեսած է եկեղեցին երբ նա շինվում էր, այսպէս է նկարագրում. "դա մի սիրուն շէնք է վրայէ վրայ երկու կարգ պատուհաններով, ամէն մի կարգում վեց վեց հատ", որ շատ ճիշդ է:

Այս ամէնը կատարվում էր նոյն վանահօր ջերմ յորդորանքովը եւ բարոյական աջակցութեամբը: Երբ շինութիւնը աւարտուեց, սկսան մտածել եկեղեցու օծման մասին եւ յանուն գաղութի հետեւեալ աղերսագիրն ուղարկուեց կաթողիկոսին: Աղերսագիրը գրողը նոյն անխոնջ ղուկաս Նուրիջանեանն էր:

"Երկար երանելի վեհափառ եւ բարձրագահ Դիտապետիդ Հայկազնեան տոհմիս, տեառն

Աստուածատրոյ, լուսաբնակ սուրբ Էջմիածնի արժանաժառանգ Աթոռակալիդ, եւ գերարփիաշնորհ Հօրն մերոյ Լուսաւորչի պանծալի Յաջորդիդ մատուցանեմք ակնակոր պատկառանօք զողջոյն որդիական. Նաեւ խնդամիտ սրտիւ շնորհաւորեմք զերանելի իշխանութիւն Սրբութեան ձերոյ մեք աստ յԱմստերդամ եղեալ Ներքոյգրեալ հայկազուն նուաստ որդիք սուրբ Աթոռոյդ„:

“Յայտարարութիւն սակաւուք լիցի Հօրդ մերոյ: Ի վաղեմեայ ժամանակաց մերազնեայ վտարանդի վաճառականքս՝ վաճառաց աղագաւ որ ըստ օրէ յուլթացեալ յաճախեմք աստ՝ յայսմ ծովապարփակ՝ տիեզերահռչակ՝ աշխարհախումբ՝ սքանչելիօրէն ամենահարուստ՝ մեծազօր եւ իրաւադատ Ամստերդամ քաղաքի, վասնորոյ հարկաւոր վարկեալ մեր ունել մեզ առանձին տեղի սակս սուրբ պատարագին, սահմանեցաք մեզ տեղի մի առանձին հանդերձ քահանայիւ, ուր լսեմք միշտ եւ անխափանն զԱստուածային պաշտօնն ըստ կարգի եւ օրինի մերում:„

“Բայց տեղին այն գոլով անպատշաճ եւ վարձու կալեալ՝ յառաջ քան զտասնամեայ ժամանակս հայկազնեայ վաճառականքս յօժարեցաք կանգնել աստ հաստահիմն եկեղեցի, սակայն յայլեւայլ պատահմանէ մինչեւ ցայսօր յետնեալ մնայր: Իսկ այժմյս բարեհաճութեամբ Հոգւոյն Սրբոյ համախոհ եւ միաբան հաւանութեամբ, մեք, աստ եղեալ հայկազնեայ վաճա-

ռականքս գնեալ հաստահիմն տեղի մի եկեղեցւոյ, հրամանաւ մեծազօր եւ բարձրաբերձ իշխանացն քաղաքիս՝ ձեռնարկաք շինել մեզ հարկաւոր եւ զվաղեմի փափագեալ եկեղեցին հաստակառոյց հիմամբ ի փառս Տեառն մերոյ եւ ի պարծանս Արամեան ազգին„:

“Մեծաւ ուրեմն թախանձանօք հայցեմք ի սրբազան Հօրէդ մեղմաբար ունկնդիր լինել համառօտաբանութեանս:„

“Հրամանաւ սուրբ Աթոռոյդ միշտ լեալ է աստ քահանայ մի առ ի կատարել զԱստուածային պաշտօնն մինչեւ ի վախճան Երեւանցի տէր Յովհաննէսին, որոյ զկնի դոյն ինչ անցեալ հրամանաւ լուսահոգի Աղէքսանդր կաթուղիկոսին եկն աստ Յովակիմ վարդապետն, եւ մնացեալ աւելի քան զամ մի՝ գնաց աստի ի մեծն Հռոմ, ուր տակաւին դեգերեալ յամէ: Եւ մեք սոյնգունակ տոմսիւ խնդրեցաք մեզ քահանայ մի ի լուսահոգի կաթուղիկոսէն, բայց չեւ եւս մեր տոմսին հասեալ՝ եհաս նմա օրն աներեկ:„

“Թէպէտ Յովակիմ վարդապետն եթող աստ զիւրն նորահասակ միայնակեացն, տէր Եղիսէ անուամբ, որդի Փիլիպպոսի ի Նորք գեղջէն, բայց սա կամկար յօժարութեամբն ոչ կամի մնալ աստ, գոլով ինքն հասակաւ մատաղ եւ կրօնակենցաղ, իսկ քաղաքս այս հոլանի եւ շպարադէմ:„

“Ուստի միաբերան հաւանութեամբ խընդրեմք ի բարձրագահէդ հոգալ մեզ եւ անընդհատ փութով առաքել այսր քահանայ մի՝

հասակաւ առոյգ եւ գիտութեամբ կատարեալ, ոչ կանամբի՝ կին ունող, այլ իցէ ըստ սահմանելոյն պօղոսի 1. Տիմ. 3, 2 — իցէ աղ որով անհամն յաղելի, իցէ լոյս՝ որ լուսաւորեսցէ զամենայն մարդ. իցէ եւս կարող ողջամիտ վարդապետութեամբ ի դիպուկ ժամու քարոզել եւ պատասխանել հարցմանցն զոր աստ առնեն միշտ այլազգեայց բանասէրքն: Չիցէ քահանայինն տնակալուց այլ այրի կամ կուսակրօն վանական, որ մինչեւ ի վախճան կենացն աստ ճնայցէ: Ունիցի ի վեհէդ հրաման օծանելոյ զայս մեր նորակերտ եկեղեցին. շնորհեսցես նմա զերկու թուղթս՝ որոց միւնն իցէ յանձնառական վասն քահանային, միւսն՝ պատուէր առ աստ եղեալ հայկազուն ժողովուրդն, զի թէ քահանայն բանիւ իւր կամ գործով վնասիցի, կամ խոչնդակ իցէ ընդդէմ մեր եկեղեցական սահմանացն եւ կարգացն, սոքա կարող իցեն խրատել զնա ըստ յանցանացն, որովհետեւ ոչ է մարթ յաղօթ ժամանակի փոյթ ընդ փոյթ ծանուցանել տուրբ Աթոռոյդ՝ զամենայն իրազեկութիւնս, գոլով այս վայր մեծաւ միջոցաւ հեռացեալ այտի:„

„Եւ մեք աստ եղեալքս խոստանամք հաստատել անշարժ գանձանակ անուամբ տուրբ Աթոռոյդ. ուստի լսմայասարաս պտուղ ինչ մատուսցի տուրբ տեղւոյդ, զի աստ մերազնեայ բնակ գրեթէ եւ ոչ մի. իսկ եկեւեղթ վաճառականք եւս սակաւաթիւ. այսինքն տասնաթիւ կամ երեսնաթիւ, այս եւս երբեմնական:„

"Այս խնդիր հարցման մերոյ ի բարձրագահ վեհանձնութենէդ, որում միշտ եւ յաւենայն ուրեք մնամք հարազատ եւ ենթադրեալ հնազանդ որդիք:"

"Եղեւ յԱմստերօդամ յամի Տեառն 1715 եւ ի թուին Հայոց 1164 Սեպտեմբերի 20:"

"Հաւանութեամբ ստորանիշ վաճառականացն յօրինեցաւ այս տոմսիկս բանահիւսութեամբս եւ տպիւք Ղուկասու դպրի Վանանդեցւոյ[1]:"

---

1 Արշալոյս Արարատեան, Զմիւռնիա, 3 Յունիս 1861: Այս խնդրագրի պատճէնը՝ Նոր-Ջուղայի Ամենափրկչի վանքի ատենադպիր Յարութիւն Տէր Յովհաննեան ուղարկել է "Արշալոյսին" 10 Յունուար 1861 թուակիր նամակով, իր կողմից էլ հետեւեալ տեղեկութիւններն աւելացնելով.

"Յամի 1855 ի լինելն իմ խուզարկու հնութեանց, ի թղթոց որք յաննշան անկիւնս մառանաց սրբոյ Ամենափրկչեան վանաց՝ թափեալ կային ի փոշի, գտի զթերթ մի մագաղաթեայ գրեալ ի վաճառականաց Հայոց եղելոց յԱմստերդամ քաղաքի՝ յանուն Աստուածատրոյ կաթողիկոսի սրբոյ Էջմիածնի: Ի սմին մագաղաթեայ թերթին ոչ գտանիւր ստորագրութիւն խնդրարկու վաճառականացն: Թուի ինձ թէ խնդրարկու վաճառականքն զայլ մագաղաթեայ թերթ նոյն խնդրագրոյ իւրեանց առաքեալ իցեն ի սուրբ Աթոռն Էջմիածնի եւ զայն թերթ առանց ստորագրութեան իւրեանց, ականաւոր վաճառականքն Հայոց որք յԱմստերդամ, գոլով ի Նոր-Ջուղայոյ, առաքեալ իցեն առ Առաջնորդն իւրեանց որ ի Ջուղա, իբրեւ տեղեկութիւն հաղորդելով նմա զայն գործ: Ի վաղուց հետէ եւ ցայսօր ժամանակի իսկ պահի սովորութիւն ի մէջ գերամեծար Հնդկահայոց, զի մինչ սակս ազգային ինչ իրողութեանց հասարակապէս առնէին կամ առնեն թղթակցութիւն ինչ ընդ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, զգաղափար այնր առաքէին ի վանքն Ամենափրկչի ընդ որոյ իրաւասութեամբն գտանին ինքեանք, ի տեղեկութիւն Առաջնորդի այնր վանաց:"

Նորակառոյց եկեղեցին օծուեց յանուն Հոգւոյն Սրբոյ:

Եկեղեցին իր յատուկ եկամուտը չունէր. նրա բոլոր պէտքերը հոգացվում էին գաղութի կամաւոր նուէրներովը: Գաղութն ի նկատի ունենալով այս անկայուն վիճակը, 1731 ին որոշում է կայացնում, որ ամէն մի հայ, որ Ամստերդամում առեւտրով է պարապվում եւ եկեղեցի է յաճախում, պարտաւոր է տարեկան հաստատուն տուրք տալ յօգուտ եկեղեցւոյ. նոյնը պարտաւոր էին անել նաեւ հայ ճանապարհորդները: Այս որոշումը քիչ ժամանակ յետոյ դարձեալ կրկնուեց, այն յաւելումով, որ որովհետեւ եկեղեցու ծախքն աւելի է քան մուտքը, ուստի համայնքի անդամները պէտք է գոցէին ամբողջ բացը, "որպէս զի եկեղեցին, ինչպէս աստուած է այդ ոյժման մէջ, որ բովանդակ հայ գաղութի վսեմաշուքութիւնն է, կարենայ իր գոյութիւնը պահպանել": Երբ 1733 ին Ամաեցի տէր Յովհաննէս վարդապետն եկաւ Ամստերդամ իբրեւ հովիւ, նա մեծ ուշադրութիւն դարձրեց

"Ջայն Թերթ մագաղաթի՝ ամենապատիւ տէր Թադէոս արքեպիսկոպոս արդի Առաջնորդ Նոր-Ջուղայու, 20 Մայիսի 1855 ամի 302 թիւ գրութեամբ իւրով, առաքեաց առ վեհափառ տէր Ներսէս Հոգեշոյս կաթողիկոսն եւ եղեւ խնդրարկու՝ զի զՀայրապետական ուշադրութիւն իւր բարեհաճեսցի դարձուցանել առ այն ազգային եկեղեցին, որ յԱմստերդամ, պահանջելով ղդոյս նորին՝ յօգուտ ազգային ինչ գործոյ:"

Նոր-Ջուղայի Առաջնորդի այս թելադրութիւնն առանց հետեւանքի չմնաց: Էջմիածին զբաղուեց այս եկեղեցու հարցով, որ իր լուծումը գտաւ 1874 ին:

եկեղեցու արտաքին եւ ներքին վիճակին: Նրա օրով եկեղեցին վերանորոգուեց եւ վերածուեց իր այժմեան դիրքին: Բայց այս նորոգութիւնը մարդկային կեանք է արժել: Երբ 1749 Օգոստոս 13ին եկեղեցու ճակատը յարդարում եւ արձագրութիւնն էին քանդակում, յանկարծ աւժամանակեայ փայտեայ մի մեծ սանդուխ կոտրվում, փլչում է, եւ նրա վրայ աշխատող բանուորներն վար են ընկնում: Նրանցից մէկն այնպէս գէշ է ընկնում, որ մէջքից աւրուղջապէս խրվում է սուր գերանի ծայրին եւ տեղնուտեղը մեռնում:

Այս նորոգութիւնը կատարուել է երկու բարերարի հայթայթած միջոցներով: Դրսի ճակատը, արտաքին մեծ դուռը նորոգել եւ վրայի արձանագրութիւնը շինել է տուել նոյն ինքը, եկեղեցու քահանան, Յովհաննէս վարդապետան, իսկ ներքին մասի ընդարձակումը՝ հարուստ հայ վաճառական Առաքել տէր Առաքելենց, որի մասին նոյնպէս յատուկ արձանագրութիւն է դրուել: Այս երկու արձանագրութիւններն էլ մնում են մինչեւ հիմայ իրենց տեղն, անաղարտ

Ըստ այսմ՝ դրսի դրան վրայ քանդակուած է մարմարեայ քարից՝ Գառն Աստուծոյ խաչանիշ դրօշակակիր, որի մի կողմը փորագրուած է anno, միւս կողմը 1714, եկեղեցու կառուցման թուականը: Անմիջապէս տակը երեք տող հայերէն արձանագրութիւն է փորագրուած, որա տակն էլ խաչ: Արձանագրութիւնն ասում է. "վերստին նորոգեցաւ ի թուին հայոց ՌՃՂԸ,



հանդերձ աստիճանօք, վերին եւ ներքին երիւք լուսամտօք, ծախիւք ի սոյն Սուրբ Հոգի եկեղեցւոյ սպասաւորի Մինասի որդի Յովհաննէսի վարդապետի Ամասացւոյ. ի վեշտասաներորոդում ամի սպասաւորութեան իւրոյ: Ցիշատակ իւրն եւ ղիւր ննջեցեալ ծնողացն„: Շէնքի դռնից ներս մտնելուց յետոյ աջ կողմը գտնվում է բուն եկեղեցին, որի դրան վրայ էլ կայ նոյնպէս բարձրաքանդակ գառն Աստուծոյ եւ հետեւեալ արձանագրութիւնը. "վերանորոգեցաւ դուռս ի թուոյ Փրկչին 1749 հանդերձ լայնացուցմամբ եւ բարձրացուցմամբ գաւթին եւ մարմարոնեայ սալակապիւ ընդ որմոյն եւ գեղեցկապէս ծաղկմամբ առաստաղին: Արդեամբ ջուղայեցւոյ Տէր Առաքելենց Պօղոսի որդի պարոն Առաքելին, յիշատակ իւրն եւ ղիւր հանդուցեալ ծընող զՀօրն Պօղոսին եւ կենդանի մօրն Վալիդային„:

Ժամանակակից պատմագիր Jan Wagenaar եւ նրանից քաղելով բոլոր միւս Հոլանդացի հեղինակները փոքր ինչ ազատօրէն են թարգմանում արտաքին դրան վրայի արձանագրութիւնը: Ըստ Հոլանդերէնի այնտեղ գրուած է. "Ես Յովհաննէս քահանայ, որդի Մինասի, ծնուած՝ Ամասիա քաղաքում, որ սպասաւորած եմ Հոգին Սուրբին նուիրուած այս եկեղեցում 15 տարի, իմ սեփական ծախքով այս դրսի դուռը կանգնեցի, նրա վրայի մարմարեայ գառը շինել տուի, աւելացրի քարէ աստիճանները եւ երեք վերեւ, երեք էլ ներքեւ պատուհաններ

բանալ տուի ի յիշատակ իմ եւ իմ հանգուցեալ հօրս եւ մօրս, հայոց 1198ին որ է 1749„։
Ա յս թարգմանութիւնն իսկապէս աւելի ճիշտ է պատմում կատարուած աշխատանքը։ Իսկ ներքին գրան վերայի արձանագրութիւնը հոլանդական պատմութեան մէջ հարազատօրէն է թարգմանուած։

ԺԸ. դարի կէսից յետոյ հայ գաղութի թիւն սկսել էր նուազել. եկեղեցին կորցնում էր հետզհետէ իր ծխականներին։ Առաքել ՏԷր Առաքելենց՝ եկեղեցու բարերարը՝ վախճանուել է 1774ին. նրա մահը մեծ կորուստ էր եկեղեցու նիւթական միջոցների տեսակէտից։ Պարսկաստանից եւ Թուրքիայից կամ եւրոպական ուրիշ նաւահանգիստներից նոր վաճառականներ այլ եւս չէին գալիս. բայց համայնքը դեռ պահպանում էր իր գոյութիւնը, որովհետեւ այն հայերն, որոնք ամուսնացել էին հոլանդացի աղջիկների հետ եւ սրանց զաւակները, չնայելով իրենց հոլանդական դաստիարակութեան, դեռեւս հաւատարիմ էին մնում հայրենի եկեղեցուն։ Երբ համայնքը 1774ին լսերել տուեց տէր Դանիել քահանան, սա շատ դժգոհ մնաց իրերի վիճակից։ Վերջապէս 1806ին այս քահանան՝ ծուխի պակասութեան եւ ապրուստի միջոցներից զուրկ լինելու պատճառով փակեց եկեղեցին եւ թողեց հեռացաւ. այդ թուականից յետոյ Ամստերդամի հայ եկեղեցում հայկական լեզուն ու արարողութիւնը վերջ գտան բոլորովին։

գաղութի վերջին անդամը մեռել է 1835ին։ Այս հայն էր Ստեփան Գաբրիելեան (Stephan di Gabriel) որ ծնած էր Ջմիւռնիայում եւ իր կեանքի վերջին տարիներին ապրում էր եկեղեցու շինութեան մէջ, ուր դադարել էր, ինչպէս ասինք ամէն կարգ։ Սա իր սեփականութիւնն էր համարում թէ՛ եկեղեցին եւ թէ՛ նրա ամբողջ գոյքը, այն հիման վրայ թէ դրանք պատկանում էին հայ գաղութին եւ ինք իբրեւ վերջին անդամը միակ ժառանգն էր հանդիսանում։ Մեռնելու ժամանակ էլ կտակ է թողել թէ ոչ ոք, ոչ Ջմիւռնիոյ Առաջնորդը ոչ էլ հայոց կաթողիկոսն իրաւունք չունէին խառնուելու եւ թէ իր այրին Christine Birmer՝ իրաւունք ունէր միշտ եկեղեցու շէնքում բնակուելու եւ դրա եկամտովը, ապրելու, որ տարեկան մօտ 200 ֆլորին էր։ Երբ այս լուրը հասաւ Ջմիւռնիա, Առաջնորդը բողոքեց այդ տարօրինակ կտակի դէմ, թէ որեւէ անհատ, թէեւ գաղութի վերջին անդամը, իրաւունք չունէր սեփականացնելու եկեղեցին եւ նրա ինչքն եւ թէ Ամստերդամի եկեղեցին Ջմիւռնիայի վիճակը լինելով նրա Առաջնորդի օրինական իրաւասութեան տակն էր գտնվում։ Այս ճիշդ էր, որովհետեւ վերջին ժամանակ Ջմիւռնիայի Առաջնորդարանն էր հոգում նրա հոգեւոր պէտքերն եւ քահանայ ուղարկում Ամստերդամ։ Այս հիման վրայ էլ Առաջնորդի փոխանորդը՝ Հոլանդացի փաստաբան Engelberds, դատ սկսելով տիրացաւ եկեղեցուն եւ կառավարեց նրա գոյքը մինչեւ 1839։

Այդ տարին երեւան եկաւ մի նոր "վերջին անդամ եւ ժառանգ" Anna di Kirakos Eganoff, որ վաղուց վախճանուած Կիրակոսի աղջիկն էր եւ ամուսնացած էր Daniel van Brugge անուն նով Հոլանդացու հետ, եւ պահանջում էր, որ Հայ եկեղեցու եկամուտն իրեն յատկացուի: Հոլանդական կառավարութիւնը այս վէճը յանձնեց Ամստերդամի դատարանին: Դատարանը գործն երկարօրէն քննելուց յետոյ մերժեց թէ՛ մէկ եւ թէ՛ միւս կողմին, եւ մինչեւ ժառանգութեան հարցը վերջնականապէս պարզուիլը, խնամակալ կարգեց եկեղեցու վրայ: Առաջին խնամակալն եղաւ François Theodore Lublinek: Այն ժամանակ նոր պահանջատէր եղաւ, էջմիածնի Աթոռն, որ յանձին Ներսէս Ե. կաթողիկոսի՝ 1845ին բողոքեց դատարանի որոշման դէմ եւ իրրեւ վերին հոգեւոր տէր բոլոր Հայ եկեղեցիների գոյքի՝ պահանջեց, որ եկեղեցին իր ամբողջ ունեցածով էջմիածնին յանձնուի: Դատարանը ժխտական պատասխան տուաւ էջմիածնին եւ եկեղեցին մնաց Հոլանդացի խնամակալների հսկողութեան տակ: Lublinek 1851ին մեռաւ եւ դատարանը երիտասարդ փաստաբան Gerhard Herman Renverին նշանակեց նրա տեղ: Սա եւս 1856ին մեռաւ. նրան փոխարինեց Ամստերդամի փաստաբանների ազգը՝ Leeudert Hendrik Kuhn, որ "ապահովելու համար եկեղեցու արժէքաւոր իրերը, կահ կարասիքը, խորանի զարդերը եւ գրքերը տարել է իր տունը, այնտեղ թողնելով միայն

հին պահարանը, հին ծնծղան, աշտանակներն եւ մի քանի եկեղեցական գրքեր: Այս խնամակալները հայ եկեղեցին վարձու էին տուել Հինլութերական կոչուած բողոքականներին իբր ժողովարան, որոնց Pogge անունով հովիւն եղաւ վերջին վարձակալը, որովհետեւ Էջմիածին վերստին յուզեց խնդիրը եւ այս անգամ յաղթանակը տարաւ, Ռուսական կառավարութեան ազդու միջամտութեան շնորհիւ: Գէորգ Դ. կաթողիկոսը 1870ին փոխանորդագիր ուղարկեց հոլլանդացի J. Wertheim Yr (կրտսեր) փաստաբանին, որ գործը տարաւ դատարան: Դատարանը՝ հայոց կաթողիկոսի իշխանութիւնն եւ իրաւունքը կասկածելի համարելով դարձեալ յանձն չառաւ գոհացում տալ նրա պահանջին: Այն ժամանակ կաթողիկոսը դիմեց Պետերբուրգ եւ կառավարութեան միջամտութիւնը խնդրեց: Հաագի ռուսական դեսպանը իր մինիստրից ստացած հրահանգի համաձայն 1873 Օգոստոս 3/15 թուականով պաշտօնական յայտագիր ներկայացրեց հոլլանդական կառավարութեան, որով վկայում ու հաստատում էր կաթողիկոսի իրաւական պահանջը: Դատարանն այս պաշտօնական վաւերագրի հիման վրայ օրինաւոր ճանաչեց կաթողիկոսի իրաւասութիւնն եւ հրամայեց խնամակալ Kuhnին, որ եկեղեցին, նրա բոլոր ունեցածն եւ առհասարակ ինչ որ նախկին հայ գաղութից մնացել է անտէր, ամբողջը յանձնէ կաթողիկոսի հաւատարմատարին, որ իսկոյն կատարուեց:

Այնուհետեւ Wertheim՝ իջմիածնից առած պատուէրի համաձայն եկեղեցին աճուրդի հանեց: Վաճառման գործողութիւնը յանձնուեց նոտար Clausing-ին, որ եկեղեցու շէնքը աճուրդով ծախեց 1874 Մարտ 9-ին եւ կազմեց պատշաճաւոր արձանագրութիւն այդ մասին, որ հետեւեալն է: Բերում ենք միայն կարեւոր կէտերը, բաց թողնելով ձեւականութեան վերաբերեալ մասերը.

"Սոյն 9 Մարտի 1874, երկուշաբթի, երեկոյեան ժամի 6-ին, ես, նոտար Justus Everhard Clausing, այս աճուրդը կազմեցի խնդրանօք եւ ի ներկայութեան՝"

"Փաստաբան Jacobus Wertheim Johanneszohn-ի, որ իր ներկայացրած փրանսերէն վաւերագրի մէջ Jacques Wertheim Ridder է կոչուած եւ փոխանորդ է Ն. Ս. Գէորգ Դ. Ամենայն Հայոց Ծայրագոյն պատրիարքի եւ կաթողիկոսի, ըստ փոխանորդագրի, որ տրուած է Իջմիածնում 1870 Յունվար 20-ին, արձանագրուած է Թիֆլիսում Գրիգոր Իվանով Ըչէուլոլ նոտարի մօտ եւ հաստատուած է Ամստերդամում 1873 Նոյեմբեր 6-ին: Իմ տրամադրութեան տակ է նաեւ Ն. Վ. Ռուսաստանի կայսեր Հաագի դեսպանի այս մասին գրաւոր յայտարարութիւնը՝ 3/15 Օգոստոս 1873 թուով, արձանագրուած Ամստերդամում 17 Սեպտեմբեր 1873-ին":

"Ծախվում է աճուրդով մի եկեղեցական շէնք, Ամստերդամի Kromboomsloot փողոցի

վրայ, ուր գտնվում է պարսկական կամ հայկական եկեղեցի, տակի շտեմարանով, հողաբաժին G. N. 3437, մէկ are ու 4 centiare տարածութեամբ։„

“Վերոյգրեալ անշարժ ինչքը պպ. Barbasan di Sultan եւ Nicolaas Theodorի սեպհականութիւնն է, որոնք գնել են Ամստերդամի հայ համայնքի հաշուին, ըստ վաւերագրի նոտար Schepenen 28 փետրվար 1714 թուով։„

“եկեղեցական շէնքը վարձու է տրուած մինչեւ 1874 Մայիսի վերջը վերապ. F. Schwarzին, աւետարանական համայնքի կրօնական պէտքերի համար,

որի տարեկան վարձն է	500 ֆլ.
“Եկուղ-շտեմարանը՝ տարեկան	100 „
ընդամէնը	600 ֆլ.

“պարտք չկայ։„

“Ածուրդը պիտի կատարուի հետեւեալ պայմաններով.„

“Ա. Եկեղեցական շէնքը ծախվում է իր բոլոր սեպհականութեան իրաւունքներովն եւ ինչ դրութեան մէջ, որ գտնվում է.„

“Բ. Եթէ, որ անսպասելի է, որեւէ սխալ կայ սեպհականութեան կամ վարձակալութեան թղթերի մէջ, ծախողը պատասխանատու չէ.„

Գ. (ածուրդի ձեւականութեան մասին է).

“Դ. Չեն ծախվում հետեւեալ շարժական իրերը.„

1. 14 նատարան, որոնց 2ը կակուղ կահաւորուած որոնք, ամէնը մէկտեղ գնահատուած են 60 ֆլորինի։

2. Շէնքի արտաքին դրան վրայ գտնուած այն քարն, որի վրայ հայերէն արձանագրութիւն կայ։

3. Բուն եկեղեցւոյ դրան վրայ գտնուած քարը նոյնպիսի հայերէն արձանագրութեամբ։

4. Խորանի վրայի պատկերն, որ 4 աւետարանիչներն է ներկայացնում։

"Այս՝ 2, 3 եւ 4 յօդուածներում նշանակուած իրերը՝ գնողը իրաւունք ունի, եթէ կամենայ, Յունիսի 1—14 ժամանակամիջոցում իր ծախքով հանել եւ տեղափոխել ուրիշ տեղ, բայց եթէ այս տեղափոխութեան ժամանակ որեւէ վնաս կամ կորուստ պատահի, գնողը պարտաւոր է հատուցանել վնասը կամ նորոգութեան ծախքը հոգալ։ Գնողը պատասխանատու է այս իրերի անվնաս պահպանման։"

5. Եկեղեցւոյ աւանդատան մէջ գտնուած աթոռ-ամբիոնը նոյնպէս դուրս է հնում աճուրդից։ Զեն ծախվում նմանապէս շէնքի գաղային յուսաւորութեան պարագաները։

"6. Գնողը պէտք է բաւականանայ այն թղթերով, որ գոյութիւն ունի յիշեալ շէնքի սեպհականութեան մասին եւ ուրիշ թուղթ պէտք չէ որ պահանջէ։

7—9. Յօդուածները վճարման պայմանների մասին է, այսինքն վաճառման դումարը

պէտք է յանձնուի ոչ ուշ քան մինչեւ 14 Ապրիլ 1874, նոտարին եւայլն:

"Այս պայմանների հիման վրայ ամենաբարձր գինը առաջարկեց միջնորդ պ. Coenraad Abbink, 8800 ֆլորին: Ածուրդի միջոցին միջնորդ Johannes Arnoldus Sieuwe աւելացրեց դրա վրայ 1200 ֆլ. ընդ ամէնը ուրեմն 10.000 ֆլորին, Ամենասուրբ Փրկչի անուան Բարեգործական Միութեան կողմից, յանձին նրա նախագահ Carolus Franciscus Lurasco-ի, քարտուղար Jacobus Antonius Nicolaas Travaglino-ի եւ գանձապահ Antonius Christaan Maria Koedyk-ի, որոնք բնակվում են Ամստերդամում: Բացի 10.000 ֆլորինից, Sieuwe գնեց նոյնպէս վերոյիշեալ նստարանները 60 ֆլորինի: Նա ընդունեց վճարման բոլոր պայմանները:"

Ստորագրել են՝ Jac. Wertheim Johannes-zohn (Էջմիածնի փոխանորդը), J. A. Sieuwe junior (գնողների փոխանորդը), L. Gyselman եւ J. C. Stevens (վկաներ), J. C. Clausing, նոտար:

"Ստացուած է տուրք՝ 10.270 ֆլ. գումարից 4% եւ վարձատրութիւն 156.10 ընդ-ամէնը 567 ֆլորին:"

"Արձանագրուած է նոտարական գրասենեակի N. 150 բաժնում, մատեան 50, էջ 84, յօդ. 121. ընդ ամէնը բաղկացած է 5 թերթից:"

Նոր տէրը՝ "Ամենասուրբ Փրկչի բարեգործական Միութիւնը" որոշեց եկեղեցին եւ նրա

յարակից շէնքը յատկացնել միայն կրօնական-բարեգործական նպատակի եւ ըստ այնմ էլ յանձնեց իր հսկողութեան տակ գտնուած կրօնաւորական կարգին: Այս կարգի Հոլլանդացի մայրապետները՝ հայ եկեղեցու շէնքը վերածեցին աղջկանց դպրոցի եւ արտաքին մեծ դրան հայերէն արձանագրութեան վրայ հետեւեալն աւելացրին հոլլանդերէն լեզուով:

St. Antonius School L. O. R. K. volkschool voor Meisjes Fröbel en bewaarschool

այն է՝ "Ս. Անտոնի դպրոց. Հռոմէական կաթոլիկ աղջկանց ժողովրդական դպրոց, ֆրէօբէլեան եւ մանկական դպրոց":

Այս արձանագրութիւնը դրուած է հայկական գաւն Աստուածոյից վերեւ: Նախկին հայ եկեղեցին դեռեւս հիմայ էլ դպրոց է: Առիթ ենք ունեցել շատ անգամ այցելելու այնտեղ: Հոլլանդացի մայրապետները մեծ սիրով ընդունում եւ ցոյց են տալիս շէնքի բոլոր մասերը, մանաւանդ երբ իմանում են թէ այցելուն հայ է: Շէնքի անցեալը նրանց յայտնի է եւ նրանք հաւատարիմ պահապաններ են մնում հայկական արձանագրութիւններին: Շէնքը երեք յարկանի է, որի վարի յարկը յատկացուած էր եկեղեցուն, իսկ միւս մասերը քահանայի եւ օտարական հայերի ժամանակաւոր բնակարան է եղել: Այժմ այն մասն, ուր յառաջ եկեղեցի էր, ընդարձակ դասարանի է վերածուած: Դուռն, որի վրայ տէր Առաքելենց Առաքելի նորոգու-

Թեան արձանագրութիւնը կայ, պահպանուած է, բայց այդտեղի մուտքը խափանուած է եւ նրբանցքի կողմից ուրիշ դուռ է բացուած: Շէնքի միւս յարկերը դպրոցական այլեւայլ բաժիններ՝ են եւ մայրապետական խուցեր: Ընթերցողները կը գտնեն գրքիս վերջը մի հին պատկեր, որ վերցրել ենք Ամստերդամի հին քաղաքային ատլասից (Atlas)[1]: Այս նկարը ցոյց է տալիս հայ եկեղեցին 1780 ին, ուր երեւում են հայերը, երկար ասիական զգեստ հագած եւ բարձր գտակներ դրած, եկեղեցու առջեւ կանգնած:

Եւ այսպէս ըստ երեւոյթին Ամստերդամի հայ եկեղեցու հարցը պէտք էր փակուած նկատել. ժողովուրդը ցրուած էր, նրա վերջին յիշատակը՝ եկեղեցին, օտարին ծախուած. ուրեմն Ամստերդամի հայ գաղութի մասին որեւէ նոր լուրիր չէր կարող ծագիլ: Բայց նրան վիճակուած էր դարձեալ լուրջ վէճի առարկայ դառնալ: Վէճն սկսողն այս անգամ Թուրք կառավարութիւնն էր իբրեւ պաշտպան իր հպատակ նոր հայ պահանջատէրների:

Ամստերդամի Թրքական հիւպատոսն, որ P. A. van der Aa անունով մի հոլլանդացի էր 1885 Յունիսին մի նամակ է ստանում կ Պոլսից Թադէոս եւ Նշան Մասէհեան եղբայրներից, որոնք տեղեկութիւն են խնդրում իրենց մօտիկ ազգական Ալէքսան Մասէհեանի մասին, որ մե-

---

1 Nieuw Atlas der Stad Amsterdam, met platen van P. Fouquet. N. 1783.

ռել էր Ամստերդամում 1803ին եւ թաղուել էր Oude Kerk գեղի գերեզմաննոցում: Բնական է թէ ինչո՞ւ համար էին նրանք հետաքրքրուել, 80 տարի յառաջ մեռած մի մարդու մասին: Նրանք իմացել են թէ այդ ազգականը կամ գոնէ անուանակիցը մեծ հարստութիւն է թողած եղել, որ գեռ եւս անխախտ պահուած է եւ ուզում էին տիրանալ այս մեծ ժառանգութեան: Հիւպատոսը հարեւանցի մի քննութիւն է կատարում եւ չէ գտնում ոչ հին ժառանգութիւն եւ ոչ էլ գերեզման Oude Kerkում եւ խուսափողական պատասխան է տալիս խնդրատուներին: Վասէհեան եղբայրները չգոհանալով այս պատասխանից, միջոց են գտնում Օսմանեան կառավարութեան պաշտօնական միջամտութիւնը հրաւիրելու, որ հրամայում է հիւպատոսին քննել Ամստերդամի հայ եկեղեցու եւ գաղութի խնդիրն եւ տեղեկագրել մանաւանդ թէ "ի՞նչ հիման վրայ հոլանդական դատարանը վճիռ է կայացրել հայ եկեղեցին եւ իր ինչքը յանձնել ռուսական դեսպանատան": Այս հրամանի վրայ հիւպատոսը պաշտօնապէս դիմում է Ամստերդամի քաղաքային Դիւանի պետ De Roeverին, իբրեւ ամէնից աւելի ձեռնհաս անձնաւորութեան եւ խնդրում է, որ նա ուսումնասիրէ Ամստերդամի անցեալ հայկական գաղութի պատմութիւնն եւ ժառանգութեան խնդիրը: De Roever շատ բարեխիղճ կերպով կատարում է այդ յանձնարարութիւնն եւ ֆրանսերէն լեզուով մի ընդարձակ տեղեկագիր է յօրինում,

որն եւ 1886 Յուլիսին տալիս է Հիւպատոսին: Այս յանձնարարութիւնն այն իրական օգուտն ունեցաւ, որ ուսումնական Հոլանդացին յետոյ աւելի ընդարձակելով, այդ տեղեկագիրը դրաւ իր նշանաւոր "Հին Ամստերդամի պատմութեան" մէջ իբրեւ առանձին բաժին "Հայ գաղութը" վերնագրով, որն եւ մենք շատ անգամ առիթ ունեցանք յիշելու:

Օամ. Արտաքին գործերի մինիստր Սայիդ փաշայի այդ առթիւ Հաագի Թրքական դեսպան իշխ. կարաջային ուղղած Հեռագրում ասուած է թէ Ամստերդամցի Ալեքսան եւ Միքայէլ Մաւէհեան եղբայրները "avaient laissé une fortune liquide de 2,200.000 florins, une église, des maisons, des boutiques et d'autres immeubles . . .": Ինչպէս տեսնում ենք ահագին Հարստութիւն. կանխիկ փող երկու միլիոն երկուհարիւր հազար ֆլորին, մի եկեղեցի, որ նրանց սեփականութիւնն է եղել, բացի դրանից տներ, խանութներ եւ այլ անշարժ կալուածքներ: կարաջա իշխանի խնդրանքով De Roever առանձնապէս զբաղւում է նաեւ այս ժառանգութեան Հարցով եւ մի նոր տեղեկագիր էլ այդ մասին է կազմում: Հարկաւոր ենք Համարում գրեթէ ամբողջապէս թարգմանել այդ վերջին տեղեկագիրն, որ ձեռագիր է մնում եւ որի մէջ այս գործը լուսին պարզուած է, ի նկատի ունենալով որ այդ Հարցն իր ժամանակին մեծապէս զբաղեցրել է կ. Պոլսի Հայ շրջաններն, որոնք մեծ ակնկալութիւն են ունեցել դրանից:

"Կ. Պոլսեցի Թադէոս եւ Նշան Մասէհեան եղբայրները պնդում են թէ 1. իրենց ազգական Ալեքսան, Միքայէլ, Գրիգոր եւ Մարիամ Մասէհեան կամ di Masseները անբաւ հարստութիւն են թողել Ամստերդամում, որին այժմ ուզում են տիրանալ իբրեւ ժառանգներ. 2. այդ ժառանգութիւնը բաղկանում է ոչ միայն այն հարստութիւնից, որ մնացել է Ալեքսանի մահից յետոյ, այլ նաեւ այն մեծ կարողութիւնից որ թողել է նրա եղբայր Պետրոսը, որ հնդկաստան է գնացել եւ այնտեղ վախճանուել անժառանգ եւ որի կարողութեան վերաբերեալ բոլոր թղթերն ու վաւերագիրները իբր թէ գտնվում էին Ալեքսանի մօտ ի պահեստ: 3. թէ Մասէհեաններին թողած ժառանգութեան մէջ կան մի եկեղեցի, մի փուռ, մի քանի տներ եւ ուրիշ անշարժ կալուածք, որոնց եկամուտը հասնում էր տարեկան 39.000 ֆլորինի. այս անշարժ կալուածքն էլ կառավարում ու եկամուտը գանձում է ոմն M. Kun. 4. վերջին Մասէհեանը մեռել է Ամստերդամում, ուր նա կենդանի է եղել մեռ 1814ին: — Ես պիտի ապացուցանեմ, որ պպ թ. եւ ն. Մասէհեանները երեք բան շփոթում են իրար հետ. 1. բուն Ալեքսան Մասէհեանի (di Masse) ժառանգութիւնը. Ալեքսան մեռել է 1803ին եւ թաղուել ընտանեկան գամբարանում Oude Kerk կոչի գերեզմանոցում, թողնելով 2 զաւակ. 2. Այն Ալեքսանն, որ նրանց ասելով 1814ին ապրում էր դեռ Ամստերդամում, հաւանականաբար առա-

*ջինի որդին էր. եւ 3. հայ կամ պարսիկ հա-
մայնքի ժառանգութիւնը, որին պատկանում էր
այստեղի հայ կամ պարսիկ եկեղեցին։„*

*“Իմ կատարած քննութիւնից երեւում է,
որ 1803ին մեռնող Ալեքսան Մասէհեանը՝ հա-
ւանականաբար Ալեքսան եւ Միքայէլ եղբայր-
ների հայրն էր։ Ալեքսան Մասէհեան հայրը
ամուսնացել էր 1783 Օգոստոս 26ին Marie
Agnes Watrinի հետ, որ Ignace Narcesի այ-
րին էր եւ վախճանուել է 1800 Յունիս 9ին
եւ թաղուել Oude Kerkի եկեղեցում, թողնե-
լով 3 զաւակ։ Նոտար Evert van Jevertի մօտ
յօրինուած կտակով, յիշեալ Marie Watrin իր
առաջին էրկանից ունեցած աղջիկ զաւակի վրայ
խնամակալ է կարգում, իսկ միւս 2 զաւակի,
Ալեքսանից ունեցածների վրայ յիշատակութիւն
չէ անում, երեւի այն պատճառով, որ սրանք
իրենց հօր հոգացողութեան տակ էին։ Ալեքսանն
էլ 1800 Օգոստոս 30ին Նոտար Toelarի մօտ
կտակ է շինել, որ շատ կարեւոր է։ Այս կտա-
կով Ալեքսան կամ է յայտնում, որ իր երկու
որդիքը, Ալեքսան եւ Միքայէլ, մինչեւ չափա-
հաս դառնալը իրենց մօրաքրոջ Anna Watrinի
քով մնան, խորթ քրոջ Marie Narcesի եւ
հօրեղբօրորդի Գրիգոր Մասէհեանի հետ միա-
սին, եթէ սրա հայրը, Եսային, որ Կ. Պոլսում
էր բնակվում, տարբեր կարգադրութիւն չանէ
իր որդու նկատմամբ . . .։„*

*“Ալեքսան Մասէհեան հայրն՝ իր ամբողջ
կարողութիւնը կտակել է իր երկու որդուց, իսկ*

եթէ սրանք անզաւակ մեռնին, այն ժամանակ ժառանգութիւնն անցնում է Եսայիի զաւակներին: Եսային ծերունի Ալեքսանի եղբայրն էր եւ ապրում էր Կ. Պոլսում: Աննա վատրինին էլ տարեկան 300 ֆլորին էր յատկացրել...:„

“Ալեքսան ծերունի իր կտակում պարզ ասում է թէ իր ամբողջ կարողութիւնը 50.000 ֆլորինից աւելի չէ:„

“Երբ Ալեքսան 1803 Մայիս 26-ին մեռաւ, անմիջապէս իր կտակակատարները նոտարական ցուցակ կազմեցին նրա թողած ինչքի: Այս ցուցակի համաձայն, որ 1803 Յուլիս 9 թուականն է կրում, Ալեքսանի թողած ժառանգութիւնը հետեւեալն էր.

1. *Շարժական ինչք . . . . ֆլ. 10.000*
2. *արծաթեղէն եւ ակնեղէն . „ 5.000*
   (ակնեղէնի թւում յիշուած է 3 ապարանջան 638 մարգարիտով, գին է նշանակուած 160 ֆլորին)
3. *դեղորայք . . . . . „ 2.000*
   (սրանից 1650 ֆլորինի խաշխաշ [Opium]).
4. *զանազան արժեթղթեր . . „ 2.000*
5. *կանխիկ փող . . . . . „ 7.000*
6. *Անշարժ կայքն էր, մի տուն Binnenkantի վրայ, մի պարտէզ քաղաքից դուրս եւ մի*

պամբարան՝ Oude Kerk-ի Ս. Նիկողայոս եկեղեցում։

Այս անշարժ կայքը չէ գնահատուած։

7. Առնելիքներ զանազան անձերի վրայ . . . . . ֆլ. 103.000
"պարտք ունէր թէ ոչ, չէ յիշուած։

"Այս կտակից յայտնի է, որ ոչ եկեղեցին եւ ոչ նրա մէջի իրեղէնները Ալեքսանի հարստութեան մասն չեն կազմում, քանի որ կտակում չեն յիշուած։ Ոչ մի խօսք չկայ նոյնպէս Հնդկաստանում գտնուող եղբօրը, Պետրոսի առաքելական ժառանգութեան մասին։"

"Ահա բոլորը . . .։"

"Կ. Պոլսի Մասէհեաններն ոչ մի իրաւունք չունին Ամստերդամի Հայ եկեղեցու վրայ, որ տեղւոյս Հայ գաղութի սեփականութիւնն է եղած։" Այստեղ վերջանում է De Roever-ի տուած տեղեկագիրը։

Այս տեղեկագրից յետոյ, որ յանձնուել է Թրքական Հիւպատոսին, 1887 Մայիսին, գործը դադարում է, գոնէ այլեւս ոչ մի գրագրութիւն չենք գտնում այս մասին։ Կ. Պոլսի Մասէհեանների պահանջը բոլորովին փակուած է համարվում։

Թ.

Հոլլանդայում գտնուած հայ յիշատակարանները։ — Ամստերդամի եւ Լէյդէնի հայերէն ձեռագիրներն եւ գրքերը։ Հաագի հայկական միտալները։ Հարլէմի եւ Ուտրէխտի հայկական կնիքն ու ձեռագիրները։

—

Այժմ մեզ մնում է պատմել թէ ինչ հայկական յիշատակարաններ են գտնվում Հոլլանդայում։ Սկսինք Ամստերդամից, իբրեւ նախկին հայ գաղութի բնակավայրից։

ԱՄՍՏԵՐԴԱՄ

Ա․ *Ձեռագիրներ։* Երկու հիմնարկութեան մէջ են հաւաքուած հայ ձեռագիրները․ Համալսարանի Մատենադարանում եւ Քաղաքային Դիւանում։

Համալսարանի Մատենադարանում կայ ընդ ամէնը 4 ձեռագիր, որոնք են.

1. *Հայերէն բառգիրք*, 178 թերթ = 356 էջ, նոտրագիր, 17×10 հարիւրերորդամետր, կաշեկազմ պատեանի մէջ ամփոփուած։ Բառգիրքը սկսում է Ա․ տառից, շարունակում է մինչեւ Փ․ եւ այնուհետեւ գրուած է Օ․ կայ աւել Յաւելուած, 9 էջ՝ Ա մինչեւ Զ։ Չկայ ոչ թուական, ոչ հեղինակի անուն, այնպէս որ յայտնի չէ թէ բնագի՞ր է թէ արտագրութիւն։

Մատենադարանի ձեռագրաց մասի կառավարիչը համոզուած եղանակով պնդում էր թէ այս ձեռագիրը Lucas Vanandetsi-ի (Ղուկաս Վանանդեցիի) ինքնուրոյն հեղինակութիւնն է, որի մասին, որեւէ ապացոյց չգտանք, բայց այս համոզումը ցոյց է տալիս թէ ինչ հեղինակութիւն է վայելում Ղուկաս իբրեւ հայ մատենագիր հոլանդական արեւելագիտութեան շրջանում:

Բերենք մի քանի օրինակ այս բառարանի բովանդակութիւնից է.

Աբանայ	հօր ահնութիւն (օրհնութիւն)
Աբբայէլ	յայ. (յաստուծոյ)
Բեղեկ	արեգակ.
Ոստուցի	վարդապետք
Ովաս	արջառ
Պտկել	կանանչել
Խոռ	ուրձ նաեւ խրամ
Խոռապետ	գաւառապետ նաեւ պարանոցաւագ
Հայկ	փոքր
Հայք	հսկայք
Փէ	անկողին . . .:

Վերջին բառն է՝

Օրինովգ	բանջար վայրի, ցտող, քձընձօղ:

Իսկ Յաւելուած ի մէջ տրվում է Չափերի բացատրութիւն, այսպէս՝

Դահեկան	մի ոսկի է, որոյ կշիռ ամենայն ազինս միեւնոյն է.
Նուկին	ղ դահեկան է
Լիտրն	ժբ նուկին է, որ լինի հը դահեկան
Սատերն	ըներորդ մասն է նուկայ եւ դահեկանն ի դ մասունս բաժանեալ . . . :

Ա յնուհետեւ խօսվում է թանգագին քարերի յատկութիւնների վրայ. "Տպազիոն կարմիր է եւ գտանի ի տոպալէ քաղաքն Հնդկաց. Շափիւզային ծիրանեգոյն է եւայլն:

2. *Ժամանակագրութիւն Սրբազանի մատենի, ի բազմաց ընտիր եւ էքնաղ հեղինակաց, մեծաւ ջանիւ եւ տաժանելի գործառութեամբ առ մի ժողովեալ ի դիւրութիւն բանասիրաց եւ հեշտագտութիւն երկասէր նկատողաց:*

Նորգիր, ժԸ: դար. 58 թերթ = 116 էջ, կաշեկազմ, ոսկեզօծ եզերքով. շատ մաքուր գրուած եւ մաքուր պահպանուած: Ինքնագրոյն գրուածք, որի հեղինակն իր աշխատութեան նպատակը բացատրում է ընդարձակ յառաջաբանի մէջ, որից յառաջ բերենք հետաքրքրական մասերը.

"Նախադրութիւն սակաւուկ առ բարեմիտ ընթերցողսդ: . . . Որ ընդ հոլովութեան ամաց եւ ընդ շարժման երկարատեւ շրջանակաց դարուցս, բանազուրկ լեալ ազգն մեր Արամազեան՝

եւ անհաղորդ իմաստիցն վտարանդ էր։ Որ եւ նահապետական զկարգ, զգործ, զդրութիւնս եւ զթիւս ամաց թէ ո՞րքան եւ կամ զիա՞րդ եղեն Արք համբաւագունեղք, որք պարաւանդին ներ Աստուածային Տառոջ, ոչ երբէք զլիակատարն տեսաք ուրեք, այլ զմասունս ինչ առագրեալս աստ եւ անդ...։ Եւ քանզի ճահաւոր իսկ էր յետ աւարտման Աստուածաշնչոյն տեղաւորել զժամանակագրութիւնս յետկոյս նորին թէ ի նախնեաց զանց արարեալ իցէ, կամ անհոգս եղեալ եւ կամ ի խակամիտ գրչացն ուծեալ եւ ոչ եդեալ, զայսոսիկ թողումք յայլոց իմաստասիրել։ Բայց զինչ եւ իցէ ոչ ուրեք աւարտման Աստուածաշունչ գրոց գտանին, գուցէ եղեալ իցէ, սակայն մինչեւ ցայժմ ի պատրաստի ուրեք ոչ եմք տեսեալ եւ այն համարիմք թէ եղեալ չէր...։ (Այստեղ երկարօրէն պատմում է իր ձեռնարկութեան դժուարութիւնները։) Քանզի իմա դու ինձ, ո՛վ Նազելի Բանասէրդ, զի սա այնպէս գործ իմն է, զի որքան ջանամք յուժգնակի դափրմամբ զառ ի բարձրադիտակ լեառն Պառնասոսի չու արարեալ ի վեր կոյս ելանել, այնքան առաւել պարտիմք ի հոգս ունակել, զի մի գուցէ զոտն մեր հարեալ ընդ քառաժայռս կամ սաընացեալ վիմացն ի վերուստ ի վայր գահավիժեալ ընդ երկրաւ տապալիցիմք...։ Որպէս գտաք ոմանց, որ նախ քան զմեզ յօրինեցին զայսպիսիս, այսինքն զգիրք իմն արարեալ ի Պետրոսէ Պողտանացւոյ արքեպիսկոպոսէ Սկոպիացւոյ. եւ է այնքան թիւր եւ սակաւ նշանա-

գրութեանց մինչ զի հազիւ ի հարիւրից զմինն կարէա, գտանել. վասն որոյ եւ զայն ընդ յետոյս արկեալ՝ ոչինչ հետամուտ եղայ ի նա: Եւ ապա գտաք յետոյս գրքոյն մեկնութեանցն Յակոբու Առաքելոյն, թարգմանեալ յԱթանաս վարդապետէ Կ.Պոլսեցւոյ: Իսկ եւ Նորին ոչ ուղղակի եղեալ տեսանիւր զհամարաթիւս, այլ ուրեք ուրեք աւելորդ կամ պակասորդ (եւ կամ գուցէ ի ձեռն տպագրութեան է սպրդեալ): Այլ եւ ի Ներ Հայելի Աստուածաշնչոյն տեսաք շարագրեալ ի Ղուկասու իմաստնապատուն եւ լեզուագէտ Փիլիսոփայէ, զոր տեսցես ի 701 (?) թղթահամարոյն. բայց նա ոչ աւելի այլ մինչեւ յերկրորդ դարն միայն ունէր ...: Արդ որով յայտ յանդիման կացուցաք թէ ոչ գոյին մեզ գիրք Հայկական՝ առ որս ապաւինեալ ի ձեռն ունիցէաք ստուգապէս զթիւս եւ զկարգս ժամանակաց ըստ սահմանին, այլ հեթեթս եւ զոմանս վարկպարազին ...: Բայց զհեղաբարոյ եւ զգիտունակ հոգեւոր ծնողն իմ զՅովհաննէս վարդապետն՝ անընդմիջաբար յորդորէր առ սոյն գործ ի կատար հասուցանել: Որում զստորնագարշն մեզք՝ լոկ անուամբ Աշակերտ Նորին կոչեցելոյ ...: Ըստ Թօմայի Քէմբացւոյ Յոյժ մեծ է կալն ի հնազանդութեան, ապրիլն ի Ներքոյ հրամանաց Առաջնորդին եւ ոչ գոլն ըստ հաճոյից իւրոց ..., վասն որոյ ... մոռացեալ զտկարութիւնս իմ ... ի տեսութիւն ածել ջանացայ զդիւրագիւտ ժամանակագրութիւնս այս: Հետեւելով ըստ բուն Հեբրայեցւոց թարգմանու-

թեան եւ ոչ իսկ վարկպարազաբար: Այլ եւ զՍամարացւոցն եւ զՀելլենացւոցն, զԼատինացւոցն եւ զՀոլլանդացւոցն ...:„

(Ստորագրուած է) ծառայ անպիտան

Սիմոն կարապետեան:

Այս Յառաջաբանից յետոյ սկսում է բուն “Ժամանակագրութիւնը„ որ 20 Գլուխի է բաժնուած. օրինակ՝ “Թիւ աշխարհի սկսանի ընդ ադամայ եւ տեւէ մինչեւ ջրհեղեղն եւ ունի ամս 1656 ամիսս մին եւ յաւուրս 26„, “Վարք եւ պաշտօնք սրբոց՝ առաքելոցն„, “Ծրագ լուսատու ի խաւարչտին տեղւոջ՝ մինչ տիւն լուսաւորեսցի եւ արուսեակն ծագեսցի ի սիրտս ձեր„, “Բաժանումն բովանդակ ածաշունչ գրոցն„, կերպ եւ տեսակ աստուածաշունչ գրոց Թարգմանութեանն, եւայլն:

Այս Սիմոն կարապետեանը՝ Ամստերդամի հայ գաղութից էր, Ղուկաս Վանանդեցու գործերին լաւ տեղեակ եւ աշակերտ ուսումնական Ըմասեացի Յովհաննէս վարդապետին, որի յորդորանք, ոմն էլ գրել է իր գործն, բայց տպարանի փակուելովը մնացել է անտիպ, եկեղեցու գրատան մէջ, որտեղից ուրիշ հայերէն գրքերի հետ բերել զետեղել են այս Մատենադարանում:

3. Համառօտ Ներկայացուցմունք Տրամաբանութեանց, ի Փրանքօնինի Պուռկերստիչի Հրապիրական մեծի փիլիսոփայի ա-

բարեալ, ի կիրառումն դպրատանց Հոլանդիացւոց, լեզուաւ լատինականաւ։

Իսկ Թարգմանութեամբ ի լոյս ածեցեալ ի Հայկական բարբառ ի Յամսդրտամայ սուրբ Հոգի Եկեղեցւոյն Հայոց անարժան Սպասաւորէ եւ Աշակերտէ Երիցս երանելւոյ Տիեզերալոյս սրբոյն կթղիկսին Ղազարու Ջահկեցւոյ, Յովհաննիսէ վարդապետէ Ամասացւոյ։

Ի Հայրապետութեան տն Աղեքսանդրու սրբոյն կթղկսին ամենից Հայոց կոստանդնուպօլսեցւոյ։

Ի Թուոյ Փրկչին 1755 Հոկտեմբերի 22, ի Հոյակապ եւ ի գերահռչակ քաղաքն յամստրտամ։

Ձեռագիրը նոտր գրով է, 20×15 հարիւրերորդամետր, կաշեկազմ եւ ոսկեզօծ կողերով, խնամքով պահպանուած։

Լատիներէն բնագիրն, որ գտնվում է նոյն Մատենադարանում կրում է հետեւեալ կոչումը Franconis Burgersdici Institutionum Logicarum ...: (տ. պ.) Amstelodam 1653.

4. Կայ եւ մի չորրորդ ձեռագիր, բոլորգիր ԺԷ դարի, որ նոր կտակարանից քաղուած թարգմանութիւն է մի էջի վրայ լատիներէն, միւս էջի վրայ նրա հայերէնը։ Անկարեւոր։

Բ. Գրքեր: Կարելի էր եւ պէտք էր սպասել, որ Ամստերդամում գտնուէր եթէ ոչ ամբողջական հաւաքածոյ, գոնէ մեծ մասն այն 50 ից աւելի հայերէն հրատարակութիւնների, որոնք լոյս են տեսել այստեղ։ Բայց Ամստերդամի հա-

մալսարանի մատենադարանն, որ անսպասելի կերպով ժառանգորդ է հանդիսացել հայ տպարանից եւ հայ եկեղեցուց մնացած գրքերի, ընդամէնը 100ի չափ հայերէն գրքեր միայն ունի, չհաշուելով բազմաթիւ աւելորդ օրինակներն, որոնք հաւատարմութեամբ պահուել են եւ պահվում են այնտեղ։ Այս գրքերից միայն 9 օրինակը Ամստերդամեան հրատարակութիւն են, այն էլ ոչ նշանաւորներից։ Սրանք են. Աղուեսագիրք (1668), Թովմա Քէմփացի (1696), Մ. Խորենացի (1695), Նոր կտակարան (1698), Շարակնոց (1702), Պաշտօն Ս. Պատարագի (1704), Հայելի Հին կտակարանի (1713), Պատկերասէր Պատկերատեաց (1716) եւ կարճառօտ Ժամագիրք (1717)։ Եղածների մեծագոյն մասն եկեղեցական պաշտամունքի վերաբերեալ գրքեր են, եկեղեցուց փոխադրուած, սրա փակուելուց յետոյ եւ գլխաւորաբար Վենետիկում ու Կ. Պոլսում տպագրուած։ Ոչ-եկեղեցական գրքերից կան Չամչեանի Հայոց պատմութիւնը (1786), Վիպասանութիւն Ամերիկայ (Թրիեստ 1784), Մխիթար Աբբայի քերականութիւնները՝ հայտաճկերէն (1727) եւ գրաբարի (1730), Ինճիճեանի Հնախօսութիւն Հայաստանին եւ մի քանի դասական հեղինակներ՝ Եղիշէ, Փաւստոս եւ Զենոբ։ Կան նաեւ նորագոյն հրատարակութիւններ, որոնց թւում Ալիշանի Սիսուանն ու Սիսականը։ Սիսուանի օրինակը կրում է նոյն ինքն Հ. Ալիշանի ձեռքով գրուած հետեւեալ նուիրաբերու-

Թիւնը "A son Excellence Monsieur W. H. Waddington, Ambassadeur à Londres, hommage respectueux de ses humbles serviteurs les frères Seraphin et P. Leonce M. Alichan„ : *Աւելորդ օրինակներ կան. Ղուկաս Վանանդեցու "պատկերասէր պատկերատեաց„ գլխից* 18 *օրինակ, բոլորովին նոր. ձաշոց գիրք (տպուած է գիրզ), Վենետիկ* 1686, *շատ խոշոր,* 3 *հատ: Շրէօդէրի "դաւանութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ, ի Լօնդինան„* 7 *օրինակ եւայլն: Կայ եւ մի օրինակ "Տարեցոյց եւ Օրացոյց Ամի տն մերոյ* 1797 *յԱժդարխան„, որ չկայ Հ. Զարբհանալեանի Հայկակ. Տպագր. Պատմութեան ընդհանուր ցուցակում: Կայ նոյնպէս եւ մի օրինակ Բենեդիկտոս ԺԴ. Պապի "Թուղթ Հանրական Ցաղագս պահպանութեան ծխից եկեղեցւոյն Ցունաց եւ այլոց արեւելեայց, տպ. Հռոմ* 1755:

Ամստերդամի *Քաղաքային Դիւանում* (archives) *մի ծրար կայ, "Հայկական ծրար„ կոչուած, որի մէջ պահվում են Հայոց վերաբերեալ զանազան գրութիւններ: Այստեղ են նախ՝* De Roever*ի՝ Օսմանեան Հիւպատոսի Համար պատրաստած տեղեկագիրների ձեռագիրները, որոնց մասին նախորդ գլխում խօսեցանք, ապա մի ձեռագիր նամակ, որը պարսկահայ վաճառականներից մէկը գրել է Նոր-Ջուղա ուղարկելու Համար, բայց ճնացել է այստեղ, կամ նրա սեւագրութիւնն է թէեւ մաքուր արտագրուած, եւ չէ ստորագրուած: — Այս նամակը*

հետաքրքրական է նրանով, որ սրա լեզուն նման է այն հանրագրութեան, որ Ջիւանիայից ուղարկուած էր Հոլանդական կառավարութեան, 1659ին (Գլ. Ա.)։ Յառաջ ենք բերում նամակի էական մասերը, տալով միանգամայն նրանում պատահած արաբերէն, պարսկերէն եւ թրքերէն բառերի մեկնութիւնն, այլապէս անկարելի է գրուածքի իմաստը հասկնալ։

"Ամսթերդամ թվին 1751 նոյեմբերի 9.

Սհպ[1] Ներսէս.

Արզուբանդակի[2] հասցէ վերոյգրեալ սհպին Ղլղին[3], որ ճմ լազումի[4] յաֆալն[5], արզամ[6] ա՛ բած ղըլում ղայիր[7] կու լինի եղած (... եւայլն) թարեղումն տեղս լսեցի որ մին ջուղայեցի ղօգալ[8] անընով մարթայ եկած տեղդ. ողորմծ հոգի գրիգորի որդի պրն յուսէփին խետն դավէ դարապա այ առում... ողջ նայհախ բանայ

---

1 Սհպ = սահաբ صاحب տէր, պարոն։

2 Այս բառը բաղկացած է عرض (արաբ. խնդիր) եւ بندگان (بنده պրսկ. ծառայ բառի յոգնակին) բառերից, նշանակում է ծառայական խնդիրք = աղերսագիր։

3 Համառօտութիւն ղուլուղ (قوللق թրք.) բառի = ծառայութիւն։

4 لازم = հարկաւոր։

5 Պէտք է լինի՝ ահվալ (احوال) = հանգամանք։

6 Զեկուցած եմ։

7 ظاهر = յայտնի։

8 Ղուկաս։

զըրայ[1] իքմին տվողն կենդանիայ վանանտիկումն, մին անվանի պ՛ին որ էտ բանին հ՛իր ինչ որ պիտոյ այ ելած յինքն էլ տեղտ գրածայ որ էտ մարդն ինչ ասումայ սուչումայ[2] ... ա՜ծ բալայ տայ չար մարդկանց, որ իւրեանց չարութենիցն ձեռ վեր առուն եւ բարիգործութիւն ըստանան ... վերջայպէսն կու խնդրիմ իմ սհպիցս որ էտոնց բաներին վերայհասու լինես որ ետ խեղճ տղին ջապր[3] ու սեֆնամ[4] առին ... դորայ ուղորմ՛ծ հոգի հէրն Բանդիտ[5] մեծ բարեկամ էր եւ Բանդիտ բազում բարերարութիւնայ ա՛րած, որ երախտիս բարեկամին չըպիտի մոռանամ ... չուն[6] էտ բաներն տեղտայ եւ գիտեմ սհպս էլ Բանդիտ աղաջանքն կ՚ընդունիս ... չուն էտ մ՛րթն դատաստանայ ընկած, սհ՛պս էլ շնհոր առես ըստ պատշաճին յուսէփին ասես եւ դիվանի բանեբին ճանայպ՛ին նշանց[7] տաս որ էնպէս խօսի ... ինչ բարերութիւն որ յուսէփին կառես էնպէս համարես որ Բանդիտ ես բարերարութիւն արարած, որ տէր ա՜ծն սհպիս արրած բարերարութ՜են փոխարէնն յերկնից արքայութիւն տացէ սհպիս եւ սհպիս որդոյն ամէն ... արզս բաց

---

1 زيرا = որոշհետեւ:

2 صوچ = յանցանք, բառից = սուում է:

3 Բռնութիւն:

4 Սեֆնամ՝ բաղկացած է սեւ եւ նամ (نام) = անուն բառերից, նշանակում է սեւանուն, սեւերես:

5 Բանդիտ — بنده = ծառայ, նշանակում է ծառայիդ, այսինքն՝ նամակագրի:

6 Որոշհետեւ, چون:

7 Ցոյց տալ:

տվի տեղս Բանդիտ բարեկամ առաքելին, որ իւր գրումն կաղարկի[1] յուսէփին յուսէփն կը բերի ղըղ...:»

Այս ծրարում կայ նաեւ մի ձեռագիր բառգիրք, փոքր դիրքով, նոտրագիր, ընդ ամէնը 31 էջ, որ օրինակութիւն է ուրիշ բառարանից եւ կրում է հետեւեալ վերնագիրը. «Բառ ի մէր ձմ բժշկական վրդպտցն պատմութի մս դեղերուն»: Ա-ից սկսած մինչեւ Ֆ բոլոր տառերով բառեր կան. պակասում է O գիրը: Առաջին բառն է՝ աշրաւզ, որ է պրուխն, որ է փայլ կտուկ որ է խունսա որ է շրէշն: Վերջին բառն է ֆիֆալ, որ է ճավզն: Այնտեղ հանդիպում ենք այսպիսի մեկնութիւնների. Անթիղա, որ է հոռոմերէն հնդուպէ եւ հայերէն քանի: Ալ-խէս, որ է շանձուկն, բոյս է. Թուրքերէն խուսլաթլ քէլը: Քաղանայտակ, որ է յոտխալէպն, որ է խաչափայտն, որ է փուփանիայն...:

Ծրարի միւս ձեռագիրներն անկարեւոր բաներ են. գաղութի որեւէ անդամի ձեռագրային զբօսանք օրինակի համար, «Այսօր անճարից» մի քանի տող, հոլանդերէն եւ հայերէն լեզուով աղերսանք Ս. Սարգսին, որի վերջին տողը բացատրում է գրողի հոգեբանութիւնն ու նպատակը՝ «... տուր քօխցեղէն (քաղցրեղէն) եւ փողեղէն (դրամ) ուտեմ եւ ես քեզ օրնելով (օրհնելով)», հանգուցեալ Ալեքսան-

1 Կ'ուղարկէ:

դըր Մասէհեանի կտակից մի օրինակ, ծննդական եւ մահուան վկայականներ եւ վերջապէս Մասէհեաններուի ժառանգական խնդրի վերաբերեալ գրագրութիւններ:

Ահա այն ամէնն, ինչ որ մնացել է ամատերդամում: Շատ աննշան մնացորդ, համեմատելով այն դիրքի հետ, որ հայ գաղութն ունեցել է այտեղ իր տպարանովն եւ գրագէտներով:

ԼԷՅԴԷՆ (Leiden կամ Leyde)

Անհամեմատ աւելի ճոխ է այս քաղաքը հայկական ձեռագիրների եւ գրքերի կողմից:

Ա. *Ձեռագիրներ:* Լէյդէնի համալսարանի մատենադարանը (Legatum Warnerianum) ունի 65 հայերէն կարեւոր ձեռագիրներ, որոնց 57 հատը պարգեւ է անգլիացի Rendel Harrisի կողմից, որ Լէյդէնի համալսարանի ուսուցչապետն էր եւ նրա պատուաւոր (honoris causa) դոկտորի տիտղոսն էր ստացել: Հէրրիս այս ձեռագիրների մեծ մասը ժողովել է անձամբ փոքր Ասիայում, երբ 1895ի մեծ կոտորածից անմիջապէս յետոյ ճանապարհորդել է եւ այցելել է աւերի ու հրդեհի ենթարկուած հայաբնակ քաղաքներն ու գեղերը: Այդ ձեռագիրներից շատերի վրայ անգլիերէն լեզուով նրա փոքրիկ տոմսակն է կցուած թէ որտեղից է ստացել այսպէս՝ A relic from the burned church at Ourfa, given me by the bishop. May 25, 1896: (Ուրֆայի այրուած եկեղեցուց մնացած, որ տուաւ

ինձ այնտեղի եպիսկոպոսը. 25 Մայիս 1896։)
եւ իրօք ոչ միայն եպիսկոպոսն, այլ եւ քահանաները եւ նոյն իսկ հայ գիւղական համայնք՝ բարւոք են համարել իրենց քով ճնացած հայերէն ձեռագիրները — մեծ մասը եկեղեցական պաշտամանն վերաբերեալ — այս հայասէր անգլիացի գիտնականին նուիրել թէ կորուստից փրկելու եւ թէ նրան իրենց երախտագիտութիւնը յայտնելու համար նրա այցելութեան առթիւ...։ Մի ուրիշ ծանօթ անգլիացի գիտնական, նշանաւոր հայագէտ Կոնիբիր (Frederic Cornwallis Conybeare), համալսարանի վարչութեան խնդրանօք, կազմել է այս ձեռագրերի համառօտ ցուցակը, որի վերջը դրած ծանօթութեան մէջ ասում է թէ այս ցուցակը նա աճապարանքով է յօրինել 1910ին, այն յոյսով թէ շուտով կը վերադառնայ Էյդէն, կը լրացնէ եւ կը պատրաստէ հրատարակութեան համար "եթէ Մատենադարանի վարչութիւնը բարւոք համարի", բայց 1914—1918ի պատերազմը արգելք է հանդիսացել իր գալուն եւ ցուցակը ճնացել է անկատար։ Միեւնոյն ժամանակ նա շնորհակալութիւն է յայտնում, որ Էյդէնի համալսարանը երկու անգամ նրան ամբիոն է առաջարկել, բայց ինք չէ ընդունած։ Բարեբախտաբար՝ կարճ ժամանակ վերջը հասնում է անհոնջ հայագէտը պրոֆ. Մակլէր եւ դրեթէ նորից կատարում է ամբողջ աշխատութիւնը, բազմաթիւ լրացուցմներով։ Ահա ինչպէս է պատմում այս՝ նոյն ինքը պ. Մակլէր. "Պ. Կո-

նիքիր, որին ես տեսայ Փարիզում 1922 ցու-
նիսին, հաճեցաւ ինձ ասել թէ ինք հրաժարուել
է Լէյդէնի հայերէն ձեռագիրները հրատարա-
կելու ծրագրից եւ շատ ուրախ կը լինէր ինքն՝
եթէ ես կազմէի այս ցուցակն եւ տպէի ոլքան
կարելի է, շուտով„: Ըստ այսմ պ. Մակլէր յո-
րինել է եւ հրատարակել իր 1924ի տեղեկա-
գրում: Ինչպէս ասինք նա մեծապէս լրացրել է
կոնիքիրի աշխատութիւնը, ոչ միայն ընդարձակ
մեկնաբանութիւնով, այլ եւ կցելով ձիշտա-
կարանների ֆրանս. թարգմանութիւնը: Կատա-
րուած աշխատանքի արժէքը բարձրացնում են
նաեւ նրա հրատարակած բազմաթիւ լուսա-
նկարները, որ նա վերցրել է ձեռագիրներից[1]:

Այս ձեռագիրները, մանաւանդ հնագոյն-
ներն եւ մագաղաթի վրայ գրուածները՝ ինչպէս
աւելի ունեցայ անձամբ տեսնելու, շատ խնամ-
քով են պահվում այնտեղ: Դրանց մէջ կան
պատկերազարդ եւ սքանչելի մանրանկարներով
եւ զարդագրերով ճոխ գրուածքներ: Ահա ձե-
ռագիրների ամիսուսիճ ըստ բովանդակութեան.

Աւետարան, ամբողջ 11 հատ, բոլորգիր
ժե.—ժէ. դար. իսկ կիսագիր, աւանձին թեր-
թեր, մագաղաթեայ եւ երկաթագիր ժ—ժԲ
դարերից:

Ատուածաշունչ, մագաղաթեայ, ժե. դար.

---

1 Rapport sur une Mission scientifique en Belgique, Hollande, Danemarque et Suède (Juillet—Septembre 1922) par M. Frederic Macler, chargé de mission du ministère de l'Instruction Publique. Paris MCMXXIV.

Շարականներ 8 հատ, ԺԴ.—ԺԷ. դարերից, զարդագրերով եւ խաղերով: Առանձին ուշադրութեան արժանի է մի *Շարակնոց* 269 թերթից բաղկացած մի մասը ձեռագիր, միւս մասը տպագիր: Ձեռագիրը ԺԴ. դարից է իսկ տպագիրն սկսում է 208 երորդ էջից, որի առաջին խօսքերն են. "Ո՞ր եթէ շրթունս բանաս բերան իմ երգեսցէ զաւրհնութիս քո...", իսկ տպագրի վերջն (էջ 269) այսպիսի յիշատակութիւն կայ. "գրեցաւ աղաւթմատուցս թվին ՌԺԷ ապրիլ ԻԵ" (1568): Այս յիշատակարանն, ինչպէս եւ տպագրի գիրքը՝ ապացուցանում են, որ Թոխաթցի Աբգար դպրի հրատարակութիւնն է եւ յարեւնման այն կիսատ օրինակին որ գտնվում է Վենետիկի Մխիթարեան Մատենադարանում, ըստ վկայութեան Հ. Զարբհանէլեանի[1]. կարեւոր է նոյնպէս, որ այս ձեռագրի կողքերը կազմուած են մագաղաթեայ Աւետարանից կտրուած թերթերով, ԺԲ. դարի եւ երկաթագիր: Այս հետաքրքրական Շարակնոցը Ուրֆայից է, ընծայ Հայ եպիսկոպոսից 25 Մայիս 1896. *Մաշթոցներ* 6 հատ ԺԵ.—ԺԸ. դար. թուղթ՝ բոլորգիր. *Սաղմոսներ*, *Քարոզագիրք*, *Գանձարան*, *Յայսմաւուրք*, եւ *Տօնացոյցներ*, որոնց մէջ կան 2 տօնացոյց, մագաղաթեայ, ԺԲ. դարից:

Իբրեւ *ինքնուրոյն գրուածք*՝ կարեւոր է հետեւեալը. "Պատմութիւն Եդեսիոյ կամ Ուր

---

1 Պատմ. Հայկ. Տպ. 1895, էջ 49:

քալաք քաղքեացւոց Հաւաքեց Աբրահամ քահանայ արեւեան եղեսացի, ի կաթողիկոսութեան ամենայն Հայոց Էջմիածնի տ. տ. Գէորգայ վեհափառ Հայրապետի... յեղեսիա 1881„։ Այս ձեռագրի վերջը դրուած է հետեւեալ ծանօթութիւնը եղեսիայում. "այս գրքին հեղինակը Արեւեան տ. Աբրահամ աշխատասէր քահանայն 1895 դեկտեմբեր 17ին եղեսիոյ մէջ Հայոց կոտրածի միջոցին խլացեալը զարկին սպանեցին այս գրքին հեղինակ աշխատասէր Արեւեան տէր Աբրահամ քահանայն„։ Ընդ ամէնը 157 էջ է 29×20 cm գիրը նուրբ շղագիր։

Այս եւ մի ուրիշ ինքնուրոյն հեղինակութիւն՝ "Համառօտ դումարուածն եւ լուծուածն բանից աստուածաշունչ գրոց՝ յումեմնէ երեմիայէ վարդապետէ մեղրեցւոյ„ ծ.ը. դար, 219 թերթ, երկաթեայ, բոլորգիր, փոքրագիր։

Բ. Գրքեր: Էյդէնի մատենադարանը հայերէն գրքերի կողմից աւելի հարուստ է քան Ամստերդամինը եւ նշանաւոր է մանաւանդ նրանով, որ ոչ միայն հայագիտութեան վերաբերեալ հին եւ նոր, հայ եւ օտար կարեւոր հրատարակութիւններ ունի, այլ եւ բովանդակում է մի քանի հազուագիւտ օրինակներ հայերէն ամենահին տպագրութիւնների:

1. Թոխաթցի Աբգար դպիրի Սաղմոսը, տպ. Վենետիկ 1565:

2. Հայ-Թաթարերէն Աղօթագիրք, տպ. Էմդէրպ 1618ին (տէր Յովհաննէս աշըրա քարմատանէէնցի):

3. Հայ-Լատին խոնարհաւոտը, տպ. Հռոմ 1642ին:

4. Ոսկանի Ատտուածաշունչը, տպ. Ամստերդամ 1666ին:

Այս օրինակը՝ Ոսկանի կողմից Էյդնի Ակադեմիայի Հոգաբարձուին է նուիրուած, որի մասին լատիներէն լեզուով տպուած նուիրաբերութիւն կայ վրան:

5. Զտութիւն Հայկաբանութեան (Puritas linguae armenicae) Ա. եւ Բ. Հատոր, տպ. Հռոմ 1674 եւ 1675:

6. Համառօտասած Աշխարհացոյց, Թոմաս եպ. Վանանդեցու, տպ. Ամստերդամ 1695.

կան նաեւ Ամստերդամեան մի քանի այլ հայերէն հրատարակութիւններ:

Հայերէն Քերականութիւնների մի ամբողջ շարք. Մխիթար Աբբայի "Քերականու-

Թիւն Գրաբառի լեզուի Հայկազեան սեռի, Վենետիկ 1730, Ջամչեանի քերականութիւնը 1779, Հ. Ալպերեանինը 1819 եւ 1832ի տպագրութիւնները, Աւետիքեանինը 1819ին, եւ Սալեանթեանինը 1829ին։

Նոյնպէս եւ օտար լեզուներով - Petermanի 1837, 1841 եւ 1872ի տպագրութիւնները. Lauerի 1883, Cirbiedի (Շահան Ջրպետ) 1833, Hübschmannի 1895, Meilletի 1903 (Վիեննա) եւայլն։

Բառգիրքներ թէ հայերէն եւ թէ հայ-եւրոպական զանազան լեզուներով, սկսելով հնագոյններից. Rivolaյի հայ-լատին, Հռոմ 1633. Villotteի լատին-հայ 1714, Բառգիրք Հայկազեան լեզուի Վենետիկ 1836—1837, Ջախջախեանի հայ-իտալերէն, Խուդաբաշեանի հայ-ռուսական եւայլն։

Հայ Դասական հեղինակութիւններից պատուաւոր տեղը գրաւում է քերթողահայրը, Մովսէս Խորենացին, որից բազմաթիւ տպագրութիւններ կան թէ հայերէն եւ թէ օտար լեզուներով, սկսած 1736ի տպագրութիւնից։ Այնուհետեւ կան՝ Վրիւն, Գաթեանգեղոս, Ասողիկ, Եղիշէ, Եզնիկ, Փաւստոս Բիւզանդացի, Ղազար Փարպեցի, եւայլն։

Նորագոյն հայ եւ օտար հեղինակների զանազան ընտիր աշխատութիւններ, ինչպէս Belland, Gosche, Meillet, քերթէ պատկանեան (ռուսերէն) Հ. Սերթէ Տէրվիշեան, Հր. Ագաոնեան, Hübschmann, Neumann, Marquart.







Langlois, Fr. Macler, Գր. Խալաթեանց (ռուս.), Finck, Schröder, Conybeare, Brosset եւայլն։

Հայերէն ամսագիրներից· էլ կայ մի քանի հին օրինակներ, Մասեաց Աղաւնի, Բազմավէպ եւ Արշալոյս Արարատեան։

Այս գրքերի թիւը 120 է ընդամէնը։

ՀԱԱԳ (հոլ. 's Gravenhaage, La Haye)

Հոլանդայի մայրաքաղաքը տարբեր կերպով նշանաւոր է հայկական յիշատակարանների կողմից։ Նա միայն մի հատ հայերէն ձեռագիր ունի, Ջմիւռնիայի հայ վաճառականների խնդրագիրը 1658ից, որը յառաջ բերինք Ա. Գլխում։ Բայց ունի հայկական մետալներ (medaille), Ամստերդամի նախկին հայ գաղութից մնացած, որոնք նախ Լէյդէնի թանգարանում էին, բայց այնտեղից տեղափոխուած են Հաագի արքունի թանգարանը։ Այս մետալները երկու մեծութեամբ են, մէկը 53 × 50 հազարերորդամետր եւ միւսը 42 × 39։ Կցում ենք մեր պատմութեան՝ մեծ մետալի լուսանկարը, մի քիչ փոքրացրած։ Մետալներն արծաթեայ են եւ ոսկեզօծ։ Այս գեղեցիկ եւ գեղարուեստական գործը ձուաձեւ է։ Երեսի կողմը, արքայական թագ, որի երկու կողմը խորհրդաւոր կանացի արձաններ կան, պատուանդանի վրայ կանգնած. ձախ արձանի ձեռքում հայելի կայ եւ օձ, իսկ աջը բռնած է դարնեա պսակ։ Առաջինի քով կայ սիրտ, վրան առատութեան եղջիւրով իսկ երկրորդի քով նոյնպէս սիրտ, տերեւազարդ ճիւ-

ղով։ Նրանց մէջտեղը՝ գառն Աստուծոյ՝ Երկրագունդի վրայ եւ Հոգին Սուրբ աղաւնակերպ։ Արձանների նշանակութիւնը գրուած է հայերէն՝ մի կողմը *Խոնարհութիւն*, միւս կողմը՝ *Առաքինութիւն*, որոնց ծայրերը յանգում են գառն Աստուծոյի ներքեւ "յաղթէ ամենայնի" խօսքերին։ Շրջապատում գրուած է. "Յակոբջանի որդի յօհան տոհմ խալդրեանց վճռկն ծնել Ջուղայ յայս թուական 1710 որ այժմ կայ յամնդրդամ 1740"։

Միւսի կողմը կենդրոնում լուսաշարգարեգակ, մէջն եռանկիւն, որ ներկայացնում է Երրորդութիւնը։ Նրա ծայրերին գրուած է Հայր, Որդի եւ Հոգի, իսկ կենդրոնում՝ Մ Ած (Մի աստուած)։ Վերեւում գրուած է Սկիհ, տասնաբանեայ պատուիրանքների տախտակ, խաչ եւ Ս. Գիրք, իսկ տակը ժապաւէնի վրայ՝ իբրեւ նշանաբան՝ *մաքուր յաւատ*. խարխսխի տակ՝ *յաստատուն յոյս*, փշէ պսակի մէջ սիրտ եւ *կատարեալ սէր*։ Ամենից վար՝ Սերոբէի գլուխ եւ ապա Amsterdam 1757։

Տարակոյս չկայ, որ այս միտալն իբրեւ յիշատակ չինել տուողը, Ջուղայեցի խալդարեանց Յակոբջանի որդի Յօհանը հայրենասէր, կիսագրագէտ մի վաճառական, թելադրել է հոլանդացի արուեստագէտին իր միտքը եւ հայերէն վերնագիրները։ Կիսագրագէտ լինելը երեւում է "յաւատ" եւ "յաստատուն" բառերից[1]։

---

[1] Այս հայկական մետալը մանրամասն նկարագրուած է Van Loon հոլանդացի հեղինակի "Հոլանդական պատ-

Այս մետալի յար եւ նմանը կոխել է տուել մի ուրիշ վաճառական, արծաթից, 39 × 42 հազարամետր մեծութեամբ, միայն տարբեր վերտառութեամբ՝ այսինքն — "Մհտսի մասեհի որդի ալեքսան անապատցի, վճուկն ծնեալ այս թուական 1727 որ է այժմ յամնդրդամ 1742":

Կայ եւ մի երրորդ մետալ նոյնպէս արծաթեայ, բայց բոլորովին տարբեր պատկերով: Երեսի կողմը՝ խորան, մէջը 3 սիւն: Խորանի վրայ միմեանց ձեռքն են բռնած հարսն ու փեսան. Նրանց վրայ գրուած է "սուրբ ամուսնութիւն իսկ տակը՝ "յով. յարութիւն": Ետեւի կողմը 2 աղաւնի կտուցներով համբուրվում են. խորանի վրայ երկու ձեռք՝ սեղմուած, իսկ արեւի ճառագայթներից վեր՝ գրուած է "Նախատեսութի ծային":

մական մետալների նկարագրութիւնը" աշխատութեանը մէջ, հետեւեալ մակագրութեամբ՝ "Ամստերդամի յանուն Հոլլին Սուրբի հայկական կամ պարսկական եկեղեցու անդամ մի պարսիկ վաճառականի մետալը եւ ապա դրուած է հետեւեալ ծանօթութիւնը. "Dr. Dozy տուեց մեզ հայերէն վերտառութիւնների մեկնութիւնը. երկու ուրիշ գիտնական եւս նրա հետ այս մասին համաձայն են, այն է՝ Պարիսի Ecole spéciale des Langues Orientales Vivantes ի ուսուցչապետ Dulaurier եւ Բեռլինի ուսուցչապետ Petermann: Դոկտոր Դոզի (սա՝ Լէյդէնի Համալսարանի ուսուցչապետ էր) բացատրեց մեզ ընդարձակօրէն՝ նաեւ Ջուլֆա քաղաքի ծագումը...": Դժբախտաբար չնայելով այս 3 ծանօթ արեւելագէտների վրայ հիմնուելուն, հայ վաճառականի անունը հոլլանդերէն սխալ է թարգմանուած այնտեղ. գրուած է՝ Ցակոբ Ջանի՝ որդի Ցօհանի, կարծելով թէ չինել տուողի անունը Ջանի է:

Beschriving van Nederlandsche Historie — Peningen, ten vervolge op het werk van Gerard van Loon Amsterdam 1848, էջ 380.

ՀԱՐԼԷՄ (Haarlem)

Այս քաղաքի Teylerի թանգարանում պահվում է մի հայկական կնիք, որի շինել տուողն է Աղեքսան Մասեհեան, Ամստերդամի վերջին հայ վաճառականը։ Այս կնիքը ճիշդ նոյն պատկերն եւ նոյն հայերէն արձանագրութիւններն ունի ինչ որ վերեւ նկարագրուած երկրորդ մետալը, բայց իր մեծութեամբ հաւասար է Յակոբջանի որդու Յոհանի մեծ մետալին։ Եւ վերջապէս՝

ՈՒՏՐԷԽՏ (Utrecht)

Այստեղի համալսարանի մատենադարանում եւս կայ, մի հայերէն ձեռագիր, որ Հռոմէական Եկեղեցու գլխաւորութեան վրայ հայերէն եւ լատիներէն լեզուներով վիճաբանական մի գրուածք է, 1644ին գրուած, որի յիշատակարանում ասուած է. “Արդ յանկ ելեալ կատարեցաւ ժողովածու գիրքս ձեռնտուութ̃բ ամենայնի հոգոյն եւ աւժանդակութ̃բ տ̃ն մերոյ յի̃ քի̃, ձեռամբ ստահակ եւ սոսկապանծ անձին գրիգորի յաւուրս յինանց քառասնորդի թվին եւ ղ. յամսեանն չորրորդի ապրիլի ԺԸ. յաւուր պատկերին էր շաբաթի առ յիշատակ իմ վարպետին ոսկան անուն կրաւնաւորի . . .„։

ԳԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ. ՍՍՀ
Ա. Ֆ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0433117